

**Բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին և 2003/55/ԵՀ  
հրահանգը ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009  
թվականի հուլիսի 13-ի 2009/73/ԵՀ հրահանգ**

**Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ**

**Պաշտոնական տեղեկագիր L 211 , 14/08/2009թ. էջ 0094 - 0136**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագիրը և մասնավորապես դրա 47(2), 55-րդ և 95-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [3],

Քանի որ

1) բնական գազի ներքին շուկան, որն աստիճանաբար ներդրվել է Համայնքի տարածքում 1999 թվականից, նպատակ ունի Համայնքի բոլոր սպառողներին, լինեն դրանք քաղաքացիներ թե գործարարներ, ընձեռել իրական ընտրության հնարավորություն, նոր բիզնես հնարավորություններ և առավել լայն միջսահմանային առևտուր՝ բարձրացնելու համար արդյունավետությունը, ձեռք բերելու համար մրցակցային գներ և ծառայության ավելի բարձր չափանիշներ և նպաստելու համար մատակարարման անվտանգությանն ու կայունությանը,

2) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի «Բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին» 2003/55/ԵՀ հրահանգը [4] զգալիորեն նպաստել է բնական գազի նման ներքին շուկայի ստեղծմանը,

3) ազատությունները, որոնք պայմանագիրը երաշխավորում է Միության քաղաքացիներին, մասնավորապես, ապրանքների ազատ տեղաշարժը, հիմնադրման ազատությունը և

ծառայություններ մատուցելու ազատությունը, հասանելի են միայն լիարժեք բաց շուկայում, որը հնարավորություն է տալիս բոլոր սպառողներին ազատ ընտրել իրենց մատակարարներին և բոլոր մատակարարներին՝ ազատ մատակարարել իրենց սպառողներին,

4) այնուամենայնիվ, ներկայումս Համայնքում խոչընդոտներ կան կապված հավասար պայմաններով, առանց խտրականության կամ անբարենպաստ պայմանների գազի վաճառքի հետ: Մասնավորապես, դեռևս բոլոր անդամ պետություններում չկա խտրականությունը բացառող ցանցի մատչելիություն ու կարգավորիչ վերահսկողության հավասարաչափ արդյունավետ մակարդակ,

5) Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Եվրոպայի էներգետիկ քաղաքականություն» կոչվող հաղորդագրությունն ընդգծեց բնական գազի ներքին շուկան ամբողջական դարձնելու և Համայնքի բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցային հավասար պայմաններ ստեղծելու կարևորությունը: Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Գազի և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի հեռանկարներ» և «Գազի և էլեկտրաէներգիայի եվրոպական ոլորտներում թիվ 1/2003 (ԵՀ) կանոնակարգի 17-րդ հոդվածի համաձայն իրականացվող ուսումնասիրություն (Վերջնական հաշվետվություն)» կոչվող հաղորդակցությունները ցույց տվեցին, որ ներկայիս կանոններն ու միջոցները անհրաժեշտ շրջանակ չեն ապահովում լավ գործող ներքին շուկայի նպատակին հասնելու համար,

6) առանց ցանցերը արդյունավետ կերպով բաժանելու արտադրության և մատակարարման գործողություններից (արդյունավետ տարանջատում), գոյություն ունի խտրականության ռիսկ ոչ միայն ցանցի շահագործման, այլ նաև ուղղահայաց տնտեսվարող սուբյեկտների համար խրախուսական միջոցներ տրամադրելու հարցում՝ կապված իրենց ցանցերում բավարար չափով ներդրում կատարելու հետ,

7) իրավական և գործառնական տարանջատման կանոնները, ինչպես նշված է 2003/55/ԵՀ հրահանգում, այնուամենայնիվ, արդյունավետ կերպով չեն հանգեցրել փոխադրման համակարգի օպերատորների տարանջատմանը: Այդ պատճառով 2007 թվականի մարտի 8-ի և 9-ի հանդիպման ժամանակ Եվրոպական խորհուրդը կոչ արեց Հանձնաժողովին մշակել օրենսդրական առաջարկներ՝ նպատակ հետապնդելով «արդյունավետ կերպով տարաբաժանել մատակարարման և արտադրության գործողությունները ցանցային գործողություններից»,

8) արդյունավետ տարանջատում հնարավոր է ապահովել միայն վերացնելով ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակիցների նկատմամբ խտրականություն ցուցաբերելու դրդապատճառները՝ կապված ցանցի հասանելիության և ներդրումների հետ: Սեփականության տարանջատումը, որը ենթադրում է, որ ցանցի սեփականատերը պետք է նշանակվի որպես համակարգի սեփականատեր և անկախ լինի մատակարարման և արտադրության շահերից, իրոք արդյունավետ և կայուն ձև է՝ ներքին շահերի բախումը լուծելու և մատակարարման անվտանգությունը ապահովելու համար: Այդ պատճառով Եվրոպական պառլամենտը իր 2007 թվականի հուլիսի 10-ի «Գազի և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի հեռանկարների մասին» բանաձևում [5] անդրադարձել է փոխադրման մակարդակում սեփականության տարանջատմանը որպես ամենաարդյունավետ գործիք, որով հնարավոր է խթանել ենթակառուցվածքում ոչ խտրական ներդրումները, նոր մասնակիցների համար ցանցի մեջ հավասար պայմաններով (արդար) մուտքը և շուկայում թափանցիկությունը: Սեփականության տարանջատման համաձայն անդամ պետությունները պետք է ապահովեն, որ միևնույն անձը կամ անձինք իրավունք չունենան վերահսկողություն իրականացնել արտադրության կամ մատակարարման տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ և միևնույն ժամանակ վերահսկողություն կամ որևէ իրավունք չունենան փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի նկատմամբ: Եվ հակառակը, փոխադրման համակարգի կամ փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ վերահսկողությունը պետք է բացառի արտադրության կամ մատակարարման տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ վերահսկողություն կամ որևէ իրավունք ունենալու հնարավորությունը: Նման սահմանափակումների շրջանակում արտադրության կամ մատակարարման տնտեսվարող սուբյեկտը պետք է կարողանա ունենալ փոքրամասնական բաժնետոմսեր փոխադրման համակարգի օպերատորի ներսում կամ փոխադրման համակարգում,

9) տարանջատման ցանկացած համակարգ պետք է արդյունավետ լինի արտադրողների, մատակարարների և փոխադրման համակարգի օպերատորների միջև շահերի բախումները վերացնելու հարցում՝ ստեղծելու համար անհրաժեշտ ներդրումների խթաններ և երաշխավորելու համար շուկա նոր մասնակիցների մուտքը թափանցիկ և արդյունավետ կարգավորիչ ռեժիմի պայմաններում: Այն նաև չպետք է ստեղծի չափից բարդ կարգավորիչ համակարգ ազգային կարգավորիչ մարմինների համար,

10) «վերահսկողություն» եզրույթի սահմանումը վերցված է «Ընկերությունների միջև համակենտրոնացումների վերահսկման մասին» Խորհրդի 2004թ. հունվարի 20–ի թիվ 139/2004 (EC) կանոնակարգից (Եվրահամայնքի միաձուլման կանոնակարգ) [6],

11) քանի որ սեփականության տարանջատումը որոշ դեպքերում պահանջում է տնտեսվարող սուբյեկտների վերակազմավորում, այն անդամ պետությունները, որոնք որոշում են իրականացնել սեփականության տարանջատում, պետք է ունենան լրացուցիչ ժամանակ համապատասխան դրույթները կիրառելու համար: Էլեկտրաէներգիայի և գազի ոլորտների միջև ուղղահայաց կապերը հաշվի առնելով՝ տարանջատման դրույթները պետք է տարածվեն այդ երկու ոլորտների վրա էլ,

12) սեփականության տարանջատման համաձայն ցանցի շահագործման լիակատար անկախությունը մատակարարման և արտադրության շահերից երաշխավորելու և ցանկացած գաղտնի տեղեկատվության փոխանակումը կանխելու նպատակով՝ միևնույն անձը չպետք է հանդիսանա փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի և արտադրության կամ մատակարարման գործառույթներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտի կառավարման խորհուրդների անդամ: Միևնույն պատճառով նույն անձը չպետք է իրավունք ունենա նշանակել փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի կառավարման խորհուրդների անդամներ և իրականացնել վերահսկողություն կամ ունենա որևէ իրավունք արտադրության կամ մատակարարման տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ,

13) մատակարարման և արտադրության շահերից անկախ համակարգի օպերատորի կամ փոխադրման օպերատորի ստեղծումը պետք է հնարավորություն տա ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտներին պահպանել ցանցի ակտիվների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը, միևնույն ժամանակ ապահովելով շահերի արդյունավետ բաժանում՝ պայմանով, որ անկախ համակարգի նման օպերատորը կամ անկախ փոխադրման նման օպերատորը իրականացնի համակարգի օպերատորի բոլոր գործառույթները և գործի մանրամասն կանոնակարգող դաշտ և կարգավորիչ վերահսկման ընդարձակ մեխանիզմներ,

14) Եթե 2009 թվականի սեպտեմբերի 3–ի դրությամբ փոխադրման համակարգ ունեցող տնտեսվարող սուբյեկտը ուղղահայաց ինտեգրված ձեռնարկության մաս է կազմում, անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան ընտրել սեփականության

տարանջատման և համակարգի օպերատոր կամ փոխադրման օպերատոր հիմնադրելու միջև, որն անկախ է մատակարարման և արտադրության շահերից,

15) ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների բաժնետերերի շահերի լիարժեք պաշտպանության համար անդամ պետությունները պետք է ընտրության հնարավորություն ունենան իրականացնել սեփականության տարանջատումը՝ կա՛մ ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների բաժնետոմսերի ուղղակի վաճառքի/լուծարման, կա՛մ ցանցի տնտեսվարող սուբյեկտի կամ մատակարարման և արտադրության այլ սուբյեկտների բաժնետոմսերի միջև ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի բաժնետոմսերի բաժանման միջոցով՝ պայմանով, որ սեփականության տարանջատման արդյունքում ծագող պահանջները բավարարվեն,

16) անկախ համակարգի օպերատորի կամ փոխադրման անկախ օպերատորի խնդիրների լուծման լիարժեք արդյունավետությունը պետք է ապահովվեն լրացուցիչ հատուկ կանոնների միջոցով: Փոխադրման անկախ օպերատորին վերաբերող կանոնները սահմանում են համապատասխան կանոնակարգող շրջանակ՝ ապահովելով արդար մրցակցություն, բավարար ներդրումներ, շուկայի նոր մասնակիցների մուտքը և գազի շուկաների ինտեգրացիան: Փոխադրման անկախ օպերատորին վերաբերող դրույթների միջոցով արդյունավետ տարանջատումը պետք է հենվի կազմակերպական միջոցների և փոխադրման համակարգի օպերատորների կառավարման վերաբերող միջոցների, ինչպես նաև ներդրումներին վերաբերող միջոցների հենասյունի վրա՝ կապելով նոր արտադրական հնարավորությունները ցանցին և շուկայի ինտեգրմանը տարածաշրջանային համագործակցության միջոցով: Փոխադրման օպերատորի անկախությունը պետք է, մասնավորապես, ապահովվի որոշակի «քննարկման և բանակցային» շրջաններով, որոնց ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ներսում չպետք է իրականացվի ղեկավարում կամ որևէ այլ գործողությունը, որի դեպքում հասանելի կարող են դառնալ տեղեկություններ, որոնք հնարավոր է ստանալ ղեկավար պաշտոն զբաղեցնելու դեպքում: Փոխադրման անկախ օպերատորի արդյունավետ տարանջատման մոդելը համահունչ է Եվրոպական խորհրդի՝ 2007 թվականի մարտի 8-ին և 9-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ սահմանված պահանջներին,

17) գազի ներքին շուկայում մրցակցություն խթանելու նպատակով՝ խոշոր՝ ոչ կենցաղային նպատակներով գազի բաժանորդները պետք է կարողանան ընտրել մատակարարներին և պայմանագրեր կնքել մի քանի մատակարարների հետ՝ ապահովելու համար գազի հետ կապված իրենց պահանջները: Նման բաժանորդները պետք է պաշտպանված լինեն

բացառիկ իրավունքի մասին դրույթներից, որոնց արդյունքում մրցակցային կամ իրար լրացնող առաջարկները բացառվում են,

18) անդամ պետությունները իրավունք ունեն ընտրել սեփականության լիակատար տարանջատման տարբերակը իրենց տարածքում: Երբ անդամ պետությունը իրականացնում է այդ իրավունքը, տնտեսվարող սուբյեկտը իրավունք չունի հիմնել համակարգի անկախ օպերատոր կամ փոխադրման անկախ օպերատոր: Ավելին, արտադրության կամ մատակարարման ցանկացած գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ չի կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ, որը գտնվում է այն անդամ պետությունում, որը նախընտրել է սեփականության լիարժեք տարանջատումը,

19) սույն Հրահանգի համաձայն բնական գազի ներքին շուկայում կգործեն շուկայի կազմակերպման տարբեր մոդելներ: Այն միջոցառումները, որոնք անդամ պետություններն իրականացնում են հավասար մրցակցային պայմաններ ապահովելու համար, պետք է հիմնված լինեն ընդհանուր շահի կարևորագույն պահանջների վրա: Հանձնաժողովը պետք է խորհրդատվություն տա Պայմանագրի և Համայնքի իրավունքի հետ միջոցների համապատասխանության հարցի վերաբերյալ,

20) արդյունավետ տարանջատում իրականացնելիս պետք է հաշվի առնվի պետական և մասնավոր ոլորտների միջև ոչ խտրականության սկզբունքը: Այդ նպատակով միևնույն անձը մենակ կամ համատեղ չպետք է կարողանա վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ փոխադրման համակարգի օպերատորների կամ փոխադրման համակարգերի և միևնույն ժամանակ՝ արտադրության կամ մատակարարման տնտեսվարող սուբյեկտների կազմի, քվեարկության կամ որոշումների վրա՝ խախտելով սեփականության տարանջատման կամ համակարգի անկախ օպերատորի հնարավորության կանոնները: Սեփականության տարանջատման և համակարգի անկախ օպերատորի հնարավորության առնչությամբ մի կողմից արտադրության և մատակարարման գործողությունները, մյուս կողմից՝ փոխադրման գործողությունները պետք է հնարավոր լինի վերահսկել երկու առանձին պետական մարմինների կողմից՝ պայմանով, որ անդամ պետությունը կարողանա ցույց տալ, որ պահանջը բավարարված է,

21) ցանցի գործողությունները մատակարարման և արտադրության գործողություններից լիովին արդյունավետ բաժանումը պետք է կիրառվի Համայնքի ողջ տարածքում՝ թե՛ համայնքային և թե՛ ոչ համայնքային տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

Մատակարարման և արտադրության գործողություններից ցանցի գործողությունների՝ միմյանցից անկախությունը երաշխավորելու համար Համայնքի տարածքում՝ կանոնակարգող մարմինները պետք է իրավասություն ունենան արտոնագիր չտրամադրել տարանջատման կանոններին չհամապատասխանող փոխադրման համակարգի օպերատորներին: Համայնքի ողջ տարածքում այդ կանոնների հետևողական կիրառությունը ապահովելու համար՝ կանոնակարգող մարմինները պետք է առավելագույնս հաշվի առնեն Հանձնաժողովի կարծիքը, երբ այն որոշում է կայացնում արտոնագրման մասին: Բացի այդ Համայնքի միջազգային պարտավորությունները և Համայնքի ներսում համերաշխություն և էներգիայի անվտանգության ապահովելու համար՝ Հանձնաժողովը պետք է իրավասու լինի իր կարծիքն արտահայտել երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձի կամ անձանց կողմից վերահսկվող փոխադրման համակարգի սեփականատիրոջ կամ փոխադրման համակարգի օպերատորի հետ կապված արտոնագրման առնչությամբ,

22) էներգիայի մատակարարման անվտանգությունը հանրային անվտանգության կարևոր տարրերից է, և այդ պատճառով սերտորեն կապված է գազի ներքին շուկայի արդյունավետ գործունեության և անդամ պետությունների մեկուսացված գազի շուկաների ինտեգրման հետ: Միության քաղաքացիները գազ կարող են ստանալ միայն ցանցի միջոցով: Գազի բաց շուկաների և, մասնավորապես, ցանցերի և գազի մատակարարման հետ կապված այլ ակտիվների գործունեությունը էական է պետական անվտանգության, տնտեսության մրցակցության և Միության քաղաքացիների բարօրության համար: Ուստի, երրորդ երկրների անձանց պետք է թույլ տալ վերահսկել փոխադրման համակարգը կամ փոխադրման համակարգի օպերատորին միայն, եթե նրանք համապատասխանում են Համայնքի ներսում կիրառվող արդյունավետ բաժանման պահանջներին: Չհակասելով Համայնքի միջազգային պարտավորություններին՝ Համայնքը գտնում է, որ գազի փոխադրման համակարգի ոլորտը չափազանց կարևոր է Համայնքի համար և այդ պատճառով լրացուցիչ երաշխիքներ են անհրաժեշտ դեպի Համայնք էներգիայի մատակարարման անվտանգությունը պահպանելու առումով՝ նպատակ հետապնդելով խուսափել Համայնքում հասարակական կարգին կամ հասարակական անվտանգությանը և Միության քաղաքացիներին բարեկեցությանը սպառնացող վտանգներից: Համայնքին մատակարարվող էներգիայի անվտանգությունից ելնելով, մասնավորապես, պետք է գնահատել ցանցի գործունեության անկախությունը, երրորդ երկրների կողմից մատակարարվող էներգիայից Համայնքի և առանձին անդամ պետությունների կախվածության մակարդակը, և էներգիայի ոլորտում ներքին և արտաքին առևտուրը և

կոնկրետ երրորդ երկրում էներգիայի ոլորտում ներդրումները: Ուստի, մատակարարման անվտանգությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի փաստական հանգամանքների, ինչպես նաև միջազգային իրավունքից բխող իրավունքների և պարտականությունների լույսի ներքո, մասնավորապես Համայնքի և համապատասխան երրորդ երկրի միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն: Անհրաժեշտության դեպքում խրախուսվում է, որպեսզի Հանձնաժողովը առաջարկություններ ներկայացնի Համայնքին էներգիա մատակարարելու անվտանգության հարցերի շուրջ երրորդ երկրների հետ համապատասխան պայմանագրերի կնքման բանակցությունների մասին կամ այդ երրորդ երկրների հետ այլ բանակցությունների ժամանակ անհրաժեշտ հարցեր բարձրացնելու վերաբերյալ,

23) այլ միջոցներ պետք է ձեռնարկվեն ապահովելու համար տրանսպորտից օգտվելու թափանցիկ և ոչ խտրական սակագներ: Այդ սակագները պետք է կիրառելի լինեն համակարգի բոլոր օգտագործողների համար առանց խտրականության: Եթե պահեստարանը, գազալցման խողովակները կամ օժանդակ ծառայությունը գործում է բավականին մրցակցային շուկայում, մուտք գործելը հնարավոր է թույլատրել թափանցիկ և ոչ խտրական շուկայական մեխանիզմների հիման վրա,

24) անհրաժեշտ է ապահովել պահեստավորման համակարգի օպերատորների անկախությունը՝ նպատակ հետապնդելով բարելավել երրորդ կողմերի մուտքը պահեստարաններ, որոնք տեխնիկապես և/կամ տնտեսապես անհրաժեշտ են բաժանորդներին մատակարարումներ իրականացնելու նպատակով համակարգ արդյունավետ կերպով մուտք գործելու համար: Ուստի ճիշտ կլինի, որ պահեստարանները գործարկվեն իրավաբանորեն առանձին անձանց կողմից, որոնք ունեն արդյունավետ որոշումներ կայացնելու իրավունքներ՝ կապված պահեստարանները տեխնիկապես սպասարկելու, շահագործելու կատարելագործելու համար անհրաժեշտ միջոցների հետ: Անհրաժեշտ է նաև մեծացնել պահեստարանների կարողություններ թափանցիկությունը, որոնք առաջարկվում են երրորդ անձանց՝ պարտադրելով անդամ պետություններին սահմանել և հրապարակել ոչ խտրական, հստակ շրջանակ, որով կսահմանվի պահեստարանների նկատմամբ գործող համապատասխան կարգավորիչ ռեժիմը: Այդ պարտավորությունը չպետք է պահանջի ընդունել նոր որոշում մուտքի ռեժիմների մասին, այլ պետք է բարձրացնի պահեստավորման մուտքի ռեժիմի թափանցիկությունը: Առևտրային գաղտնիք ներկայացնող տեղեկությունների համար գաղտնիության



պահանջները հատկապես կարևոր են, երբ խոսքը վերաբերում է ռազմավարական բնույթի տվյալներին և եթե գոյություն ունի միևնույն պահեստարանի միայն մեկ օգտագործող,

25) բաշխման ցանցի ոչ խտրական մուտքը ապահովում է մանրածախ մակարդակում բաժանորդներին՝ գազի վերամշակման և վաճառքի հասանելիությունը: Երրորդ անձանց մուտքի և նրանց կողմից ներդրումներին վերաբերող խտրականության շրջանակը, սակայն, պակաս կարևոր է բաշխման մակարդակում, քան փոխադրման մակարդակում, որտեղ գերբեռնվածությունը և արտադրական շահերի ազդեցությունը ավելի մեծ է, քանի բաշխման մակարդակում: Ավելին, բաշխման համակարգի օպերատորների իրավական և գործառնական տարանջատում պահանջվում էր 2003/55/ԵՀ հրահանգի համաձայն միայն 2007 թվականի հուլիսի 1-ից և այդ հրահանգի ազդեցությունը բնական գազի ներքին շուկայի վրա դեռևս պետք է գնահատվի: Ներկայումս գործող իրավական և գործառնական տարանջատման կանոնները կարող են հանգեցնել արդյունավետ տարանջատման՝ պայմանով, որ դրանք ավելի պարզ սահմանվեն, պատշաճ կարգով իրականացվեն և ենթարկվեն մանրամասն դիտանցման: Մանրածախ մակարդակում հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու համար՝ բաշխման համակարգի օպերատորներին գործողությունները պետք է, ուստի, դիտանցվեն այնպես, որ կանխվեն շուկայում մրցակցային դիրքի առումով ուղղահայաց ինտեգրման չարաշահումները, մասնավորապես կապված կենցաղային և փոքրաթիվ ոչ կենցաղային սպառման նպատակներով բաժանորդների հետ,

26) անդամ պետությունները կոնկրետ միջոցներ պետք է ձեռնարկեն օժանդակելու համար կենսազանգվածից ստացվող բիոգազի և գազի առավել լայն կիրառությանը, որոնց արտադրողները պետք է ունենան գազի համակարգի ոչ խտրական հասանելիություն՝ պայմանով, որ նման հասանելիությունը մշտապես համապատասխանի համապատասխան տեխնիկական կանոններին և անվտանգության ստանդարտներին,

27) բաշխման համակարգի մանր օպերատորների վրա ֆինանսական և վարչարարական անհամաչափ բեռ պարտադրելուց խուսափելու համար՝ անդամ պետությունները պետք է կարողանան, անհրաժեշտության դեպքում, ազատել համապատասխան ձեռնարկություններին իրավական բաշխման տարանջատման պահանջներից,

28) եթե օգտագործվում է բաշխման փակ համակարգ ապահովելու համար ինտեգրված էներգիայի մատակարարման օպտիմալ արդյունավետություն, որը պահանջում է շահագործման հատուկ չափանիշներ, կամ եթե բաշխման փակ համակարգը շահագործվում է հիմնականում համակարգի սեփականատիրոջ կողմից օգտագործման նպատակով, այդ

դեպքում պետք է հնարավոր լինի բաշխման համակարգի օպերատորին ազատել այն պարտավորություններից, որոնք կարող են համարվել անտեղի վարչարարական բեռ՝ պայմանավորված բաշխման համակարգի օպերատորի և համակարգի օգտագործողների միջև հարաբերությունների հատուկ բնույթով: Արդյունաբերական, առևտրային կամ տարաբնույթ ծառայություններ տրամադրող վայրերը, օրինակ կայարանները, օդանավակայանները, հիվանդանոցները, ինտեգրված հանգստյան համար նախատեսված համալիրներով մեծ ճամբարները կամ քիմիական արդյունաբերության վայրերը կարող են ընդգրկվել բաշխման փակ համակարգերում՝ իրենց գործառույթների մասնագիտացված բնույթի շնորհիվ,

29) 2003/55/ԵՀ հրահանգը անդամ պետություններից պահանջել է նշանակել հատուկ իրավասությամբ կանոնակարգողներ; Սակայն փորձը ցույց է տալիս, որ կանոնակարգման արդյունավետությունը հաճախ խոչընդոտվում է կառավարությունից կանոնակարգողների անկախության բացակայության և ոչ բավարար լիազորությունների և հայեցողության հետևանքով: Այդ պատճառով 2007 թվականի մարտի 8-ի և 9-ի հանդիպման ժամանակ Եվրոպական խորհուրդը կոչ արեց Հանձնաժողովին մշակել օրենսդրական առաջարկներ՝ երաշխավորելով լիազորությունների հետագա ներդաշնակեցումը և էներգիայի ազգային կանոնակարգողների անկախության ամրապնդումը: Այդ կարգավորող մարմինների պետք է կարողանան զբաղվել թե՛ էլեկտրաէներգիայի և թե՛ գազի ոլորտներով,

30) անհրաժեշտ է, որ էներգիա կարգավորողները հնարավորություն ունենան որոշումներ կայացնել համապատասխան կարգավորիչ հարցերի վերաբերյալ՝ գազի ներքին շուկայի պատշաճ գործունեության և ցանկացած այլ պետական կամ մասնավոր շահերից լիարժեք անկախության նպատակով: Սա չի խանգարում անդամ պետությունների սահմանադրական իրավունքին համապատասխան դատական վերանայմանը, կամ պառլամենտական վերահսկողությանը: Բացի այդ, կարգավորողի բյուջեի հաստատումը ազգային օրենսդրի կողմից չի խոչընդոտում բյուջեի անկախությանը: Կարգավորող մարմինն տրամադրված բյուջեի կատարման անկախության մասին դրույթները պետք է կիրառվեն ազգային բյուջեի մասին օրենքով և կանոններով սահմանված շրջանակում: Նպաստելով քաղաքական կամ տնտեսական որևէ շահից ազգային կանոնակարգող մարմնի անկախությանը համապատասխան ռոտացիոն համակարգի միջոցով՝ անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան հաշվի առնել մարդկային ռեսուրսների առկայությունը և խորհրդի մեծությունը,

31) շուկայում գործող բոլոր անձանց համար շուկայի արդյունավետ հասանելիություն ապահովելու համար, այդ թվում նոր մուտք գործող անձանց համար, անհրաժեշտ են ոչ խտրական և ծախսերն արտացոլող հավասակշռող մեխանիզմներ: Սրան կարելի է հասնել գազի մատակարարման և գնումների շուկայական թափանցիկ մեխանիզմների ստեղծման միջոցով, որոնք անհրաժեշտ են հավասարակշռող պահանջների շրջանակում: Ազգային կարգավորող մարմինները պետք է ակտիվ դեր կատարեն ապահովելու համար, որ հավասարակշռող սակագները խտրական չլինեն և արտացոլեն ծախսերը: Միևնույն ժամանակ համապատասխան նախադրյալներ պետք է տրամադրվեն՝ հավասարակշռելու համար գազի մատակարարումն և սպառումը, ինչպես նաև չվտանգելու համար համակարգը,

32) ազգային կարգավորող մարմինները պետք է կարողանան սահմանել և հաստատել սակագներ կամ այդ սակագները հաշվարկելու մեթոդաբանությունը՝ հենվելով փոխադրման համակարգի օպերատորից կամ բաշխման համակարգի օպերատորից (ներից) կամ հեղուկացված բնական գազի (<ԲԳ) համակարգի օպերատորից ստացված առաջարկի կամ այդ օպերատորի(ների) և ցանցի օգտագործողների միջև համաձայնեցված առաջարկի վրա: Այս խնդիրներն իրականացնելիս՝ ազգային կարգավորող մարմինները պետք է ապահովեն, որ փոխադրման և բաշխման սակագները ոչ խտրական լինեն և արտացոլեն ծախսերը, ինչպես նաև հաշվի առնեն պահանջարկով պայմանավորված կառավարման միջոցներից բխող երկարաժամկետ, մարզինալ, չիրականացված ցանցային ծախսերը,

33) Էներգիայի ոլորտի կարգավորողները պետք է իրավասություն ունենան պարտադիր որոշումներ կայացնել գազի ոլորտի ձեռնարկությունների վերաբերյալ և արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ պատժամիջոցներ նշանակել բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք չեն կատարում իրենց պարտավորությունները: Կարգավորողները կարող են նաև առաջարկել, որ իրավասու դատարանը նման պատժամիջոցներ նշանակի նման տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: անկախ մրցակցային կանոնների կիրառումից՝ էներգիայի ոլորտի կարգավորողներին պետք է նաև իրավասություն տրվի որոշում ընդունել համապատասխան միջոցների մասին՝ բնական գազի ներքին շուկայի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ արդյունավետ մրցակցություն խթանելու միջոցով արտոնություններ տրամադրելով բաժանորդներին: Գազի բացթողման ծրագրերի հաստատումը հնարավոր միջոցներից մեկն է, որը կարող է խթանել արդյունավետ մրցակցությունը և ապահովել շուկայի պատշաճ գործունեությունը: Էներգիայի ոլորտի կարգավորողները պետք է նաև

իրավասություն ունենան նպաստել շուկայի բացման/բորսայում փոխարժեքի վաճառքը սկսելու պահանջներին համապատասխան հանրային ծառայություն բարձր ստանդարտների ապահովմանը, խոցելի բաժանորդների պաշտպանությանը և բաժանորդների պաշտպանության միջոցառումների լիարժեք արդյունավետությանը: Այդ դրույթները չպետք է հակասեն մրցակցության կանոնների կիրառման մասով Հանձնաժողովի լիազորություններին, այդ թվում համայնքային ուղղվածություն ունեցող միաձուլումների ուսումնասիրությունների առումով, ինչպես նաև չպետք է հակասեն ներքին շուկայի կանոններին, ինչպես օրինակ կապիտալի ազատ տեղաշարժին: Այն կողմը, որի շահերը շոշափվում են ազգային կարգավորողի որոշմամբ, իրավունք ունի բողոքարկել անկախ մարմին, ինչպիսին կարող է լինել դատարանը կամ այլ տրիբունալ, որը լիազորված է դատական վերանայում իրականացնելու հարցում,

34) ազգային կարգավորող մարմինների իրավասությունների ներդաշնակեցումը պետք է ներառի բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտներին խրախուսական միջոցների տրամադրումը և նրանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցների նշանակումը: Ազգային կարգավորող մարմինը կարող է նաև հանդես գալ առաջարկությամբ, որ իրավասու դատարանը նշանակի նման պատժամիջոցներ: Ավելին, կարգավորող մարմինները պետք է իրավասու լինեն բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտներից պահանջել համապատասխան տեղեկություն, իրականացնել համապատասխան և պատշաճ քննություններ և լուծել վեճեր,

35) անհրաժեշտ է խթանել նոր հիմնական ենթակառուցվածքներում ներդրումները՝ միևնույն ժամանակ ապահովելով բնական գազի ներքին շուկայի պատշաճ գործունեություն: Մրցակցության և մատակարարման անվտանգության ոլորտում արտոնություններ ունեցող ենթակառուցվածքների ծրագրերի դրական ազդեցությունները մեծացնելու նպատակով շուկայական տոկոսադրույքը պետք է վերլուծվի և պետք է կիրառվեն գերբեռնվածության կառավարման կանոններ: Եթե ենթակառուցվածքը տեղակայված է մեկից ավելի անդամ պետությունում, «Էներգիայի կարգավորողների համագործակցության գործակալությունը հիմնելու մասին» [7] («Գործակալություն») Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 713/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն հիմնադրված Էներգիայի կարգավորողների համագործակցության գործակալությունը պետք է բացառումների մասին պահանջը քննարկի որպես վերջին միջոց՝ առավելագույնս հաշվի առնելու համար այդ պահանջի միջսահմանային ազդեցությունները և խթանելու համար վարչարարական գործընթացը: Ավելին, հաշվի առնելով արտոնություններ ունեցող

հիմնական ենթակառուցվածքների ծրագրերի կազմման ռիսկայնությունը՝ պետք է հնարավոր լինի մատակարարման և արտադրության շահ ունեցող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրել որոշակի ծրագրերի առնչությամբ տարանջատման կանոններից մասնակի շեղումների իրավունք ժամանակավորապես: Մատակարարման անվտանգության նկատառումներով ժամանակավոր շեղումների հնարավորությունը պետք է, մասնավորապես, վերաբերվի Համայնքի տարածքում երրորդ երկրներից դեպի Համայնք տեղափոխվող գազի նոր խողովակներին: 2003/55/ԵՀ կանոնակարգի համաձայն տրամադրված արտոնությունները կիրառվում են մինչև արտոնություններ տրամադրելու մասին որոշման ժամկետի ավարտը,

36) բնական գազի ներքին շուկայում բացակայում է իրացվելիությունն ու թափանցիկությունը՝ խանգարելով ռեսուրսների արդյունավետ բաշխմանը, ռիսկերի ապահովագրմանը և շուկայում նոր մասնակցությանը: Անհրաժեշտ է մեծացնել շուկայի նկատմամբ վստահությունը, դրա իրացվելիությունը և շուկայի մասնակիցների քանակը և այդ պատճառով անհրաժեշտ է ավելացնել էներգիայի մատակարարման գործում ակտիվ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կարգավորիչ վերահսկողությունը: Նման պահանջները չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն ֆինանսական շուկաների վերաբերյալ Համայնքի առկա օրենսդրությանը: Էներգիայի ոլորտի կարգավորողները և ֆինանսական շուկայի կարգավորողները պետք է համագործակցեն՝ մեկը մյուսին հնարավորություն տալով վերլուծել համապատասխան շուկաները,

37) բնական գազը հիմնականում և մեծամասամբ ներկրվում է Համայնք երրորդ երկրներից: Համայնքի իրավունքը պետք է հաշվի առնի բնական գազի հատկանիշները, օրինակ մատակարարների համակենտրոնացումից բխող որոշ կառուցվածքային կոշտությունները, երկարաժամկետ պայմանագրերը և վերամշակման իրացվելիության բացակայությունը: Ուստի, անհրաժեշտ է մեծացնել թափանցիկությունը, ներառյալ՝ գնագոյացման մասով,

38) նախքան Հանձնաժողովը կընդունի փաստաթղթեր վարելու պահանջների սահմանումը ընդլայնող ուղեցույցեր, Գործակալությունը և Եվրոպական արժեթղթերի կարգավորողների կոմիտեն (ԵԱԿԿ), որը ստեղծված է Հանձնաժողովի 2009/77/ԵՀ որոշմամբ [8], պետք է խորհրդակցեն Հանձնաժողովի հետ և խորհրդատվություն տրամադրեն նրան այդ ուղեցույցերի բովանդակության վերաբերյալ: Գործակալությունը և ԵԱԿԿ-ն պետք է համագործակցեն նաև ավելի խորը ուսումնասիրելու և խորհրդատվություն տրամադրելու համար, թե արդյոք գազի մատակարարման պայմանագրերը և գազի դերիվատիվները

պետք է կարգավորվեն նախա և/կամ ետ- առևտրային թափանցիկության պահանջներով և, այդ դեպքում, ինչ բովանդակություն պետք է ունենան այդ պահանջները,

39) անդամ պետությունները, կամ եթե անդամ պետությունը սահմանել է՝ կարգավորող մարմինը, պետք է խթանեն, որպեսզի կնքվեն ընդհատվող մատակարարման պայմանագրեր,

40) մատակարարման անվտանգության նկատառումներով՝ առաջարկի և պահանջարկի միջև հավասարակշռությունը առանձին անդամ պետություններում պետք է դիտանցվի և նման դիտանցումից հետո պետք է հաշվետվություն պատրաստվի Համայնքի մակարդակում իրավիճակի վերաբերյալ՝ հաշվի առնելով ոլորտների միջև փոխկապակցվածությունը: Նման դիտանցումը պետք է իրականացնել բավականին վաղ՝ հնարավորություն տալով, որ համապատասխան միջոցառումներ ձեռնարկվեն այն դեպքերում, երբ վտանգվում է մատակարարման անվտանգությունը: Ցանցի անհրաժեշտ ենթակառուցվածքի կառուցումը և տնտեսական սպասարկումը, ներառյալ փոխկապակցվածության կարողությունը, պետք է նպաստի գազի կայուն մատակարարմանը,

41) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաշվի առնելով որակի պահանջվող պահանջները, բիոգազը և բիոգանգվածից ստացված գազը և գազի այլ տեսակներ ունենան գազի համակարգի ոչ խտրական հասանելիություն՝ պայմանով, որ նման հասանելիությունը մշտապես համապատասխանի համապատասխան տեխնիկական կանոններին և անվտանգության ստանդարտներին: Այդ կանոնները և ստանդարտները պետք է ապահովեն, որ հնարավոր լինի, որպեսզի նման գազերը տեխնիկապես և անվտանգ եղանակով ներմուծվեն բնական գազի համակարգ և տեղափոխվեն այդ համակարգով: Նման կանոնները և ստանդարտները պետք է հաշվի առնեն նաև այդ գազերի քիմիական հատկանիշները,

42) երկարաժամկետ պայմանագրերը կմնան անդամ պետությունների գազի մատակարարման կարևոր տարրը և պետք է պահպանվեն որպես գազի մատակարարման տնտեսվարող սուբյեկտներին ընձեռվող տարբերակ, եթե դրանք չեն հակասում սույն Հրահանգի նպատակին և համապատասխանում են Պայմանագրին՝ ներառյալ մրցակցային կանոնների մասով: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել երկարաժամկետ պայմանագրերը բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների՝ մատակարարման և տեղափոխման կարողությունների պլանավորման ընթացքում,

43) Համայնքում հանրային ծառայությունների բարձր չափանիշների պահպանությունը ապահովելու համար՝ անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի նպատակին հասնելու համար իրականացված բոլոր միջոցառումների մասին պետք է Հանձնաժողովը պարբերաբար ծանուցվի: Հանձնաժողովը պետք է պարբերաբար հաշվետվություն հրապարակի՝ վերլուծելով ազգային մակարդակում հանրային ծառայության նպատակներին հասնելու համար կատարված միջոցառումները և համեմատելով դրանց արդյունավետությունը՝ նպատակ հետապնդելով առաջարկություններ ներկայացնել ազգային մակարդակում հանրային ծառայությունների բարձր ստանդարտներին հասնելու համար ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ երբ իրենք միացած լինեն գազի համակարգին, բաժանորդները տեղեկացված լինեն սահմանված որակով և ողջամիտ գնով բնական գազ ստանալու իրենց իրավունքների մասին: Վերջնական օգտագործողների պաշտպանելությանն ուղղված՝ անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցները կարող են տարբերվել կախված այն բանից, թե դրանք ուղղված են կենցաղային սպառման նպատակով օգտագործողներին, թե փոքր և միջին ձեռնարկություններին,

44) հանրային ծառայությունների պահանջների պահպանումը սույն Հրահանգի կարևոր պահանջն է և կարևոր է, որպեսզի անդամ պետությունների կողմից պահպանվող ընդհանուր նվազագույն ստանդարտները սահմանվեն սույն Հրահանգում՝ հաշվի առնելով ընդհանուր պաշտպանության նպատակները, մատակարարման անվտանգությունը, բնապահպանությունը և բոլոր անդամ պետություններում մրցակցության հավասար մակարդակը: Կարևոր է, որ հանրային ծառայությունների պահանջները մեկնաբանվեն ազգային համատեքստում՝ հաշվի առնելով ազգային հանգամանքները և Համայնքի իրավունքը,

45) անդամ պետությունների կողմից իրականացվող միջոցառումները պետք է հնարավոր դարձնեն սոցիալական և տնտեսական համերաշխության ձեռքբերումը, մասնավորապես, ներառելով համապատասխան տնտեսական խրախուսական միջոցների մասին դրույթ՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով առկա ազգային և համայնքային բոլոր գործիքները: Նման գործիքները պետք է հնարավորություն ունենան ներառել պատասխանատվության մեխանիզմներ՝ անհրաժեշտ ներդրումներ երաշխավորելու նպատակով,

46) քանի որ անդամ պետությունների կողմից իրականացվող՝ հանրային ծառայությունների պարտավորությունների իրականացմանն ուղղված միջոցառումները համարվում են

պետական օժանդակություն Պայմանագրի 87(1) հոդվածի համաձայն, Պայմանագրի 88(3) հոդվածի համաձայն պարտավորություն է ամրագրված դրանց մասին տեղեկացնել Հանձնաժողովին,

47) հանրային ծառայությունների պահանջները, ներառյալ դրանցից բխող ընդհանուր նվազագույն ստանդարտները պետք է ավելի ամրապնդվեն՝ ապահովելով, որ բոլոր օգտագործողները, հատկապես խոցելիները, կարողանան օգուտ ստանալ մրցակցությունից և արդար գներից: Հանրային ծառայության պահանջները պետք է սահմանվեն ազգային համատեքստում՝ հաշվի առնելով ազգային հանգամանքները. միևնույն ժամանակ, անդամ պետությունների կողմից պետք է պահպանվի Համայնքի իրավունքը: Միության քաղաքացիները և, երբ անդամ պետությունները անհրաժեշտ են համարում՝ փոքր ձեռնարկությունները պետք է հնարավորություն ունենան օգտվել հանրային ծառայությունների պարտավորություններից, մասնավորապես կապված մատակարարման անվտանգության և ողջամիտ սակագների հետ: Օգտագործողներին մատակարարելու հիմնական հայեցակետերից է սպառման վերաբերյալ օբյեկտիվ և թափանցիկ տվյալների հասանելիությունը: Ուստի, սպառողների համար սպառման մասին տվյալները և դրանց հետ կապված գները և ծառայությունների արժեքները պետք է հասանելի լինեն այնպես, որ նրանք կարողանան ներգրավել մրցակիցների՝ այդ տվյալների հիման վրա առաջարկություն անելու համար: Սպառողները պետք է նաև իրավունք ունենան պատշաճ կերպով տեղեկացվել իրենց կողմից սպառված էներգիայի մասին: Նախավճարումները պետք է արտացոլեն բնական գազի հնարավոր սպառումը, և վճարման տարբեր համակարգերը խտրական չպետք է լինեն: Էներգիայի ծախսերի վերաբերյալ սպառողներին տրամադրվող տեղեկատվությունը բավականին հաճախ խթան է ստեղծում էներգիայի խնայողության համար, որովհետև այն սպառողների համար ուղղակիորեն հետադարձ կապ կհանդիսանա արդյունավետ էներգիայի մեջ ներդրում անելու ազդեցությունների և վարքագծի փոփոխման համար,

48) սպառողների շահերը պետք է լինեն սույն Հրահանգի մտահոգության հիմնական առարկան և ծառայությունների որակը պետք է լինի բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների հիմնական պարտավորությունը: Սպառողների առկա իրավունքները պետք է ամրապնդվեն և երաշխավորվեն և պետք է ավելի մեծ թափանցիկություն ունենան: Սպառողների պաշտպանությունը պետք է ապահովի, որ Համայնքի առավել լայն իրավասություն ունեցող բոլոր բաժանորդները օգտվեն մրցակցային շուկայից: Սպառողների իրավունքները պետք է կիրարկվեն անդամ



պետությունների կողմից կամ եթե անդամ պետությունը այդպես է նախատեսել՝ կարգավորող մարմինների կողմից,

49) սպառողներին պետք է տրվի էներգիայի ոլորտի իրենց իրավունքների վերաբերյալ պարզ և հասկանալի տեղեկատվություն: Հանձնաժողովը պետք է համապատասխան շահառուների, ներառյալ անդամ պետությունների, ազգային կարգավորող մարմինների, սպառողների կազմակերպությունների և բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո կազմի հասանելի, օգտագործողի համար հարմար սպառողների տեղեկագիր՝ սպառողներին գործնական տեղեկատվություն տրամադրելով իրենց իրավունքների մասին: Այդ տեղեկագիրը պետք է տրամադրվի բոլոր սպառողներին և պետք է հանրորեն մատչելի լինի,

50) էներգիայի անբավարարությունը Համայնքում խորացող խնդիր է: Այն անդամ պետությունները, որոնց վրա դա ազդեցություն է գործել և որոնք դեռևս չեն մշակել ազգային գործողությունների պլաններ կամ այլ համապատասխան շրջանակներ էներգիայի անբավարարության խնդիրը լուծելու համար, պետք է անեն դա՝ նպատակ ունենալով նվազեցնել այս իրավիճակից տուժող մարդկանց թիվը: Բոլոր դեպքերում անդամ պետությունները խոցելի սպառողների համար պետք է ապահովեն էներգիայի մատակարարման անհրաժեշտ մակարդակ: Նման մակարդակ ապահովելիս՝ կարող է օգտագործվել ինտեգրված մոտեցում, օրինակ սոցիալական քաղաքականության շրջանակում և կարող են ներառվել միջոցներ սոցիալական քաղաքականության կամ բնակարաններում էներգիայի արդյունավետության բարձրացման ոլորտներում: Սույն Հրահանգը առնվազն պետք է թույլ տա վարել ազգային քաղաքականություններ, որոնք պաշտպանում են խոցելի սպառողներին,

51) սպառողների պաշտպանությունը ավելի լավ է երաշխավորվում, եթե առկա են վեճերի լուծման արդյունավետ միջոցներ բոլոր սպառողների համար: Անդամ պետությունները պետք է ներմուծեն բողոքների քննության արագ և արդյունավետ ընթացակարգեր,

52) Պետք է հնարավոր լինի ռացիոնալ չափման համակարգերի ներմուծման նպատակով կատարել տնտեսական գնահատման վրա: Եթե այդ գնահատման արդյունքում եզրակացվի, որ չափման նման համակարգերի ներմուծումը տնտեսական տեսանկյունից ողջամիտ և ծախսարդյունավետ է միայն գազի որոշակի քանակություն օգտագործող սպառողների համար, այդ դեպքում անդամ պետությունները պետք է կարողանան հաշվի առնել այդ հանգամանքը ռացիոնալ չափման համակարգերի իրականացման ժամանակ,

53) շուկայական գները պետք է խրախուսանքի ճիշտ միջոցներ տրամադրեն ցանցի զարգացման համար,

54) մրցակցության խթանումը և տարբեր մատակարարների մուտքի հասանելիությունը անդամ պետությունների համար պետք է չափազանց կարևոր նշանակություն ունենա՝ հնարավորության տալու համար սպառողներին լիարժեք օգտվել ազատականացված շուկայի հնարավորություններից բնական գազի ներքին շուկայում,

55) անդամ պետությունների միջև համերաշխության ոգին պահպանելով մեկտեղ մատակարարման անվտանգությանը նպաստելու նպատակով՝ մասնավորապես էներգիայի մատակարարման ճգնաժամների դեպքում, անհրաժեշտ է տարածաշրջանային համագործակցության շրջանակ սահմանել՝ պահպանելով համերաշխության օգտին: Նման համագործակցությունը կարող է հենվել նախ և առաջ շուկայի վրա հենված մեխանիզմների վրա, եթե անդամ պետությունները նման որոշում են կայացնում: Տարածաշրջանային և երկկողմ համերաշխության խթանման նպատակով համագործակցությունը չպետք է անհամաչափ բեռ սահմանի շուկայի մասնակիցների վրա, կամ խտրականություն ցուցաբերի նրանց միջև,

56) բնական գազի ներքին շուկա ստեղծելու նպատակով՝ անդամ պետությունները պետք է խրախուսեն իրենց ազգային շուկաների ինտեգրումը և համակարգի օպերատորների համագործակցությունը Համայնքի և տարածաշրջանային մակարդակում: Պետք է ինտեգրել նաև գազի «կղզյակներ» կազմող մեկուսացված համակարգերը, որոնք շարունակում են մնալ Համայնքում,

57) բնական գազի իրական ներքին շուկա զարգացումը Համայնքի տարածքում կապակցված ցանցի միջոցով պետք է լինի սույն Հրահանգի հիմնական նպատակներից մեկը: Այդ պատճառով, միջսահմանային փոխհարաբերությունների և տարածաշրջանային շուկաներին վերաբերող կարգավորիչ խնդիրները պետք է լինեն կարգավորող մարմինների հիմնական խնդիրներից մեկը՝ համապատասխան դեպքում Գործակալության հետ սերտ համագործակցության պայմաններում,

58) իրական ներքին շուկայի համար ընդհանուր կանոններ ապահովելու և բոլորի համար մատչելի գազի լայնածավալ մատակարարումը նույնպես պետք է կինի սույն Հրահանգի հիմնական նպատակներից մեկը: Այդ նպատակով շուկայի անխաթար գները պետք է խթան հանդիսանան միջսահմանային փոխկապակցվածությունների համար՝ միևնույն ժամանակ երկարատև կտրվածքում հանգեցնելով գների համապատասխանեցմանը,

59) կարգավորող մարմինները պետք է նաև տեղեկություն տրամադրեն շուկայի վերաբերյալ՝ հնարավորություն տալով Հանձնաժողովին իրականացնել բնական գազի ներքին շուկայի և դրա կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարատև զարգացման՝ իր դիտարկման և դիտանցման դերը, ներառյալ այնպիսի հայեցակետերի վերաբերյալ, ինչպիսին են առաջարկը և պահանջարկը, փոխանցման և բաշխման ենթակառուցվածքները, ծառայությունների որակը, միջսահմանային առևտուրը, գերբեռնվածության կառավարումը, ներդրումները, մեծածախ և սպառողական գները, շուկայի իրացվելիությունը և շրջակա միջավայրի և արդյունավետության զարգացումները: Ազգային կարգավորող մարմինները պետք է հաշվետու լինեն մրցակցային մարմիններին, Հանձնաժողովին և այն անդամ պետություններին, որտեղ գները բացասական ազդեցություն են թողնում մրցակցության և շուկայի պատշաճ գործունեության վրա,

60) քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ լիարժեք գործող բնական գազի ներքին շուկայի ստեղծումը, չի կարող բավարար կերպով իրականացվել անդամ պետությունների կողմից և, հետևաբար, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

61) «Բնական գազի փոխանցման միջսահմանային ցանցին միանալու պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 715/2009 (ԵՀ) կանոնակարգի համաձայն [9] Հանձնաժողովը կարող է ուղեցույցեր ընդունել՝ ներդաշնակության համապատասխան մակարդակ ձեռք բերելու համար: Նման ուղեցույցերը, որոնք համարվում են պարտադիր իրականացվող միջոցառումներ սույն Հրահանգի որոշ դրոյթների համաձայն, օգտակար գործիքներ են, որոնք անհրաժեշտության դեպքում արագ կարող են համապատասխանեցվել,

62) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը [10] համապատասխան,

63) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է իրավասու լինի համապատասխանեցնել ուղեցույցերը՝ սույն Կանոնակարգի նպատակները ձեռք բերելու համար պահանջվող

ներդաշնակեցման նվազագույն մակարդակ ապահովելու համար: Քանի որ այդ միջոցներն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար՝ լրացնելով այն նոր, ոչ էական տարրերով, ապա դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն,

64) բարելավված օրինաստեղծ գործունեության մասին միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [11]՝ անդամ պետությունները խրախուսվում են, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք,

65) հաշվի առնելով 2003/55/ԵՀ հրահանգում կատարվող փոփոխությունների շրջանակը՝ պարզության և ռացիոնալիզացման նպատակներով ցանկալի է, որ տվյալ դրույթները վերամշակվեն՝ դրանք համախմբելով մեկ միասնական տեքստում՝ նոր հրահանգում,

66) սույն Հրահանգը ճանաչում է Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ճանաչված հիմնարար իրավունքները և սկզբունքները:

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

**ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

*Հոդված 1*

**Կարգավորման առարկան և գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգը սահմանում է ընդհանուր կանոններ բնական գազի փոխադրման, բաշխման, մատակարարման և պահեստավորման համար: Այն սահմանում է կանոններ, որոնք վերաբերում են բնական գազի ոլորտի կազմակերպմանը և գործունեությանը, շուկայի հասանելիությանը, մրցույթների հայտարարման չափանիշներին և ընթացակարգերին և բնական գազի փոխադրման արտոնագրերի տրամադրմանը, բաշխմանը, մատակարարմանը և պահեստավորմանը, ինչպես նաև համակարգերի շահագործմանը:
2. Բնական գազին, այդ թվում հեղուկացված բնական գազին վերաբերող սույն Հրահանգի կանոնները կիրառվում են առանց խտրականության բիոգազի և բիոգանգվածից ստացված գազի կամ այլ տեսակի գազերի նկատմամբ, եթե նման գազերը տեխնիկապես և ապահով եղանակով հնարավոր է ներարկել և տեղափոխել բնական գազի համակարգով:

*Հոդված 2*

**Սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է հետևյալ գործառույթներից առնվազն մեկը՝ բնական գազի, այդ թվում հեղուկացված բնական գազի արտադրություն, փոխադրում, բաշխում, մատակարարում, գնում կամ պահեստավորում, որը պատասխանատու է այդ գործառույթների հետ կապված առևտրային, տեխնիկական և/կամ շահագործման աշխատանքների համար, բայց որը վերջնական բաժանորդը չէ:
- 2) «գազատար խողովակի առաջնային ցանց» նշանակում է ցանկացած խողովակ կամ խողովակների ցանց, որը շահագործվում /կամ կառուցված է նավթի կամ գազի

արտադրության ծրագրի շրջանակում կամ օգտագործվում է նման ծրագրերից կամ ծրագրից բնական գազ փոխադրելու նպատակով դեպի վերամշակող գործարան կամ տերմինալ կամ բեռնման ավամերձ վերջնական տերմինալ.

3) «փոխադրում» նշանակում է բնական գազի փոխադրումը ցանցի միջոցով, որը հիմնականում պարունակում է բարձր ճնշման խողովակաշարեր, որոնք տարբերվում են գազատար խողովակի առաջնային ցանցից և բարձր ճնշման խողովակաշարի այն մասից, որը հիմնականում օգտագործվում է բնական գազի լոկալ բաշխման համար, որի մեջ մտնում է մեծածախ բաժանորդներին գազի փոխադրումը, բայց ոչ մատակարարումը.

4) «փոխադրման համակարգի օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը իրականացնում է փոխադրման գործառույթ և պատասխանատու է որոշակի տարածքում փոխադրման համակարգի գործարկման, շահագործումն ապահովելու և բարելավելու համար և անհրաժեշտության դեպքում այդ համակարգի փոխկապակցվածությունը այլ համակարգերի հետ ապահովելու, ինչպես նաև գազի փոխադրման ողջամիտ պահանջները բավարարելու՝ համակարգի հեռահար կարողությունը երաշխավորելու համար,

5) «բաշխում» նշանակում է բնական գազի տեղափոխում լոկալ կամ տարածաշրջանային խողովակաշարերի ցանցերով՝ նպատակ հետապնդելով առաքում իրականացնել մեծածախ բաժանորդներին, բայց չի ներառում մատակարարումը,

6) «բաշխման համակարգի օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը իրականացնում է բաշխման գործառույթ և պատասխանատու է որոշակի տարածքում բաշխման համակարգի գործարկման, շահագործումն ապահովելու և բարելավելու համար և անհրաժեշտության դեպքում՝ այդ համակարգի փոխկապակցվածությունը այլ համակարգերի հետ ապահովելու, ինչպես նաև գազի բաշխման պահանջները բավարարելու՝ համակարգի հեռահար կարողությունը երաշխավորելու համար,

7) «մատակարարում» նշանակում է բնական գազի վաճառքը, ներառյալ՝ վերավաճառքը բաժանորդներին,

8) «մատակարարման բնագավառում տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է մատակարարման գործառույթ.

9) «պահեստարան» նշանակում է կայան, որտեղ պահվում է բնական գազը և հանդիսանում է բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտի սեփականությունը և/կամ շահագործվում է նրա կողմից: Սրա մեջ մտնում է հեղուկացված գազի կայանները, որոնք օգտագործվում են պահեստավորման համար, բայց չի մտնում արտադրական գործողությունների համար օգտագործվող մասը և չեն մտնում այն օբյեկտները, որոնք վերապահված են բացառապես փոխադրման համակարգի օպերատորներին՝ իրենց գործառույթների իրականացման ժամանակ:

10) «պահեստավորման համակարգի օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը իրականացնում է պահեստավորման գործառույթ և պատասխանատու է պահեստարանը գործարկելու համար:

11) «հեղուկացված բնական գազի կայան» նշանակում է տերմինալ, որը օգտագործվում է բնական գազը հեղուկացնելու համար կամ հեղուկացված բնական գազը ներկրելու, բեռնաթափելու կամ վերագազաֆիկացնելու համար: Սրա մեջ մտնում են օժանդակ ծառայությունները և ժամանակավոր պահեստները, որոնք անհրաժեշտ են վերագազաֆիկացման պրոցեսի և դեպի փոխադրման համակարգ հետագա առաքման համար, բայց չեն մտնում հեղուկացված բնական գազի տերմինալների այն մասերը, որոնք օգտագործվում են պահեստավորման համար,

12) «հեղուկացված բնական գազի համակարգի օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը իրականացնում է բնական գազի հեղուկացման կամ հեղուկացված բնական գազի ներկրման, բեռնաթափման կամ վերագազաֆիկացման աշխատանքներ և պատասխանատու է հեղուկացված բնական գազի կայան գործարկելու համար:

13) «համակարգ» նշանակում է փոխադրման ցանցեր, բաշխման ցանցեր, հեղուկացված բնական գազի օբյեկտներ և/կամ պահեստներ, որոնք հանդիսանում են բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտի սեփականությունը և/կամ գործարկվում են նրա կողմից, այդ թվում՝ գազալցման խողովակները և դրա՝ օժանդակ ծառայություններ տրամադրող կայանները և հարակից տնտեսվարող սուբյեկտների կայանները, որոնք անհրաժեշտ են փոխադրման, բաշխման և հեղուկացված բնական գազի համակարգ հասանելիություն ապահովելու համար:

14) «օժանդակ ծառայություններ» նշանակում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են փոխադրման ցանցերի, բաշխման ցանցերի, հեղուկացված բնական գազի օբյեկտների,

և/կամ պահեստների հասանելիության կամ գործարկման համար, ներառյալ՝ ծանրաբեռնվածության հավասարակշռությունը, իներտ գազերի խառնումը և ներարկումը, բայց բացառելով այն կայանները, որոնք վերապահված են բացառապես փոխադրման համակարգի օպերատորներին՝ իրենց գործառույթների իրականացման ժամանակ.

15) «խողովակների գազալցում» նշանակում է ճնշման միջոցով գազի պահեստավորում գազի փոխադրման և բաշխման համակարգերում: Սրա մեջ չեն մտնում այն օբյեկտները, որոնք վերապահված են փոխադրման համակարգի օպերատորներին՝ իրենց գործառույթների իրականացման ժամանակ.

16) «փոխկապակցված համակարգ» նշանակում է մի շարք համակարգեր, որոնք կապակցված են միմյանց հետ.

17) «գազահաղորդման գիծ» նշանակում է հաղորդման գիծ, որը հատում կամ միացնում է անդամ պետությունների միջև եղած սահմանները՝ բացառապես նպատակ հետապնդելով իրար միացնել անդամ պետությունների փոխադրման ազգային համակարգերը.

18) «ուղղակի գիծ» նշանակում է բնական գազի խողովակ, որը լրացնում է փոխկապակցված համակարգին.

19) «բնական գազի բնագավառում ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է ուղղահայաց կամ հորիզոնական ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ.

20) «ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտ կամ բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների խումբ, որտեղ նույն անձը կամ նույն անձինք ուղղակի կամ անուղղակի վերահսկողության իրավունք ունեն և որի դեպքում տնտեսվարող սուբյեկտը կամ տնտեսվարող սուբյեկտների խումբը իրականացնում է փոխանցման կամ բաշխման, հեղուկացված բնական գազի կամ պահեստավորման գործառույթներից առնվազն մեկը և գազի արտադրության կամ մատակարարման գործառույթներից առնվազն մեկը.

21) «հորիզոնական ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է տնտեսվարող սուբյեկտ, որն իրականացնում է բնական գազի արտադրության, փոխադրման, բաշխման, մատակարարման կամ պահեստավորման գործառույթներից առնվազն մեկը և զբաղվում է գազի հետ կապ չունեցող որևէ գործունեությամբ.

22) «փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է աֆիլացված տնտեսվարող սուբյեկտ՝ 1983 թվականի հունիսի 13-ի 83/349/ԵՏՀ Խորհրդի յոթերորդ հրահանգի 41-րդ



հողվածի իմաստով, որը հենվում է պայմանագրի՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին [13] 44(2)(ե) հոդվածի վրա: Կարող է նշանակել նաև ասոցիացված տնտեսվարող սուբյեկտ՝ այդ հրահանգի 33(1) հոդվածի իմաստով և/կամ նույն բաժնետերերին պատկանող տնտեսվարող սուբյեկտ:

23) «համակարգի օգտագործող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով մատակարարում է կամ ում մատակարարում են համակարգի միջոցով:

24) «բաժանորդ/գնորդ» նշանակում է բնական գազի մեծածախ բաժանորդ կամ վերջնական բաժանորդ կամ բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտ, որը բնական գազ է գնում:

25) «կենցաղային սպառման նպատակով բաժանորդ» նշանակում է բաժանորդ, որը բնական գազ է գնում իր սեփական տանը սպառելու նպատակով:

26) «կենցաղային սպառման նպատակ չհետապնդող բաժանորդ» նշանակում է բաժանորդ, որը բնական գազ է գնում ոչ իր սեփական տանը սպառելու նպատակով:

27) «վերջնական բաժանորդ» նշանակում է բաժանորդ, որը բնական գազ է գնում իր կողմից օգտագործման նպատակով:

28) «իրավասու բաժանորդ» նշանակում է բաժանորդ, ով կարող է իր ընտրության մատակարարից գազ գնել՝ 37-րդ հոդվածի իմաստով:

29) «մեծածախ բաժանորդ» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, բացի փոխադրման համակարգի օպերատորից և բաշխման համակարգի օպերատորից, որը բնական գազ է գնում վերավաճառքի նպատակով իր գրանցման համակարգի ներսում կամ դրանից դուրս:

30) «երկարաժամկետ պլանավորում» նշանակում է բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտի մատակարարման և տեղափոխման կարողության պլանավորում երկարաժամկետ կտրվածքով՝ նպատակ հետապնդելով բավարարել բնական գազի համակարգի պահանջարկը, բազմազանեցնել աղբյուրները և ապահովել մատակարարումները բաժանորդներին:

31) «զարգացող շուկա» նշանակում է անդամ պետություն, որի բնական գազի մատակարարման առաջին երկարաժամկետ պայմանագրով կատարված առաջին առևտրային մատակարարումը կատարվել է ոչ ավելի քան 10 տարի առաջ:

32) «անվտանգություն» նշանակում է թե՛ բնական գազի մատակարարման անվտանգությունը և թե՛ տեխնիկական ապահովությունը.

33) «նոր ենթակառուցվածք» նշանակում է մինչև 2003 թվականի օգոստոսի 4-ը չավարտված ենթակառուցվածք.

34) «գազի մատակարարման պայմանագիր» նշանակում է պայմանագիր բնական գազի մատակարարման մասին, սակայն չի ընդգրկում էլեկտրաէներգիայի դերիվատիվներ.

35) «գազի դերիվատիվ» նշանակում է ֆինանսական գործիք, որը սահմանված է «Ֆինանսական գործիքների շուկայի մասին»[14] Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/39/ԵՀ հրահանգի I հավելվածի Գ բաժնի 5,6 կամ 7-րդ կետերում, երբ այդ գործիքները վերաբերում են բնական գազին.

36) «վերահսկում» նշանակում է իրավունքներ, պայմանագրեր կամ որևէ այլ միջոց, որոնք առանձին-առանձին կամ միասին, ինչպես նաև հաշվի առնելով առկա փաստերը և օրենսդրությունը, հնարավորություն են տալիս որոշիչ ազդեցություն ունենալ տնտեսվարող սուբյեկտի վրա՝ մասնավորապես հետևյալի միջոցով՝

ա) տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ դրանց մի մասի սեփականություն կամ դրանք օգտագործելու իրավունք.

բ) իրավունքներ կամ պայմանագրեր, որոնք հնարավորություն են տալիս որոշիչ ազդեցություն ունենալ տնտեսվարող սուբյեկտի կառուցվածքային միավորների կազմի, քվեարկության կամ որոշումների կայացման վրա:

**ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ**

*Հոդված 3*

**Հանրային ծառայության պարտականություններ և բաժանորդի պաշտպանություն**

1. Իրենց ինստիտուցիոնալ կառուցվածքի հիման վրա և սուբսիդիարության սկզբունքի համաձայն անդամ պետությունները պետք է ապահովեն, որ, չհակասելով 2-րդ պարբերությանը, բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները գործեն սույն Հրահանգի սկզբունքների համաձայն՝ նպատակ ունենալով ստեղծել բնական գազի մրցակցային, ապահով և բնապահպանական տեսանկյունից կայուն շուկա և չպետք է խտրականություն դնեն այդ տնտեսվարող սուբյեկտների միջև՝ վերջիններիս իրավունքների կամ պարտականությունների առումով:

2. Լիարժեք հաշվի առնելով Պայմանագրի համապատասխան դրույթները՝ մասնավորապես դրա 86-րդ հոդվածը՝ անդամ պետությունները, ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կարող են բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին պարտադրել հանրային ծառայության պարտականություններ, որոնք կարող են վերաբերել անվտանգությանը, ներառյալ մատակարարման անվտանգությանը, պարբերականությանը, մատակարարումների որակին և գնին և բնապահպանությանը, ներառյալ էներգիայի արդյունավետությանը, վերականգնվող աղբյուրներից էներգիային և կլիմայի պաշտպանությանը: Նման պարտականությունները պետք է հստակ սահմանվեն, լինեն թափանցիկ, ոչ խտրական, ստուգելի և պետք է երաշխավորեն, որպեսզի ազգային սպառողները հասանելի լինեն Համայնքում գործող բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների համար: Մատակարարման անվտանգության, էներգիայի արդյունավետության/պահանջարկի կառավարման և շրջակա միջավայրի նպատակները ձեռք բերելու համար, ինչպես նաև էներգիայի վերականգնվող աղբյուրներին ուղղված նպատակների առումով, ինչպես նշված է սույն պարբերության մեջ, անդամ պետությունները կարող են կիրառել երկարաժամկետ պլանավորում՝ հաշվի առնելով, որ երրորդ կողմերը կարող են փորձել մուտք գործել համակարգ:

3. Անդամ պետությունները հաշվի են առնում համապատասխան միջոցները, որոնք ուղղված են վերջնական բաժանորդի պաշտպանությանը և, մասնավորապես, ապահովում

են, որպեսզի խոցելի բաժանորդների համար գործեն բավարար պաշտպանիչ միջոցներ: Այս համատեքստում յուրաքանչյուր անդամ պետություն սահմանում է խոցելի բաժանորդ հասկացությունը, որը կարող է վերաբերել էներգիայի սղությանը, և, այդ թվում՝ նման բաժանորդների գազը կրիտիկական պահերին կտրելու արգելքին: Անդամ պետությունները ապահովում են, որ խոցելի բաժանորդների հետ կապված իրավունքները և պարտականությունները կիրառվեն: Մասնավորապես, նրանք համապատասխան միջոցներ են ձեռնարկում պաշտպանելու համար վերջնական բաժանորդին ծայրամասային շրջաններում, որոնք կապված են գազի համակարգին: Անդամ պետությունները կարող են նշանակել երաշխավորող մատակարարի գազի համակարգին միացած բաժանորդների համար: Նրանք ապահովում են բաժանորդների պաշտպանության բարձր մակարդակ, մասնավորապես պայմանագրերի պայմանների թափանցիկության, ընդհանուր բնույթի տեղեկությունների և վեճերի լուծման մեխանիզմների առումով: Անդամ պետությունները ապահովում են, որ իրավասու բաժանորդը իրականում կարողանա հեշտ փոխել մատակարարին: Առնվազն կենցաղային սպառման նպատակով բաժանորդների առումով, այդ միջոցները ներառում են I հավելվածում սահմանվածները:

4. Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, օրինակ կազմում են էներգիայի ազգային պլաններ, սահմանում են սոցիալական ապահովության արտոնություններ՝ ապահովելու համար խոցելի բաժանորդներին անհրաժեշտ գազի մատակարարումները կամ նպաստում են էներգիայի արդյունավետության բարձրացմանը՝ սահմանված վայրերում էներգիայի անբավարարության խնդիրը լուծելու համար՝ այդ հարցը դիտելով էներգիայի անբավարարության լայն համատեքստում: Նման միջոցները չպետք է խոչընդոտեն 37-րդ հոդվածում սահմանված շուկայի արդյունավետ բացմանը և շուկայի գործունեությանը: Դրանց մասին Հանձնաժողովը տեղեկացվում է, հարկ եղած դեպքում՝ սույն հոդվածի 11-րդ պարբերության համաձայն: Նման ծանուցման մեջ չի մտնում այն միջոցները, որոնք ձեռնարկվում են ընդհանուր սոցիալական ապահովության համակարգի համատեքստում:

5. Անդամ պետությունները ապահովում են, որ գազի ցանցին միացված բոլոր բաժանորդները իրավունք ունենան գազ ստանալ մատակարարի կողմից ըստ մատակարարի հետ կնքված պայմանագրի, անկախ, թե որ անդամ պետությունում է մատակարարը գրանցված, եթե մատակարարը պահպանում է առևտրային և հավասարակշռման կանոնները և մատակարարման անվտանգության պահանջները: Այս կապակցությամբ, անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ, որոնք

անհրաժեշտ են ապահովելու համար, որ վարչական ընթացակարգերը չխոչընդոտեն մատակարարման տնտեսվարող սուբյեկտներին, որոնք արդեն գրանցված են մեկ այլ անդամ պետությունում:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ՝

ա) եթե բաժանորդը, որ պահպանում է պայմանագրի պայմանները, ցանկանում է փոխել մատակարարին, փոփոխությունը պետք է կատարվի համապատասխան օպերատորի(ների) կողմից երեք շաբաթվա ընթացքում. և

բ) բաժանորդները իրավունք ունեն ստանալ սպառման մասին բոլոր համապատասխան տվյալները:

Անդամ պետությունները ապահովում են, որ բաժանորդները ստանան առաջին ենթապարբերության ա) և բ) կետերում նշված իրավունքները ոչ խտրական եղանակով՝ կապված գնի, ներդրվող ջանքերի կամ ժամանակի հետ:

7. Անդամ պետությունները իրականացնում են համապատասխան միջոցներ սոցիալական և տնտեսական համախմբվածության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակներին հասնելու համար, որը կարող է ներառել կլիմայական փոփոխություններին և մատակարարման անվտանգությանն ուղղված միջոցառումներ: Նման միջոցառումները կարող են, մասնավորապես, ներառել, տնտեսական բավարար խթանների մասին դրույթներ, հարկ եղած դեպքում՝ օգտագործելով ազգային և ենթակառուցվածքների անհրաժեշտ ցանցի շահագործման և կառուցման, այդ թվում՝ փոխկապակցության կարողություններ հետ կապված Համայնքի բոլոր գործող գործիքները:

8. Էներգիայի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անդամ պետությունները, կամ եթե անդամ պետությունը սահմանել է՝ կարգավորող մարմինը բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտներին խրախուսում են օպտիմալացնել գազի օգտագործումը, օրինակ, էներգիայի կառավարման ծառայությունների, նորարարական գնային բանաձևերի մշակման կամ ողջամիտ չափման համակարգերի կամ հարկ եղած դեպքերում՝ ինտելեկտուալ էներգահամակարգի ներմուծման միջոցով:

9. Անդամ պետությունները ապահովում են, որպեսզի գոյություն ունենան ընդհանուր տեղեկատուներ, որոնք սպառողներին անհրաժեշտ տեղեկություններ կտրամադրեն իրենց իրավունքների, գործող օրենսդրության և վեճերի լուծման միջոցների մասին, որոնց իրենք

կարող են դիմել վեճ առաջանալու դեպքում: Նման տեղեկատուները կարող են լինել սպառողներին տեղեկություններ տրամադրող ավելի մեծ տեղեկատուների մաս:

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ գոյություն ունենա անկախ գործող մարմին, օրինակ էներգիայի հարցերով օմբուդսման կամ սպառողների պաշտպանության մարմին, որը կապահովի բողոքների արդյունավետ ընթացակարգ և դատարաններից դուրս վեճերի կարգավորում :

10. Անդամ պետությունները կարող են որոշում ընդունել չկիրառել 4-րդ հոդվածի դրույթները բաշխման նկատմամբ, եթե այդ դրույթի կիրառությունը կարող է իրավաբանորեն կամ գործնականում խոչընդոտել ընդհանուր տնտեսական շահերից ելնելով բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների վրա պարտադրված պարտավորությունների իրականացումը և եթե առևտրի զարգացումները ազդեցության չեն ենթարկվի այնպես, որ դա հակասի Համայնքի շահերին: Համայնքի շահերը, ի թիվս այլ բաների, ներառում է իրավասու բաժանորդների համար մրցակցություն սույն Հրահանգի և Պայմանագրի 86-րդ հոդվածի համաձայն:

11. Անդամ պետությունները, սույն Հրահանգը կիրառելիս, տեղեկացնում են Հանձնաժողովին բոլոր այն միջոցների մասին, որոնք իրենք ընդունել են հանրային ծառայության պարտավորությունները կատարելու համար, ներառյալ՝ սպառողների և շրջակա միջավայրի պաշտպանության մասով և ազգային և միջազգային մրցակցության վրա այդ պաշտպանության հնարավոր ազդեցությունների մասով , անկախ այն բանից, թե այդ միջոցները պահանջում են սույն Հրահանգի դրույթներից շեղում, թե ոչ: Յուրաքանչյուր հաջորդ երկու տարին մեկ նրանք Հանձնաժողովին տեղեկացնում են նման միջոցների գծով կատարված բոլոր փոփոխությունների մասին, անկախ այն բանից, թե դրանք պահանջում են սույն Հրահանգից շեղում, թե ոչ:

12. Հանձնաժողովը պետք է համապատասխան շահառուների, ներառյալ անդամ պետությունների, ազգային կարգավորող մարմինների, սպառողների կազմակերպությունների և բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո կազմի էներգիայի սպառման պարզ և հստակ տեղեկագիր՝ էներգիա սպառողներին գործնական տեղեկատվություն տրամադրելով իրենց իրավունքների մասին: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ գազի մատակարարները և գազի բաշխման համակարգի օպերատորները կարգավորող մարմնի հետ համագործակցության պայմաններում անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն իրենց բաժանորդներին էներգիայի

սպառման տեղեկագիր տրամադրելու հարցում և ապահովեն, որ այդ տեղեկագիրը հանրորեն հասանելի լինի:

#### Հոդված 4

### Արտոնագրման ընթացակարգ

1. Եթե բնական գազի կայան կառուցելու կամ շահագործելու համար պահանջվում է արտոնագիր (օրինակ՝ լիցենզիա, թույլտվություն, կոնցեսիա, համաձայնություն կամ հաստատում), այդ դեպքում անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված որևէ իրավասու մարմին տրամադրում է արտոնագրեր նման օբյեկտներ, խողովակաշարեր կամ հարակից սարքավորումներ իրենց տարածքում կառուցելու և/կամ շահագործելու համար՝ 2-4 պարբերությունների համաձայն: Անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված որևէ իրավասու մարմին կարող են արտոնագրեր տրամադրել նույն հիմքով բնական գազի մատակարարման համար և մեծածախ բաժանորդներին:

2. Երբ անդամ պետությունները հիմնում են արտոնագրման համակարգ, նրանք սահմանում են օբյեկտիվ և ոչ խտրական չափանիշներ, որոնք պետք է բավարարվեն բնական գազի կայան կառուցելու և/կամ շահագործելու արտոնագրի դիմող տնտեսվարող սուբյեկտի կողմից կամ բնական գազ մատակարարելու համար դիմող տնտեսվարող սուբյեկտի կողմից: Արտոնագրեր տրամադրելու ոչ խտրական չափանիշները և ընթացակարգերը պետք է հրապարակվեն: Անդամ պետությունները ապահովում են որ կայանների, խողովակաշարերի և հարակից սարքավորումների արտոնագրման ընթացակարգերը, հարկ եղած դեպքում, հաշվի առնեն ծրագրի նշանակությունը բնական գազի ներքին շուկայի համար:

3. Անդամ պետությունները ապահովում են, որ արտոնագիրը մերժելու հիմնավորումները լինեն օբյեկտիվ և ոչ խտրական և որ այդ հիմնավորումները տրամադրվող դիմողին: Նման մերժումների հիմնավորումները պետք է ծանուցվեն Հանձնաժողովին՝ տեղեկացման նպատակով: Անդամ պետությունները հաստատում են ընթացակարգ, որով դիմողը կարող է բողոքարկել նման բողոքները:

4. Մատակարարման նոր տարածքներ ներառելու և շահագործման ընդհանուր արդյունավետության նպատակով, առանց հակասելու 38-րդ հոդվածի գործողությանը, անդամ պետությունները կարող են մերժել բաշխման խողովակաշարի համակարգեր

կառուցելու կամ շահագործելու լրացուցիչ արտոնագրերի տրամադրումը որոշակի տարածքում, եթե նման խողովակաշարերի համակարգեր կառուցվել կամ նախատեսված են կառուցել այդ տարածքում և եթե առկա կամ նախատեսված կարողությունները լիարժեք չեն:

#### *Հոդված 5*

### **Մատակարարման անվտանգության դիտանցումը**

Անդամ պետությունները ապահովում են մատակարարման անվտանգության հարցերի դիտանցումը: Եթե անդամ պետությունները հարկ են համարում, նրանք կարող են դիտանցումը վերապահել 39(1) հոդվածում նշված կարգավորող մարմիններին: Նման դիտանցումը, մասնավորապես, վերաբերում է ազգային շուկայում պահանջարկի և առաջարկի հավասարակշռությանը, հետագայում ակնկալվող պահանջարկի մակարդակին և առկա մատակարարումներին, ակնկալվող լրացուցիչ կարողություններին, որոնք պլանավորվում կամ կազմման փուլում են և ցանցերի շահագործման որակին և մակարդակին, ինչպես նաև բարձր պահանջարկի և մեկ կամ մի քանի մատակարարների դեֆիցիտի դեպքում ձեռնարկվող միջոցներին: Մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 31-ը իրավասու մարմինները հրապարակում են այդ հարցերի դիտանցման արդյունքները, ինչպես նաև դրանց լուծմանը ուղղված միջոցները ամփոփող հաշվետվությունը և ուղարկում են հաշվետվությունը Հանձնաժողովին:

#### *Հոդված 6*

### **Տարածաշրջանային համերաշխություն**

1. Բնական գազի ներքին շուկայում մատակարարումների անվտանգությունը երաշխավորելու համար, անդամ պետությունները համագործակցում են տարածաշրջանային և երկկողմ համերաշխությունը խթանելու նպատակով:
2. Նման համագործակցության մաս են կազմում այն իրավիճակները, որոնք կարճաժամկետ կտրվածքում հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մատակարարման լուրջ ընդհատումների, որոնք կարող են ազդել անդամ պետության վրա: Այն ներառում է.



ա) ազգային արտակարգ իրավիճակների միջոցների համակարգում, որը նշված է «Բնական գազի մատակարարման անվտանգության երաշխավորման միջոցների մասին» Խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի 2004/67/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածում [15].

բ) էլեկտրաէներգիայի և բնական գազի փոխկապակցությունների սահմանում, և հարկ եղած դեպքում՝ կատարելագործում կամ կարողությունների մեծացում. և

գ) փոխադարձ օժանդակության պայմաններ և գործնական մեթոդներ:

3. Նման համագործակցության մասին տեղեկացվում են Հանձնաժողովը և այլ անդամ պետություններ:

4. Հանձնաժողովը կարող է ընդունել տարածաշրջանային համագործակցության ուղեցույցեր ելնելով համերաշխության պահանջներից: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

## *Հոդված 7*

### **Տարածաշրջանային համագործակցության խթանում**

1. Անդամ պետությունները, ինչպես նաև կարգավորող մարմինները, պետք է համագործակցեն միմյանց հետ իրենց ազգային շուկաները մեկ կամ մի քանի տարածաշրջանային մակարդակներով ինտեգրելու նպատակով՝ որպես լիովին ազատականացված ներքին շուկա ստեղծելու ուղղությամբ առաջին քայլ: Մասնավորապես, եթե անդամ պետությունները սահմանել են՝ կարգավորող մարմինները կամ անդամ պետությունները խթանում և նպաստում են փոխադրման համակարգի օպերատորների համագործակցությանը տարածաշրջանային մակարդակով, ներառյալ՝ միջսահմանային խնդիրների մասով՝ նպատակ հետապնդելով ստեղծել բնական գազի մրցակցային ներքին շուկա, խթանել իրավական, կարգավորիչ և տեխնիկական շրջանակի հետևողականությունը և նպաստել գազի կղզյակներ կազմող մեկուսացված համակարգերի ինտեգրմանը, որոնք դեռևս գոյություն ունեն Համայնքում: Նման տարածաշրջանային համագործակցության մեջ մտնող աշխարհագրական տարածքները ներառում են թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 12(3) հոդվածի համաձայն սահմանված աշխարհագրական տարածքները: Նման համագործակցության մեջ կարող են մտնել այլ աշխարհագրական տարածքներ:

2. Գործակալությունը համագործակցում է ազգային կարգավորող մարմինների և փոխադրման համակարգի օպերատորների հետ ապահովելու համար տարբեր տարածաշրջանների միջև կարգավորիչ շրջանակների համապատասխանությունը բնական գազի ներքին մրցակցային շուկա ստեղծելու նպատակին: Եթե Գործակալությունը գտնում է, որ նման համագործակցության համար անհրաժեշտ են պարտադիր կանոններ, այդ դեպքում այն հանդես է գալիս համապատասխան առաջարկներով:

3. Անդամ պետությունները սույն Հրահանգի իրականացման միջոցով ապահովում են, որ փոխադրման համակարգի օպերատորները տարածաշրջանային մակարդակով ունենան մեկ կամ մի քանի ինտեգրված համակարգ (եր), որը գործում է երկու և ավելի անդամ պետություններում՝ կարողությունների բաշխման և ցանցի անվտանգությունը ստուգելու նպատակով:

4. Եթե ուղղահայաց ինտեգրված փոխադրման համակարգի օպերատորները մասնակցում են նման համագործակցություն իրականացնելու նպատակով ձեռնարկված որևէ համատեղ միջոցառման, այդ համատեղ միջոցառման շրջանակում պետք է կազմվի և իրականացվի պարտավորությունների կատարման ծրագիր, որը սահմանում է այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն ապահովելու համար, որպեսզի խտրական և հակամրցակցային գործողություններ տեղի չունենան: Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ ոչ խտրական և հակամրցակցային գործողությունները բացառելու նպատակին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Այն ենթակա է հաստատման Գործակալության կողմից: Ծրագրի պարտավորությունների կատարումը անկախ դիտանցման է ենթարկվում ուղղահայաց ինտեգրված փոխադրման համակարգի օպերատորների վերահսկող պաշտոնատար անձանց կողմից:

### *Հոդված 8*

#### **Տեխնիկական կանոններ**

Եթե անդամ պետությունները սահմանել են՝ կարգավորող մարմիններ, կամ անդամ պետությունները իրենք ապահովում են, որ սահմանվեն տեխնիկական անվտանգության չափանիշներ և որ մշակվեն և հրապարակվեն տեխնիկական կանոններ, որոնք սահմանում են տեխնիկական դիզայնի և աշխատանքային նվազագույն պահանջներ հեղուկացված գազի կայանների համակարգին միացման, պահեստարանների, փոխադրման կամ բաշխման այլ համակարգերի և ուղիղ գծերի մասով: Այս տեխնիկական կանոնները

ապահովում են համակարգերի փոխգործողությունը և պետք է լինեն օբյեկտիվ և ոչ խտրական: Գործակալությունը, հարկ եղած դեպքում, կարող է հանդես գալ համապատասխան առաջարկներով այդ կանոնների հետ համապատասխանություն ձեռք բերելու նպատակով: Այդ կանոնները ծանուցվում են Հանձնաժողովին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ տեխնիկական ստանդարտների և կարգավորումների ու տեղեկատվական հասարակության ծառայություններին վերաբերող կանոնների ոլորտում տեղեկատվության տրամադրման համար ընթացակարգ սահմանող 1998 թվականի հունիսի 22-ի թիվ 98/34/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն [16],

**ՓՈԽԱԴՐՈՒՄ, ՊԱՇՏՍԱՎՈՐՈՒՄ և ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ**

*Հոդված 9*

**Փոխադրման համակարգերի և փոխադրման համակարգի օպերատորների տարանջատումը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ 2012 թվականի մարտի 3-ից սկսած՝

ա) յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտ, որը ունի փոխադրման համակարգ, գործի որպես փոխադրման համակարգի օպերատոր.

բ) միևնույն անձը կամ անձինք իրավունք չունենան կա՛մ՝

i) ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել արտադրության կամ մատակարարման գործառույթների իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի նկատմամբ, կամ

ii) ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի նկատմամբ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ ունեցող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ.

գ) միևնույն անձը կամ անձինք իրավունք չունեն նշանակել փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի վերահսկիչ խորհրդի, վարչական խորհրդի կամ տնտեսվարող սուբյեկտը իրավաբանորեն ներկայացնող մարմինների անդամներ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ ունեցող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ. և

դ) միևնույն անձը կամ անձինք իրավունք չունեն նշանակել թե՛ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ ունեցող տնտեսվարող սուբյեկտի և թե՛ փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի վերահսկիչ խորհրդի, վարչական

խորհրդի կամ տնտեսվարող սուբյեկտը իրավաբանորեն ներկայացնող մարմինների անդամներ:

2. 1-ին պարբերության բ) և գ) կետերում նշված իրավունքները, մասնավորապես, ներառում են՝

ա) ընտրելու իրավունք իրականացնելու լիազորությունը.

բ) վերահսկիչ խորհրդի, վարչական խորհրդի կամ տնտեսվարող սուբյեկտը օրինական կերպով ներկայացնող մարմինների անդամներ նշանակելու լիազորություն. կամ

գ) բաժնետոմսերի մեծամասնություն ունենալու իրավունք:

3. 1(բ) պարբերության նպատակով «արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը նշանակում է «գոյացման կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ»՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոններ մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/72/ԵՀ հրահանգի իմաստով [17] և «փոխադրման համակարգի օպերատոր» և «փոխադրման համակարգ» եզրույթները նշանակում է «փոխադրման համակարգի օպերատոր» և «փոխադրման համակարգ»՝ նույն հրահանգի իմաստով:

4. Անդամ պետությունները կարող են թույլ տալ շեղում կատարել 1-ին պարբերության բ) և գ) կետերից մինչև 2013 թվականի մարտի 3-ը՝ պայմանով, որ փոխադրման համակարգի օպերատորները ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս չլինեն:

5. Սույն հոդվածի 1(ա) պարբերության մեջ սահմանված պարտավորությունը համարվում է կատարված, եթե փոխադրման համակարգեր ունեցող երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտներ ստեղծել են համատեղ ձեռնարկություն, որը գործում է որպես փոխադրման համակարգի օպերատոր երկու կամ ավելի անդամ պետություններ համապատասխան փոխադրման համակարգերում: Այդ համատեղ ձեռնարկության մաս չի կարող լինել ոչ մի այլ տնտեսվարող սուբյեկտ, եթե միայն 14-րդ հոդվածի համաձայն այն հաստատված չէ որպես անկախ համակարգի օպերատոր կամ անկախ փոխադրման օպերատոր IV գլխի նպատակներով:

6. Սույն հոդվածի իրականացման նպատակներով, եթե 1-ին պարբերության (բ), (գ) և (դ) կետերում նշված անձը անդամ պետությունը կամ մեկ այլ պետական մարմին, փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ կամ մի կողմից՝ փոխադրման համակարգի և մյուս

կողմից՝ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող երկու առանձին պետական մարմիններ են, այդ դեպքում այդ մարմինները չեն համարվում միևնույն անձը կամ անձինք:

7. Անդամ պետությունները ապահովում են, որ ո՛չ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող փոխադրման համակարգի մոտ պահվող՝ 16-րդ հոդվածում նշված առևտրային գաղտնի տեղեկությունները, ո՛չ փոխադրման համակարգի օպերատորի աշխատակազմը չփոխադրվեն արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ կատարող տնտեսվարող սուբյեկտների մոտ:

8. Եթե 2009 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ փոխադրման համակարգը պատկանում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի, այդ դեպքում անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել 1-ին պարբերությունը:

Նման դեպքում համապատասխան անդամ պետությունը կա՛մ՝

ա) նշանակում է անկախ համակարգի օպերատոր 14-րդ հոդվածի համաձայն, կա՛մ

բ) պահպանում է IV գլխի դրույթները:

9. Եթե 2009 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ, փոխադրման համակարգը պատկանում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի, և գոյություն չունեն պայմանավորվածություններ, որոնք երաշխավորեն փոխադրման համակարգի օպերատորի առավել արդյունավետ անկախություն, քան IV գլխի դրույթներն են, այդ դեպքում անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել 1-ին պարբերությունը:

10. Նախքան տնտեսվարող սուբյեկտ հաստատվում կամ նշանակվում է որպես փոխադրման համակարգի օպերատոր սույն հոդվածի 9-րդ պարբերության համաձայն, այն պետք է արտոնագրվի սույն Հրահանգի 10(4), (5) և (6) հոդվածում սահմանված ընթացակարգերի և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) կանոնակարգի 3-րդ հոդվածի համաձայն: Ելնելով այդ հոդվածներից՝ Հանձնաժողովը պետք է վավերացնի, որ գործող պայմանավորվածությունները հստակ երաշխավորեն փոխադրման համակարգի օպերատորի առավել արդյունավետ անկախություն, քան IV գլխի դրույթները:

11. Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտները, որոնք հանդիսանում են փոխադրման համակարգի սեփականատեր, չպետք է ոչ մի դեպքում խոչընդոտվեն 1-ին պարբերության պահանջները կատարելուն ուղղված քայլեր ձեռնարկելուց:

12. Արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ կատարող տնտեսվարող սուբյեկտները ոչ մի դեպքում չպետք է ուղղակիորեն կամ անուղղակի կերպով վերահսկեն կամ որևէ իրավունք ունենան համակցված/տարանջատված փոխադրման համակարգի օպերատորների նկատմամբ այն անդամ պետություններում, որոնք կիրառում են 1-ին պարբերությունը:

### *Հոդված 10*

#### **Փոխադրման համակարգի օպերատորների նշանակումը և արտոնագրումը**

1. Նախքան տնտեսվարող սուբյեկտի հաստատումը և նրա նշանակումը որպես փոխադրման համակարգի օպերատոր, այն պետք է արտոնագրվի սույն հոդվածի 4, 5 և 6 պարբերություններում և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում սահմանված ընթացակարգերի համաձայն:

2. Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք արտոնագրվել են ազգային կարգավորող մարմնի կողմից որպես 9-րդ հոդվածի պահանջներին բավարարող՝ արտոնագրման ընթացակարգի համաձայն, անդամ պետությունների կողմից հաստատվում և նշանակվում են որպես փոխադրման համակարգի օպերատորներ: Փոխադրման համակարգի օպերատորների նշանակումը ծանուցվում է Հանձնաժողովին և հրապարակվում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

3. Փոխադրման համակարգի օպերատորները ծանուցում են կարգավորող մարմնի ցանկացած պլանավորված գործարքի մասին, որի արդյունքում կարող է պահանջվել 9-րդ հոդվածի պահանջների հետ նրանց համապատասխանության վերազնահատում:

4. Կարգավորող մարմինները դիտանցում են փոխադրման համակարգի օպերատորների շարունակական համապատասխանությունը 9-րդ հոդվածի պահանջներին: Նրանք նախաձեռնում են արտոնագրման ընթացակարգ՝ նման համապատասխանություն ապահովելու համար՝

ա) փոխադրման համակարգի օպերատորի կողմից ծանուցման դեպքում՝ 3-րդ պարբերության համաձայն.

բ) իրենց սեփական նախաձեռնությամբ, եթե նրանք տեղեկացվում են, որ փոխադրման համակարգի սեփականատերերի կամ փոխադրման համակարգի օպերատորների

նկատմամբ իրավունքների կամ նրանց վրա ազդեցության պլանավորված փոփոխությունը կարող է հանգեցնել 9-րդ հոդվածի խախտմամբ, կամ եթե նրանք պատճառ ունեն կարծելու համար, որ նման խախտում կարող է տեղի ունենալ. կամ

գ) Հանձնաժողովի կողմից հիմնավորված պահանջի դեպքում:

5. Կարգավորող մարմինները որոշում են ընդունում փոխադրման համակարգի օպերատորի արտոնագրման մասին փոխադրման համակարգի օպերատորի կողմից ծանուցում ստանալուց հետո կամ Հանձնաժողովի կողմից պահանջ ստանալուց հետո չորս ամիսների ընթացքում: Այդ ժամկետի ավարտից հետո, համարվում է, որ արտոնագրումը կատարված է: Կարգավորող մարմնի հստակ ձևակերպված կամ բանավոր որոշումը ուժի մեջ է մտնում, միայն երբ 6-րդ պարբերության մեջ սահմանված ընթացակարգը ավարտվում է:

6. Փոխադրման համակարգի օպերատորի արտոնագրման մասին հստակ ձևակերպված կամ բանավոր որոշումը առանց հապաղման ծանուցվում է Հանձնաժողովին կարգավորող մարմնի կողմից, որին կից ուղարկվում է համապատասխան բոլոր այն տեղեկությունները, որոնք առնչություն ունեն այդ որոշման հետ: Հանձնաժողովը գործում է թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

7. Կարգավորող մարմինները և Հանձնաժողովը փոխադրման համակարգի օպերատորներից արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսավարող սուբյեկտից կարող է պահանջել իրենց առաջադրանքների կատարման հետ կապված ցանկացած տեղեկություն՝ համաձայն սույն հոդվածի:

8. Կարգավորող մարմինները և Հանձնաժողովը պահպանում են առևտրային գաղտնիքների գաղտնիությունը:

### *Հոդված 11*

#### **Երրորդ երկրների առնչությամբ արտոնագրումը**

1. Եթե արտոնագրման պահանջ ներկայացվել է երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձի կամ անձանց կողմից վերահսկվող փոխադրման համակարգի սեփականատիրոջ կամ փոխադրման համակարգի օպերատորի կողմից, կարգավորող մարմինը այդ մասին ծանուցում է Հանձնաժողովին:



Կարգավորող մարմինը առանց հապաղման ծանուցում է Հանձնաժողովին նաև բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձը կամ անձինք կարող են վերահսկողություն սահմանել փոխադրման համակարգի կամ փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ:

2. Փոխադրման համակարգի օպերատորը ծանուցում է կարգավորող մարմինն ցանկացած հանգամանքի մասին, որը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձը կամ անձինք կարող են վերահսկողություն սահմանել փոխադրման համակարգի կամ փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ:

3. Կարգավորող մարմինները որոշման նախագիծ է ընդունում փոխադրման համակարգի օպերատորի արտոնագրման մասին փոխադրման համակարգի օպերատորի կողմից ծանուցում ստանալուց հետո չորս ամիսների ընթացքում: Կարգավորող մարմինը կարող է մերժել արտոնագրումը, եթե ցույց տրված չէ՝

ա) որ համապատասխան սուբյեկտը համապատասխանում է 9-րդ հոդվածի պահանջներին. և

բ) կարգավորող մարմինն կամ անդամ պետության կողմից նշանակված այլ իրավասու մարմին՝ որ արտոնագրի տրամադրումը չի վտանգի այդ անդամ պետության և Համայնքի էներգիայի մատակարարման անվտանգությունը: Այդ հարցը քննելիս՝ կարգավորող մարմինը կամ այդ նպատակով նշանակված այլ իրավասու մարմին հաշվի են առնում՝

i) այդ երրորդ երկրի նկատմամբ՝ միջազգային իրավունքից բխող Համայնքի իրավունքները և պարտականությունները, ներառյալ մեկ կամ մի քանի երրորդ երկրների հետ կնքված պայմանագրերը, որոնց կողմ է հանդիսանում Համայնքը և որոնք վերաբերում են էներգիայի մատակարարման անվտանգության խնդիրներին.

ii) այդ երրորդ երկրի նկատմամբ անդամ պետության իրավունքները և պարտավորությունները, որոնք բխում են այդ երկրի հետ կնքված պայմանագրերից, եթե դրանք համապատասխանում են Համայնքի իրավունքին. և

iii) տվյալ գործի և համապատասխան երրորդ երկրի այլ հատուկ փաստեր և հանգամանքներ:

4. Կարգավորող մարմինն անհապաղ ծանուցում է որոշման մասին Հանձնաժողովին՝ ներկայացնելով նաև այդ որոշման հետ կապված բոլոր համապատասխան տեղեկությունները:

5. Նախքան կարգավորող մարմինը որոշում կընդունի արտոնագրման մասին, անդամ պետությունները պահանջում են 3(բ) պարբերության մեջ նշված կարգավորող մարմնից կամ նշանակված իրավասու մարմնից Հանձնաժողովից պահանջել կարծիք ներկայացնել, թե արդյոք՝

ա) համապատասխան սուբյեկտը համապատասխանում է 9-րդ հոդվածի պահանջներին. և

բ) արտոնագրի տրամադրումը չի վտանգի Համայնքում էներգիայի մատակարարման անվտանգությունը:

6. Հանձնաժողովը ուսումնասիրում է 5-րդ պարբերության մեջ նշված պահանջը, հենց որ ստանում է այն: Պահանջը ստանալուց հետո երկու ամիսների ընթացքում այն ներկայացնում է իր եզրակացությունը ազգային կարգավորող մարմնին, կամ եթե պահանջը ներկայացվել է նշանակված իրավասու մարմնին՝ այդ մարմնին:

Եզրակացությունը նախապատրաստելիս՝ Հանձնաժողովը կարող է պահանջել Գործակալությանը, համապատասխան անդամ պետությանը և շահագրգիռ կողմերի ներկայացնել իրենց տեսակետները: Եթե Հանձնաժողովը նման պահանջ է ներկայացնում, երկու ամսվա ժամկետը երկարաձգվում է ևս երկու ամսով:

Եթե Հանձնաժողովը առաջին և երկրորդ ենթապարբերություններում նշված ժամկետում եզրակացություն չի ներկայացնում, այն չի կարող առարկություններ առաջ քաշել կարգավորող մարմնի որոշման դեմ:

7. Գնահատելիս, թե արդյոք երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձի կամ անձանց կողմից իրականացվող վերահսկումը վտանգում է Համայնքին էներգիայի մատակարարման անվտանգությունը՝ Հանձնաժողովը հաշվի է առնում՝

ա) տվյալ գործի և համապատասխան երրորդ երկրի կամ երրորդ երկրների հատուկ հանգամանքները և

բ) այդ երրորդ երկրի կամ երկրների նկատմամբ միջազգային իրավունքից բխող Համայնքի իրավունքները և պարտականությունները, ներառյալ մեկ կամ մի քանի երրորդ երկրների հետ կնքված պայմանագրերը, որոնց կողմ է հանդիսանում Համայնքը և որոնք վերաբերում են էներգիայի մատակարարման անվտանգության խնդիրներին:

8. Ազգային կարգավորող մարմինը, 6-րդ պարբերությունում նշված ժամկետը լրանալուց հետո երկու ամսվա ընթացքում, ընդունում է արտոնագրման մասին իր վերջնական

որոշումը: Վերջնական որոշումը ընդունելիս ազգային կարգավորող մարմինը մեծ ուշադրություն է դարձնում Հանձնաժողովի եզրակացությանը: Բոլոր դեպքերում անդամ պետությունները իրավունք ունեն մերժել արտոնագրումը, երբ արտոնագրման տրամադրումը վտանգի տակ է դնում անդամ պետության՝ էներգիայի մատակարարման անվտանգությունը կամ այլ անդամ պետության՝ էներգիայի մատակարարման անվտանգությունը: Եթե անդամ պետությունը նախօրոք նշանակում է այլ իրավասու մարմին 3(բ) պարբերությունը գնահատելու համար, այն կարող է ազգային կարգավորող մարմնից պահանջել վերջնական որոշումն ընդունել այդ իրավասու մարմնի կողմից կատարված գնահատման համաձայն: Կարգավորող մարմնի վերջնական որոշումը և Հանձնաժողովի եզրակացությունը պետք է հրապարակվեն միասին: Եթե վերջնական որոշումը տարբերվում է Հանձնաժողովի եզրակացությունից, տվյալ անդամ պետությունը այդ որոշման հետ միասին պետք է տրամադրի և հրապարակի նման որոշման հիմնավորումը:

9. Սույն հոդվածը չի խոչընդոտում անդամ պետություններին ազգային մակարդակով օրինական վերահսկողություն իրականացնել հանրային անվտանգության շահերի օրինականությունը պաշտպանելու նպատակով՝ Համայնքի իրավունքի համաձայն:

10. Հանձնաժողովը կարող է ընդունել սույն հոդվածի կիրառման համար անհրաժեշտ ընթացակարգի մանրամասները սահմանող ուղեցույցներ: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

11. Սույն հոդվածը, բացառությամբ 3(ա) պարբերության, պետք է նաև կիրառվի այն անդամ պետությունների նկատմամբ, որոնք կարող են 49-րդ հոդվածից շեղվել:

## *Հոդված 12*

### **Պահեստավորման և հեղուկացված բնական գազի համակարգի համակարգի օպերատորների նշանակումը**

Անդամ պետությունները նշանակում պահանջում են պահեստարաններ կամ հեղուկացված բնական գազի կայաններ ունեցող բնական գազի տնտեսվարող սուբյեկտներից նշանակել պահեստավորման և հեղուկացված բնական գազի համակարգի մեկ կամ մի քանի

օպերատորներ անդամ պետությունների կողմից սահմանված ժամանակահատվածով՝ հաշվի առնելով արդյունավետության և տնտեսական հավասարակշռության նկատառումները:

### Հոդված 13

#### **Փոխադրման, պահեստավորման և/կամ հեղուկացված բնական գազի համակարգի օպերատորների գործառույթները**

1. Փոխադրման, պահեստավորման և/կամ հեղուկացված բնական գազի համակարգի օպերատորները պարտավոր են՝

ա) տնտեսական պայմանների ներքո շահագործել, տեխնիկապես սպասարկել և կատարելագործել ապահով, վստահելի և արդյունավետ փոխադրման, պահեստավորման և/կամ հեղուկացված բնական գազի կայաններ՝ շրջական միջավայրին պատշաճ նշանակություն տալով հանդերձ ապահովելով շուկայի ազատությունը և աշխատանքային պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ բավարար միջոցները.

բ) զերծ մնալ համակարգն օգտագործողների կամ համակարգն օգտագործողների դասերի միջև խտրականությունից, մասնավորապես, իր հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտների օգտին.

գ) փոխադրման համակարգի այլ օպերատորների, և պահեստավորման համակարգի այլ օպերատորների, հեղուկացված բնական գազի համակարգի այլ օպերատորների և/կամ բաշխման համակարգի օպերատորների բավարար տեղեկություններ տրամադրել՝ ապահովելու համար, որ բնական գազի փոխադրումն ու պահեստավորումը իրականացվի փոխկապակցված համակարգի անվտանգ և արդյունավետ գործունեությանը համահունչ եղանակով և

դ) համակարգի օգտագործողներին տրամադրել տեղեկություն, որը նրանց անհրաժեշտ է համակարգի արդյունավետ հասանելիության համար:

2. Փոխադրման համակարգի յուրաքանչյուր օպերատոր պետք է ունենա միջսահմանային բավարար հնարավորություններ եվրոպական փոխադրման ենթակառուցվածքին ինտեգրվելու նպատակով՝ ներառելով նման հնարավորությունների համար անհրաժեշտ տնտեսապես ողջամիտ և տեխնիկապես հնարավոր բոլոր պահանջները և հաշվի առնելով գազի մատակարարման անվտանգությունը:

3. Փոխադրման համակարգի օպերատորների կողմից էներգիայի համակարգը հավասարակշռելու նպատակով ընդունված կանոնները պետք է լինեն օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող՝ ներառյալ կանոններ այդ օպերատորների ցանցերի համակարգն օգտագործողներից էներգիայի դիսբալանսի համար կատարվող գանձումների մասին: Փոխադրման համակարգի օպերատորների կողմից նմանատիպ ծառայությունների մատուցման ժամկետներն ու պայմանները՝ ներառյալ կանոններն ու սակագները, պետք է սահմանվեն ոչ խտրական և ծախսերն արտահայտող եղանակով՝ 41(6) հոդվածում նշված մեթոդաբանության համաձայն և պետք է հրապարակվեն:

4. Եթե անդամ պետությունները նման լիազորություն են սահմանել՝ կարգավորող մարմինները կամ անդամ պետությունները կարող են պահանջել, որ փոխադրման համակարգի օպերատորները պահպանեն փոխադրման համակարգի տեխնիկական սպասարկման և զարգացման նվազագույն ստանդարտները՝ ներառյալ փոխկապակցման կարողությունների մասով:

5. Փոխադրման համակարգի օպերատորները իրենց գործառույթների իրականացման համար օգտագործվող էներգիան գնում են թափանցիկ, ոչ խտրական և շուկայի վրա հիմնված ընթացակարգերով:

#### *Հոդված 14*

### **Անկախ համակարգի օպերատոր**

1. Եթե փոխադրման համակարգը 2009 թվականի սեպտեմբերի 3–ի դրությամբ պատկանում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի, այդ դեպքում անդամ պետությունները կարող են որոշել չկիրառել 9(1) հոդվածը և նշանակել անկախ համակարգի օպերատոր՝ փոխադրման համակարգի սեփականատիրոջի կողմից առաջարկի դեպքում: Հանձնաժողովը պետք է հաստատի նման նշանակումը:

2. Անդամ պետությունը կարող է հաստատել և նշանակել անկախ համակարգի օպերատոր միայն եթե՝

ա) թեկնածու օպերատորը ցույց է տվել, որ համապատասխանում է 9(1)(բ), (գ) և (դ) հոդվածի պահանջներին.

բ) թեկնածու օպերատորը ցույց է տվել, որ իր տրամադրության տակ ունի ֆինանսական, տեխնիկական, ֆիզիկական և մարդկային ռեսուրսներ 13-րդ հոդվածով նախատեսված իր գործառույթներն իրականացնելու համար.

գ) թեկնածու օպերատորը պատասխանատվություն է վերցրել պահպանել 10 տարի տևողությամբ ցանցի զարգացման պլանը, որը մոնիտորինգի է ենթարկվում կարգավորող մարմնի կողմից.

դ) փոխադրման համակարգի օպերատորը ցուցաբերել է կարողություն՝ իրականացնել իր պարտավորությունները 5-րդ պարբերության համաձայն: Այդ նպատակով այն տրամադրում է թեկնածու տնտեսվարող սուբյեկտի և այլ համապատասխան անձի հետ պայմանագրային բոլոր պայմանավորվածությունների նախագծերը.և

ե) թեկնածու օպերատորը ցուցաբերել է կարողություն թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն պարտավորությունների իրականացնելու հարցում՝ ներառյալ եվրոպական և տարածաշրջանային մակարդակում փոխադրման համակարգի օպերատորների միջև համագործակցության մասով:

3. Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք արտոնագրվել են ազգային կարգավորող մարմնի կողմից որպես 11-րդ հոդվածի և սույն հոդվածի 2-րդ պարբերության պահանջներին բավարարող՝ անդամ պետությունների կողմից հաստատվում և նշանակվում են որպես անկախ համակարգի օպերատորներ: Կիրառվում է սույն Հրահանգի 10-րդ հոդվածում և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում կամ սույն Հրահանգի 11-րդ հոդվածում սահմանված արտոնագրման ընթացակարգը:

4. Անկախ համակարգի յուրաքանչյուր օպերատոր պատասխանատու է երրորդ կողմի մուտքի տրամադրման և կառավարման համար՝ ներառյալ փոխադրման համակարգի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման, ինչպես նաև ներդրումների պլանավորման միջոցով ողջամիտ պահանջարկը բավարարելու՝ համակարգի երկարաժամկետ կարողության համար հավաքագրվող մուտքի վճարների և գերբեռնվածության վճարների մասով: Փոխադրման համակարգը զարգացնելիս՝ անկախ համակարգի օպերատորը պետք է պատասխանատու լինի պլանավորման համար (ներառյալ արտոնագրման ընթացակարգը), նոր ենթակառուցվածքի կառուցումը և շահագործումը: Այդ նպատակով անկախ համակարգի օպերատորը գործում է որպես փոխադրման համակարգի օպերատոր՝ սույն գլխի համաձայն: Փոխադրման համակարգի

սեփականատերը պատասխանատու չէ երրորդ կողմին մուտք տրամադրելու և կառավարելու, և ոչ էլ ներդրումները պլանավորելու համար:

5. Եթե անկախ համակարգի օպերատոր արդեն նշանակվել է, փոխադրման համակարգի սեփականատերը պետք է՝

ա) համապատասխան համագործակցություն և աջակցություն տրամադրի անկախ համակարգի օպերատորին իր պարտավորությունները իրականացնելու համար, այդ թվում պետք է տրամադրի համապատասխան բոլոր տեղեկությունները.

բ) Ֆինանսավորի անկախ համակարգի օպերատորի կողմից որոշված և կարգավորող մարմնի կողմից հաստատված ներդրումները կամ իր համաձայնությունը տա ցանկացած շահագրգիռ անձի, այդ թվում՝ անկախ համակարգի օպերատորի կողմից ֆինանսավորմանը: Համապատասխան ֆինանսական ընթացակարգերը ենթակա են հաստատման կարգավորող մարմնի կողմից: Մինչև նման հաստատումը կարգավորող մարմինը խորհրդակցում է փոխադրման համակարգի սեփականատիրոջ և այլ շահագրգիռ կողմերի հետ.

գ) ապահովի ցանցի ակտիվների հետ կապված պատասխանատվության շրջանակը՝ բացառությամբ անկախ համակարգի օպերատորի գործառույթների հետ կապված պատասխանատվությունները. և

դ) երաշխիքներ տրամադրի աջակցելու համար ցանցի ցանկացած ընդլայնմանը բացառությամբ այն ներդրումների, որոնց դեպքում (բ) կետի համաձայն այն համաձայնություն է տվել ցանկացած շահագրգիռ անձի կողմից, ներառյալ անկախ համակարգի օպերատորի կողմից ֆինանսավորմանը:

6. Կարգավորող մարմնի հետ սերտ համագործակցությամբ՝ մրցակցության պաշտպանության համապատասխան ազգային մարմնին տրվում են պատշաճ լիազորություններ՝ արդյունավետորեն դիտանցել փոխադրման համակարգի սեփականատիրոջը՝ 5-րդ պարբերությամբ սահմանված պարտականությունների իրականացումը:

**Փոխադրման համակարգի սեփականատերերի և պահեստավորման համակարգի օպերատորների տարանջատումը**

1. Եթե նշանակվել է անկախ համակարգի օպերատոր՝ փոխադրման համակարգի օպերատորը և պահեստավորման համակարգի օպերատորը, որոնք ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս են կազմում, պետք է լինեն անկախ՝ առնվազն իրենց կազմակերպարավական ձևով, կառուցվածքով և որոշումների կայացման գործառույթով փոխադրման, բաշխման և պահեստավորման հետ կապ չունեցող այլ գործողություններից:

Սույն հոդվածը վերաբերում է միայն այն պահեստարաններին, որոնք տեխնիկապես և/կամ տնտեսապես անհրաժեշտ են բաժանորդներին մատակարարումներ կատարելու նպատակով համակարգի արդյունավետ հասանելիություն ապահովելու համար՝ 33-րդ հոդվածի համաձայն:

2. 1-ին պարբերությունում նշված փոխադրման համակարգի սեփականատիրոջ և պահեստավորման համակարգի օպերատորի անկախությունը ապահովելու համար՝ կիրառվում են հետևյալ նվազագույն չափանիշները՝

ա) փոխադրման համակարգի սեփականատիրոջ և պահեստավորման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձինք չպետք է մասնակցեն ինտեգրված բնական գազի բնագավառում այն տնտեսվարող սուբյեկտի կառույցների գործունեությանը, որն անմիջականորեն կամ անուղղակի կերպով պատասխանատու է բնական գազի ամենօրյա արտադրման և մատակարարման համար.

բ) պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ փոխադրման համակարգի սեփականատիրոջ և պահեստավորման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձանց մասնագիտական շահերը հաշվի առնվեն այնպես, որ նրանք կարողանան գործել անկախ.

գ) պահեստավորման համակարգի օպերատորը պետք է իրավունք ունենա բնական գազի բնագավառում ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից անկախ արդյունավետ որոշումներ կայացնել՝ կապված ցանցի շահագործման, պահպանման և կատարելագործման համար անհրաժեշտ ակտիվների հետ: Սա չպետք է խանգարի համապատասխան համակարգող մեխանիզմների գոյությանը, ապահովելու համար, որ ակտիվների եկամտաբերության հետ



կապված մայր ընկերության տնտեսական և կառավարման վերահսկման իրավունքները, որոնք հոդված 41(6)-ին համապատասխան անուղղակի կերպով կարգավորվում են դուստր ընկերությունում, պաշտպանված լինեն: Մասնավորապես, սա հնարավորություն կտա մայր ընկերությանը հաստատել պահեստավորման համակարգի օպերատորի տարեկան ֆինանսական պլանը, կամ ցանկացած համարժեք փաստաթուղթ, և իր դուստր ընկերության պարտքային պարտավորության մակարդակների վրա դնել համընդհանուր սահմանաչափեր: Դա չպետք է թույլ տա մայր ընկերությանը ցուցումներ տալ կապված ամենօրյա գործառույթների, ինչպես նաև առանձին որոշումների կայացման հետ, որոնք վերաբերում են պահեստարանների կառուցմանը կամ ընդլայնմանը, եթե դա չի գերազանցում հաստատված ֆինանսական պլանի կամ ցանկացած այլ համարժեք փաստաթղթի ժամկետները, և

դ) փոխադրման համակարգի օպերատորը պետք է կազմի պարտավորությունների կատարման ծրագիր, որով սահմանվում են խտրական վարքագծի բացառումն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցները և ապահովի, որ այդ ծրագրի իրականացումը դիտանցվի պատշաճ կերպով: Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ այդ նպատակներին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Տարեկան զեկույցը, որը սահմանում է իրականացված միջոցառումները, ներկայացվում է այն անձի կամ մարմնի կողմից, որը պատասխանատու է կարգավորող մարմնի պարտավորությունների կատարման ծրագրի դիտանցման համար և պետք է հրապարակվի:

3. Հանձնաժողովը կարող է ուղեցույցեր ընդունել՝ ապահովելու փոխադրման համակարգի սեփականատիրոջ և պահեստավորման համակարգի օպերատորի կողմից սույն հոդվածի 2-րդ պարբերության լիարժեք և արդյունավետ իրականացումը: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

**Փոխադրման համակարգի օպերատորների և փոխադրման համակարգի սեփականատերերի կողմից պահպանվող գաղտնիությունը**

1. Առանց հակասելու 30-րդ հոդվածին կամ խախտելու տեղեկությունների հրապարակման՝ օրենքով սահմանված որևէ այլ իրավական պարտականություն՝ փոխադրման, պահեստավորման և/կամ հեղուկացված բնական գազի համակարգի ցանկացած օպերատոր և փոխադրման համակարգի ցանկացած սեփականատեր պետք է պահպանի իր գործունեության իրականացման ընթացքում ձեռք բերված առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիությունը և կանխի սեփական գործողությունների վերաբերյալ այն տեղեկությունների հրապարակումը, որոնք, խտրական ձևով հրապարակվելու դեպքում, կարող են շահեկան լինել առևտրային տեսանկյունից: Մասնավորապես այն առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունները չպետք է տրամադրի տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող սուբյեկտը, եթե դա անհրաժեշտ չէ առևտրային գործարք իրականացնելու համար: Տեղեկությունների տարանջատման կանոնների լիարժեք պահպանումը ապահովելու համար, անդամ պետությունները ապահովում են, որ փոխադրման համակարգի սեփականատերը, իսկ համատեղ օպերատորի դեպքում՝ բաշխման համակարգի օպերատորը և տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող սուբյեկտը չօգտվեն համատեղ ծառայություններից, ինչպես օրինակ համատեղ իրավական ծառայություններ՝ բացի զուտ վարչական և SS գործառույթներից:

2. Փոխադրման, պահեստավորման և/կամ հեղուկացված բնական գազի օպերատորները փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտների կողմից բնական գազի վաճառքի կամ գնման համատեքստում չպետք է չարաշահեն առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունները, որոնք ստացվել են երրորդ անձանց կողմից համակարգի մատչելիությունը ապահովելու կամ դրա համար բանակցելու համատեքստում:

3. Շուկայի արդյունավետ մրցակցության և գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է հրապարակվի: Այդ պարտականությունը չի հակասում առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիության պահպանությանը:

**ՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՆԿԱԽ ՕՊԵՐԱՏՈՐ**

*Հոդված 17*

**Ակտիվները, սարքավորումները, աշխատակազմը և ինքնությունը**

1. Փոխադրման համակարգի օպերատորները պետք է զինվեն սույն Հրահանգով սահմանված իրենց պարտավորությունների կատարման և գազի փոխադրման գործողության իրականացման համար անհրաժեշտ բոլոր՝ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով, մասնավորապես՝

ա) գազի փոխադրման գործողության համար անհրաժեշտ ակտիվները՝ ներառյալ փոխադրման համակարգը տնօրինում է փոխադրման համակարգի օպերատորը.

բ) գազի փոխադրման գործողության՝ ներառյալ բոլոր կորպորատիվ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ անձնակազմին վարձում է փոխադրման համակարգի օպերատորը,

գ) արգելվում է անձնակազմի վարձակալության հանձնումը և ծառայությունների տրամադրումը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտին կամ անձնակազմի վարձակալությունը և ծառայությունների ստացումը նման տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտից: Այնուամենայնիվ, փոխադրման համակարգի օպերատորը կարող է ծառայություններ տրամադրել ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտին, քանի դեռ՝

i) այդ ծառայությունների տրամադրումը չի առաջացնում խտրականության դրսևորում համակարգն օգտագործողների միջև, միևնույն ժամկետներով և պայմաններով մատչելի է բոլոր համակարգն օգտագործողներին և չի սահմանափակում, խաթարում կամ կանխում մրցակցությունը արտադրության կամ մատակարարման ընթացքում. և

ii) այդ ծառայությունների տրամադրման ժամկետները և պայմանները հաստատվում են կարգավորող մարմնի կողմից.

դ) առանց հակասելու 20-րդ հոդվածով սահմանված վերահսկիչ մարմնի որոշումներին՝ փոխադրման համակարգի օպերատորի կողմից համապատասխան հայցը ստանալուց հետո, ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կողմից փոխադրման

համակարգի օպերատորի համար պատշաճ ժամկետում ապահովվում է համապատասխան ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը հետագա ներդրումային ծրագրերի և (կամ) առկա ակտիվների փոխարինման համար:

2. Գազի փոխադրման գործողությունը, ի հավելումն 13-րդ հոդվածում թվարկվածների, ներառում է առնվազն հետևյալ խնդիրները՝

ա) որպես հաղորդման համակարգի օպերատորի ներկայացուցիչ հանդես գալը և երրորդ կողմերի և կարգավորող մարմինների հետ կապերի ապահովումը,

բ) որպես փոխադրման համակարգի օպերատորի ներկայացուցիչ հանդես գալը Գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցի (Գազի ՓՀՕԵՑ) շրջանակներում.

գ) համակարգն օգտագործողների կամ համակարգն օգտագործողների դասերի միջև, ոչ խտրական հիմունքներով, երրորդ կողմերի մատչելիության շնորհումը և կառավարումը,

դ) փոխադրման համակարգի հետ կապված բոլոր տեսակի վճարների հավաքումը՝ ներառյալ մատչելիության վճարներ, օժանդակ ծառայությունների համար հավասարակշռող վճարներ, ինչպես օրինակ գազի մշակման, ծառայությունների գնման վճարներ (հավասարակշռող ծախսեր, էներգետիկ կորուստներ).

ե) ապահով, արդյունավետ և տնտեսապես շահավետ փոխադրման համակարգի շահագործումը, տեխնիկական սպասարկումը և զարգացումը,

զ) համակարգի՝ հիմնավորված պահանջը բավարարելու երկարաժամկետ կարողությունն ապահովող և մատակարարման անվտանգությունը երաշխավորող ներդրումների պլանավորումը.

է) համապատասխան համատեղ ձեռնարկությունների ստեղծում՝ ներառյալ մեկ կամ մի քանի փոխադրման օպերատորների, գազի բորսաների և համապատասխան այլ սուբյեկտների հետ՝ հետամուտ լինելով տարածքային շուկաների զարգացման կամ ազատականացման գործընթացի աջակցման նպատակների իրականացմանը. և

ը) բոլոր կորպորատիվ ծառայությունները՝ ներառյալ իրավաբանական ծառայությունները, հաշվապահական հաշվառումը և ՏՏ ծառայությունները:

3. Փոխադրման համակարգի օպերատորների գործունեությունը պետք է կազմակերպվի Խորհրդի 68/151/ԵՏՀ հրահանգի [18] 1-ին հոդվածում նշված իրավական ձևով:

4. Փոխադրման համակարգի օպերատորն, իր կորպորատիվ ինքնության ստեղծման, հաղորդակցության, ապրանքանշանի մեջ կամ իր տարածքներում, չպետք է շփոթություն ստեղծի կապված՝ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի առանձին ինքնության հետ:

5. Փոխադրման համակարգի օպերատորը SS համակարգերը կամ սարքավորումները, ֆիզիկական տարածքները և մատչելիության անվտանգության համակարգերը չպետք է կիսի ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ սուբյեկտի հետ, և կամ SS համակարգերի կամ սարքավորումների և մատչելիության անվտանգության համակարգերի համար չպետք է օգտվի միևնույն խորհրդատուների կամ արտաքին կապալառուների ծառայություններից:

6. Փոխադրման համակարգի օպերատորների հաշիվների աուդիտն իրականացվում է այն աուդիտորի կողմից, որն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի համար չի իրականացրել աուդիտ:

### *Հոդված 18*

#### **Փոխադրման համակարգի օպերատորի անկախությունը**

1. Առանց հակասելու 20–րդ հոդվածով սահմանված վերահսկիչ մարմնի որոշումներին՝ փոխադրման համակարգի օպերատորն ունի.

ա) փոխադրման համակարգի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման համար անհրաժեշտ ակտիվների հետ կապված որոշումների կայացման գործող իրավունքներ՝ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից անկախ, և

բ) կապիտալի շուկայում դրամական միջոցների հայթայթման լիազորություն, մասնավորապես՝ փոխառություն վերցնելու և կապիտալի մեծացման միջոցով:

2. Փոխադրման համակարգի օպերատորը պետք է մշտապես գործի այնպես, որ ապահովի փոխադրման գործողության պատշաճ և արդյունավետ իրականացման համար իրեն անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը և զարգացնի ու պահպանի արդյունավետ, ապահով և տնտեսապես շահավետ փոխադրման համակարգ:

3. Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի՝ արտադրության կամ մատակարարման գործառույթներ իրականացնող դուստր ձեռնարկությունները որևէ

ուղղակի կամ անուղղակի մասնաբաժին չունեն փոխադրման համակարգի օպերատորի կապիտալում: Փոխադրման համակարգի օպերատորը որևէ ուղղակի կամ անուղղակի մասնաբաժին չունի ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի արտադրության կամ մատակարարման գործառույթներ իրականացնող որևէ դուստր ձեռնարկության կապիտալում, ինչպես նաև շահաբաժիններ կամ որևէ այլ ֆինանսական շահույթ չի ստանում այդ դուստր ձեռնարկությունից:

4. Փոխադրման համակարգի օպերատորի կառավարման ընդհանուր կառուցվածքը և կորպորատիվ կանոնադրությունն ապահովում են փոխադրման համակարգի օպերատորի արդյունավետ անկախությունը՝ համաձայն սույն գլխի: Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չի սահմանում փոխադրման համակարգի օպերատորի մրցակցային վարքագիծը՝ կապված նրա ամենօրյա գործունեության և ցանցի կառավարման կամ, 22-րդ հոդվածի համաձայն մշակված՝ ցանցի զարգացման տասնամյա ծրագրի նախապատրաստման համար անհրաժեշտ գործողությունների հետ:

5. Սույն Հրահանգի 13-րդ հոդվածում և 17(2) հոդվածում նշված իրենց խնդիրներն իրագործելիս՝ և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 14(1)(ա) հոդվածի, 16(2), (3) և (5) հոդվածի, 18(6) հոդվածի և 21(1) հոդվածի համապատասխան՝ փոխադրման համակարգի օպերատորը խտրականություն չի դնում տարբեր անձանց և սուբյեկտների միջև և չի սահմանափակում, խաթարում կամ կանխում մրցակցությունը արտադրության կամ մատակարարման գործընթացներում:

6. Փոխադրման համակարգի օպերատորի և ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի միջև առևտրային կամ ֆինանսական բոլոր հարաբերություններում՝ ներառյալ փոխադրման համակարգի օպերատորի կողմից ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտին վարկեր տրամադրելիս, պետք է ապահովվի համապատասխանությունը շուկայի պայմաններին: Փոխադրման համակարգի օպերատորը մանրամասն տվյալներ է վարում նմանատիպ առևտրային կամ ֆինանսական հարաբերությունների վերաբերյալ և, պահանջի դեպքում, ապահովում դրանց մատչելիությունը կարգավորող մարմնի համար:

7. Փոխադրման համակարգի օպերատորը կարգավորող մարմնի հաստատմանն է ներկայացնում ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի հետ առևտրային կամ ֆինանսական հարաբերությունների մասին բոլոր համաձայնագրերը:

8. Փոխադրման համակարգի օպերատորը կարգավորող մարմինն տեղեկացնում է հետագա ներդրումային ծրագրերի և (կամ) գոյություն ունեցող ակտիվների փոխարինման համար առկա՝ 17(1)(դ) հոդվածում նշված ֆինանսական ռեսուրսների մասին:

9. Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը զերծ է մնում փոխադրման համակարգի օպերատորի՝ սույն գլխում նշված պարտավորությունները կատարելուն խոչընդոտող կամ հակասող որևէ գործողությունից, և փոխադրման համակարգի օպերատորից չի պահանջում այդ պարտավորություններն իրականացնելիս թույլտվություն հայցել ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից:

10. Այն տնտեսվարող սուբյեկտը, որին կարգավորող մարմինը հավաստել է որպես սույն գլխի պահանջները բավարարող, հաստատվում և նշանակվում է տվյալ անդամ պետության կողմից որպես փոխադրման համակարգի օպերատոր: Կիրառվում է սույն Հրահանգի 10-րդ հոդվածում և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում կամ սույն Հրահանգի 11-րդ հոդվածում սահմանված արտոնագրման ընթացակարգը:

### *Հոդված 19*

#### **Աշխատակազմի անկախությունը և փոխադրման համակարգի օպերատորի կառավարումը**

1. Փոխադրման համակարգի օպերատորի՝ կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) վարչական մարմինների անդամների նշանակման և աշխատանքային պայմանագրի երկարաձգման, աշխատանքային պայմանների՝ ներառյալ վարձատրության, և պաշտոնավարման ժամկետի դադարեցման հետ կապված որոշումները կայացվում են 20-րդ հոդվածի համաձայն նշանակված փոխադրման համակարգի օպերատորի վերահսկիչ մարմնի կողմից:

2. Վերահսկիչ մարմնի կողմից նշանակման և պայմանագրի ժամկետի երկարաձգման համար որպես գործադիր կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) որպես փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամներ նշանակված անձանց ինքնության և նրանց աշխատանքային ժամկետը, տևողությունը և պաշտոնավարման ժամկետի դադարեցումը կարգավորող պայմանների և նման պաշտոնավարման ժամկետը դադարեցնող առաջարկվող որևէ որոշման համար հիմք հանդիսացող պատճառների մասին տեղեկացվում է կարգավորող մարմնին: 1-ին

պարբերությունում նշված այդ պայմանները և որոշումները պարտադիր են դառնում միայն, եթե կարգավորող մարմինը առարկություններ չի ներկայացնում՝ այդ մասին տեղեկացնելուց հետո երեք շաբաթվա ընթացքում:

Կարգավորող մարմինը կարող է առարկություններ ներկայացնել 1-ին պարբերությունում նշված որոշումների վերաբերյալ այն դեպքում, երբ՝

ա) կասկածներ են առաջանում՝ կապված կառավարման համար պատասխանատու նշանակված անձի և (կամ) վարչական մարմինների անդամի մասնագիտական անկախության հետ. կամ

բ) պաշտոնավարման ժամկետի վաղաժամ դադարեցման դեպքում կասկածներ են առաջանում՝ կապված նման վաղաժամ դադարեցման հիմնավորման հետ:

3. Սույն պարբերությունով նախատեսված կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամների նշանակումից հետո, երեք տարի ժամկետով, արգելվում է, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մասնագիտական որևէ պաշտոնի, լիազորությունների կամ պատասխանատվության, շահերի կամ գործարար հարաբերությունների իրականացնել ուղղահայաց ինտեգրված ձեռնարկության կամ դրա որևէ մասի կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ՝ բացառությամբ փոխադրման համակարգի օպերատորի:

4. Կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամները և փոխադրման համակարգի օպերատորի աշխատակիցները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չեն ստանձնում մասնագիտական որևէ պաշտոն կամ պատասխանատվություն, չունեն շահ կամ գործարար հարաբերություն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտի կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ:

5. Կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամները և փոխադրման համակարգի օպերատորի աշխատակիցները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չեն ստանձնում մասնագիտական որևէ պաշտոն կամ պատասխանատվություն, չունեն շահ կամ գործարար հարաբերություն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտի կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ: Նրանց վարձատրությունը կախված չէ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի



գործունեությունից կամ արդյունքներից՝ ի տարբերություն փոխադրման համակարգի օպերատորի գործունեության կամ արդյունքների:

6. Կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամների կողմից իրենց պաշտոնավարման ժամկետի վաղաժամ դադարեցման դեմ որևէ բողոքի դեպքում, երաշխավորվում են կարգավորող մարմինն բողոքարկելու գործող իրավունքները:

7. Փոխադրման համակարգի օպերատորի ներսում իրենց պաշտոնավարման ժամկետի դադարեցումից հետո ոչ պակաս, քան չորս տարվա ընթացքում, դրա կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) դրա վարչական մարմիններին անդամները չպետք է ստանձնեն որևէ մասնագիտական պաշտոն կամ պատասխանատվություն, ունենան որևէ շահ կամ գործարար հարաբերություն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ սուբյեկտի՝ բացառությամբ փոխադրման համակարգի օպերատորի, կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ:

8. 3-րդ պարբերությունը կիրառելի է կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամների մեծ մասի նկատմամբ:

Կառավարման համար պատասխանատու այն անձինք և (կամ) փոխադրման համակարգի օպերատորի վարչական մարմինների այն անդամները, որոնք չեն կարգավորվում 3-րդ պարբերությունով, իրենց նշանակումից առնվազն վեց ամիս առաջ, ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի ներսում պետք է իրականացրած չլինեն կառավարման կամ նմանատիպ որևէ այլ գործունեություն:

Սույն պարբերության առաջին ենթապարբերությունը և 4-7-րդ պարբերությունները կիրառելի են գործադիր կառավարման անդամ հանդիսացող բոլոր անձանց և ցանցի շահագործման, տեխնիկական սպասարկման կամ զարգացման հետ կապված հարցերի վերաբերյալ նրանց ուղղակիորեն հաշվետու անձանց համար:

## Հոդված 20

### Վերահսկիչ մարմինը

1. Փոխադրման համակարգի օպերատորն ունի վերահսկիչ մարմին, որը պատասխանատու է այն որոշումների կայացման համար, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ փոխադրման համակարգի օպերատորի ներսում բաժնետերերի ակտիվների արժեքի վրա, մասնավորապես՝ այն որոշումների, որոնք կապված են տարեկան և երկարաժամկետ ֆինանսական պլանների, փոխադրման համակարգի օպերատորի պարտքային պարտավորության մակարդակի և բաժնետերերին բաշխվող շահաբաժինների չափի հաստատման հետ: Վերահսկիչ մարմնի իրավասությունների շրջանակներում ընդգրկվող որոշումները չեն ներառում բոլոր այն որոշումները, որոնք կապված են փոխադրման համակարգի օպերատորի ամենօրյա գործունեության և ցանցի կառավարման և 22-րդ հոդվածի համաձայն մշակված՝ ցանցի զարգացման տասնամյա ծրագրի նախապատրաստման համար անհրաժեշտ գործողությունների հետ:

2. Վերահսկիչ մարմինը բաղկացած է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը ներկայացնող անդամներից, երրորդ կողմի բաժնետերերին ներկայացնող անդամներից և, անդամ պետությունների համապատասխան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ այլ շահագրգիռ կողմերից, ինչպես օրինակ՝ հաղորդման համակարգի օպերատորի աշխատակիցներին ներկայացնող անդամներից:

3. 19(2) հոդվածի առաջին ենթապարբերությունը և 19(3)–(7) հոդվածը կիրառելի են վերահսկիչ մարմնի անդամների առնվազն կեսից մեկով պակաս անդամների նկատմամբ:

19(2) հոդվածի երկրորդ ենթապարբերության բ) կետը կիրառելի է վերահսկիչ մարմնի բոլոր անդամների համար:

## Հոդված 21

### **Պարտավորությունների կատարման ծրագիրը և պարտավորությունների կատարման համար պատասխանատուն**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ փոխադրման համակարգի օպերատորը կազմի և իրականացնի պարտավորությունների կատարման ծրագիր, որով սահմանվում են խտրական վարքագծի բացառումն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցները և ապահովի, որ այդ ծրագրին համապատասխանությունը դիտանցվի պատշաճ կերպով:

Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ այդ նպատակներին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Այն հաստատվում է կարգավորող մարմնի կողմից: Առանց հակասելու ազգային կարգավորող մարմնի լիազորություններին՝ ծրագրին համապատասխանությունը անկախ կերպով դիտանցվում է պարտավորությունների կատարման համար պատասխանատուի կողմից:

2. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն նշանակվում է վերահսկիչ մարմնի կողմից, որը պետք է հաստատվի կարգավորող մարմնի կողմից: Կարգավորող մարմինը կարող է հրաժարվել պարտավորությունների կատարման համար պատասխանատուի նշանակումը հաստատելուց միայն վերջինիս անկախության կամ մասնագիտական կարողությունների բացակայության պատճառով: Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն կարող է լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձ: 19(2) – (8) հոդվածը կիրառվում է պարտավորությունների կատարման համար պատասխանատուի կողմից:

3. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն պատասխանատու է՝

ա) պարտավորությունների կատարման ծրագրի իրականացման դիտանցման,

բ) տարեկան հաշվետվության մշակման, պարտավորությունների կատարման ծրագրի իրականացման նպատակով ձեռնարկված միջոցների սահմանման և դրա՝ կարգավորող մարմնին ներկայացման,

գ) վերահսկիչ մարմնին զեկուցման և պարտավորությունների կատարման ծրագրի և դրա իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման,

դ) կարգավորող մարմնին պարտավորությունների կատարման ծրագրի իրականացման ընթացքում կատարված էական խախտումների մասին տեղեկացման և

ե) կարգավորող մարմնին ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և փոխադրման համակարգի օպերատորի միջև առևտրային և ֆինանսական հարաբերությունների մասին զեկուցման համար:

4. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն կարգավորող մարմնին է ներկայացնում ներդրումային պլանի կամ ցանցում առանձին ներդրումների մասին առաջարկվող որոշումները: Այս գործառույթը կատարվում է առնվազն, երբ փոխադրման համակարգի օպերատորի կառավարման և (կամ) իրավասու վարչական մարմինը նշված որոշումները ներկայացնում է վերահսկիչ մարմնին:

5. Եթե ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը ընդհանուր ժողովում կամ վերահսկիչ մարմնի՝ իր կողմից նշանակված անդամների քվեարկությամբ, կանխել է որոշման կայացումը՝ արդյունքում կանխելով կամ ուշացնելով այն ներդրումների կատարումը, որոնք, ցանցի զարգացման տասնամյա ծրագրով նախատեսվում էին իրականացվել հաջորդ երեք տարիների ընթացքում, ապա պարտավորությունների կատարման համար պատասխանատուն այդ մասին զեկուցում է կարգավորող մարմնին, որն, այնուհետև, գործում է 22-րդ հոդվածի համաձայն:

6. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուի մանդատը կամ աշխատանքի ընդունման պայմանները կարգավորող պայմանները՝ ներառյալ վերջինիս մանդատի տևողությունը պետք է հաստատվեն կարգավորող մարմնի կողմից: Այդ պայմանները՝ ներառյալ պարտավորությունների կատարման համար պատասխանատուին՝ իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսների տրամադրումն ապահովում են նրա անկախությունը: Իր մանդատի ընթացքում, պարտավորությունների կատարման համար պատասխանատուն, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չի ստանձնում մասնագիտական որևէ այլ պաշտոն, պարտավորություն կամ չի հետապնդում որևէ շահ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի ներսում կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ:

7. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն, պարբերաբար, բանավոր կամ գրավոր զեկուցում է կարգավորող մարմնին և իրավունք ունի, պարբերաբար, բանավոր կամ գրավոր զեկուցելու փոխադրման համակարգի օպերատորի վերահսկիչ մարմնին:

8. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն կարող է մասնակցել փոխադրման համակարգի օպերատորի կառավարման և (կամ) իրավասու վարչական մարմինների և վերահսկիչ մարմնի բոլոր հանդիպումներին և ընդհանուր ժողովին: Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն մասնակցում է այն բոլոր հանդիպումներին, որոնք առնչվում են հետևյալ հարցերի քննարկմանը՝

ա) ցանցի մատչելիության պայմաններ, ինչպես սահմանված է թիվ 715/2009 (ԵՀ) կանոնակարգում, մասնավորապես՝ սակագների, երրորդ կողմի մատչելիության ծառայությունների, կարողությունների բաշխման և գերբեռնվածության կառավարման, թափանցիկության, հավասարակշռող և երկրորդային շուկաների վերաբերյալ:

բ) փոխադրման համակարգի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման նպատակով իրականացված ծրագրեր՝ ներառյալ տրանսպորտային նոր կապերում, կարողությունների ընդլայնման և առկա կարողությունների օպտիմալացման մեջ ներդրումներ.

գ) փոխադրման համակարգի շահագործման համար անհրաժեշտ էներգիայի գնում կամ վաճառք:

9. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն դիտանցում է փոխադրման համակարգի օպերատորի պարտավորությունների կատարումը՝ համաձայն 16-րդ հոդվածի:

10. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուի համար պետք է մատչելի լինեն համապատասխան բոլոր տվյալները և փոխադրման համակարգի օպերատորի գրասենյակները, ինչպես նաև իր առջև դրված խնդիրների իրագործման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

11. Կարգավորող մարմնի կողմից նախնական հաստատում ստանալուց հետո վերահսկիչ մարմինը կարող է աշխատանքից ազատել պարտավորությունների կատարման համար պատասխանատուին: Այն աշխատանքից ազատում է պարտավորությունների կատարման համար պատասխանատուին անկախության կամ մասնագիտական կարողությունների բացակայության պատճառով՝ կարգավորող մարմնի պահանջով:

12. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն իրավունք ունի մուտք գործել հաղորդման համակարգի օպերատորի գրասենյակներ՝ առանց այդ մասին նախապես տեղեկացնելու:

## *Հոդված 22*

### **Ցանցի զարգացումը և ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման լիազորությունները**

1. Յուրաքանչյուր տարի, փոխադրման համակարգի օպերատորը, համապատասխան շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո, կարգավորող մարմնին է ներկայացնում գոյություն ունեցող և կանխատեսվող առաջարկի և պահանջարկի հիման վրա կազմված ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը: Ցանցի զարգացման ծրագրում ընդգրկված են

արդյունավետ միջոցառումներ՝ նպատակաուղղված համակարգի համապատասխանության և մատակարարման անվտանգության երաշխավորմանը:

2. Ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը, մասնավորապես.

ա) շուկայի մասնակիցներին ցույց է տալիս փոխադրման այն հիմնական ենթակառուցվածքը, որը պետք է կառուցել կամ կատարելագործել հաջորդ տաս տարիների ընթացքում,

բ) պարունակում է ներդրումներ, որոնց մասին արդեն որոշում ընդունված է և սահմանում է այն նոր ներդրումները, որոնք պետք է իրականացվեն հաջորդ երեք տարիների ընթացքում. և

գ) բոլոր ներդրումային ծրագրերի համար նախատեսում է ժամկետներ:

3. Ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը մշակելիս՝ փոխադրման համակարգի օպերատորը խելամիտ ենթադրություններ է անում արտադրության, մատակարարման, սպառման և այլ երկրների հետ փոխանակման զարգացման մասին՝ հաշվի առնելով տարածաշրջանային և համայնքի մասշտաբով ցանցերի ներդրումային պլանները, ինչպես նաև պահեստավորման և հեղուկացված բնական գազի վերագազավորման կայանների ներդրումային պլանները:

4. Կարգավորող մարմինը, հստակ և թափանցիկ կերպով, ցանցի զարգացման տասնամյա ծրագրի մասին խորհրդակցում է բոլոր իրական և պոտենցիալ համակարգն օգտագործողների հետ: Իրենց պոտենցիալ համակարգն օգտագործող հայտարարող անձանցից կամ տնտեսվարող սուբյեկտներից կարող է պահանջվել հիմնավորել իրենց այդպիսին լինելը: Կարգավորող մարմինը հրապարակում է խորհրդակցության գործընթացի արդյունքը, մասնավորապես՝ ներդրումների կատարման հնարավոր կարիքները:

5. Կարգավորող մարմինը ստուգում է, թե արդյոք ցանցի զարգացման տասնամյա ծրագիրն անդրադառնում է խորհրդակցության գործընթացի ընթացքում քննարկված բոլոր ներդրումային կարիքներին, և թե արդյոք այն համապատասխանում է թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 8(3)(բ) հոդվածում նշված ոչ պարտադիր, Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման տասնամյա ծրագրին (Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագիր): Եթե որևէ կասկած է առաջանում՝ կապված Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրին անհամապատասխանության հետ, ապա կարգավորող մարմինը խորհրդակցում է Գործակալության հետ: Կարգավորող մարմինը կարող է փոխադրման

համակարգի օպերատորից պահանջել փոփոխել ցանցի զարգացման իր տասնամյա ծրագիրը:

6. Կարգավորող մարմինը դիտանցում և գնահատում է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի իրականացումը:

7. Այն դեպքերում, երբ փոխադրման համակարգի օպերատորը չի կատարում այն ներդրումը, որը ցանցի զարգացման տասնամյա ծրագրով նախատեսվում էր իրականացնել հետագա երեք տարիների ընթացքում, բացառությամբ գերակա անկառավարելի պատճառների առկայությամբ դեպքերի, ապա անդամ պետություններն ապահովում են կարգավորող մարմնից պահանջվող հետևյալ միջոցառումներից առնվազն մեկի իրականացումը՝ ապահովելու, որ տվյալ ներդրումը կատարված լինի, եթե նման ներդրումը, ցանցի զարգացման տասնամյա ամենավերջին ծրագրից ելնելով, դեռևս ունի էական նշանակություն՝

ա) փոխադրման համակարգի օպերատորից պահանջել կատարել տվյալ ներդրումները,

բ) կազմակերպել մրցութային ընթացակարգ տվյալ ներդրման հետ կապված, որը բաց կլինի ցանկացած ներդրողի համար. կամ

գ) փոխադրման համակարգի օպերատորից պահանջել ընդունել կապիտալի ավելացումը՝ անհրաժեշտ ներդրումները ֆինանսավորելու նպատակով և անկախ ներդրողներին թույլատրել մասնակցել կապիտալի ձևավորմանը:

Երբ կարգավորող մարմինն օգտվում է առաջին ենթապարբերության բ) կետում նշված իր լիազորություններից, ապա այն փոխադրման համակարգի օպերատորից կարող է պահանջել համաձայնել ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հետ.

ա) ֆինանսավորում որևէ երրորդ անձի կողմից,

բ) կառուցում որևէ երրորդ անձի կողմից,

գ) իրեն առնչվող նոր ակտիվների ստեղծում,

դ) իրեն առնչվող նոր ակտիվների շահագործում:

Փոխադրման համակարգի օպերատորը պետք է ներդրողներին տրամադրի ներդրման կատարման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, փոխադրման ցանցին միացնի նոր ակտիվները և, առհասարակ, առավելագույնս ջանք գործադրի ներդրումային ծրագրի իրականացմանն օժանդակելու համար:

Համապատասխան ֆինանսական ընթացակարգերը հաստատվում են կարգավորող մարմնի կողմից:

8. Եթե կարգավորող մարմինն իրականացրել է 7-րդ պարբերության առաջին ենթապարբերությունով սահմանված լիազորությունները, ապա համապատասխան սակագնային կարգավորումները ներառում են տվյալ ներդրումների ծախսերը:

### *Հոդված 23*

#### **Պահեստարանները, հեղուկացված բնական գազի վերագազավորման կայանները և առանձին բաժանորդներն փոխադրման համակարգին միացնելու հետ կապված որոշումների կայացման լիազորությունները**

1. Փոխադրման համակարգի օպերատորը սահմանում և հրապարակում է թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր պահեստարանները, հեղուկացված բնական գազի վերագազավորման կայանները և արդյունաբերական բաժանորդներին փոխադրման համակարգին ոչ խտրական հիմունքներով միացնելու համար: Այդ ընթացակարգերը հաստատվում են կարգավորող մարմնի կողմից:

2. Փոխադրման համակարգի օպերատորն իրավունք չունի մերժել նոր պահեստարանի, հեղուկացված բնական գազի վերագազավորման կայանը կամ արդյունաբերական բաժանորդներին միացումը գոյություն ունեցող ցանցի կարողությունների հնարավոր հետագա սահմանափակումների կամ պահանջվող կարողության ընդլայնման հետ կապված լրացուցիչ ծախսերի հիմքով: Փոխադրման համակարգի օպերատորը նոր միացման համար ապահովում է բավարար մուտքի և ելքի կարողություն:



**ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ**

*Հոդված 24*

**Բաշխման համակարգի օպերատորների նշանակումը**

Անդամ պետությունները նշանակում են, կամ պահանջում այն տնտեսվարող սուբյեկտներից, որոնց պատկանում են բաշխման համակարգերը կամ որոնք պատասխանատու են դրանց համար, նշանակել մեկ կամ մի քանի բաշխման համակարգի օպերատորներ, անդամ պետությունների կողմից որոշված ժամկետով՝ հաշվի առնելով արդյունավետության և տնտեսական հավասարակշռության նկատառումները, և ապահովում են , որ այդ օպերատորները գործեն համաձայն 25, 26, և 27-րդ հոդվածների:

*Հոդված 25*

**Բաշխման համակարգի օպերատորների խնդիրները**

1. Յուրաքանչյուր բաշխման համակարգի օպերատոր պատասխանատու է համակարգի՝ գազի բաշխման հիմնավորված պահանջները բավարարելու երկարաժամկետ կարողությունն ապահովելու համար:
2. Ցանկացած պարագայում, բաշխման համակարգի օպերատորը չպետք է խտրականություն դնի համակարգից օգտվողների կամ համակարգից օգտվողների դասերի միջև, մասնավորապես ի օգուտ իր հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտի:
3. Յուրաքանչյուր բաշխման համակարգի օպերատոր պետք է տրամադրի այլ բաշխման, փոխադրման, ԲՍԳ-ի, և/կամ պահեստավորման համակարգի օպերատորին բավարար տեղեկություններ, ապահովելու համար, որ բնական գազի փոխանցումն ու պահեստավորումը իրականացվում է փոխկապակցված համակարգի անվտանգ և արդյունավետ գործունեությանը համահունչ եղանակով:
4. Յուրաքանչյուր բաշխման համակարգի օպերատոր պետք է համակարգից օգտվողներին տրամադրի տեղեկություններ, որոնք նրանց անհրաժեշտ են համակարգի՝ ներառյալ դրանից օգտվելու բավարար մատչելիությունն ապահովելու համար:

5. Եթե բաշխման համակարգի օպերատորը պատասխանատու է բաշխման համակարգի հավասարակշռության համար, ապա նրա կողմից այդ նպատակով ընդունված կանոնները, այդ թվում էներգիայի անհավասարակշռության պատճառով համակարգից օգտվողներից վճարների գանձման կանոնները պետք է լինեն անկողմնակալ, թափանցիկ և ոչ խտրական:

Բաշխման համակարգի օպերատորների կողմից նմանատիպ ծառայությունների մատուցման ժամկետներն ու պահանջները՝ ներառյալ կանոններն ու սակագները, պետք է սահմանվեն ոչ խտրական և ծախսերն արտահայտող եղանակով համաձայն հոդված 41(6)–ում նշված մեթոդաբանության և պետք է հրապարակվեն:

## *Հոդված 26*

### **Բաշխման համակարգի օպերատորների տարանջատումը**

1. Եթե բաշխման համակարգի օպերատորը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մասն է կազմում, ապա այն պետք է անկախ լինի բաշխման հետ առնչություն չունեցող գործառույթներից առնվազն իր իրավական ձևով, կառուցվածքով և որոշում կայացնելու առումով: Այդ կանոնները չպետք է ստեղծեն բաշխման համակարգի ակտիվների տնօրինումը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից առանձնացնելու պարտավորություն:

2. 1–ին պարբերությունում ներկայացված պահանջներից բացի, եթե բաշխման համակարգի օպերատորը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մասն է կազմում, ապա այն պետք է անկախ լինի բաշխման հետ առնչություն չունեցող գործառույթներից իր կառուցվածքով և որոշում կայացնելու առումով: Վերոնշյալին հասնելու համար կիրառվում են հետևյալ նվազագույն չափանիշները.

ա) բաշխման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձինք չպետք է մասնակցեն ինտեգրված բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտի այն կառույցների գործունեությանը, որոնք անմիջականորեն կամ անուղղակի կերպով պատասխանատու են բնական գազի ամենօրյա արտադրման, հաղորդման և մատակարարման համար.

բ) համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն, ապահովելու համար, որ բաշխման համակարգի օպերատորի կառավարման մասով պատասխանատու անձանց

մասնագիտական շահերը հաշվի են առնվում այնպես, որ ապահովվում է նրանց անկախ գործելու կարողությունը.

գ) բաշխման համակարգի օպերատորը պետք է իրավունք ունենա բնական գազի բնագավառում ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից անկախ արդյունավետ որոշումներ կայացնել՝ կապված ցանցի շահագործման, պահպանման և կատարելագործման համար անհրաժեշտ ակտիվների հետ: Այդ խնդիրները լուծելու համար, բաշխման համակարգի օպերատորը պետք է իր տրամադրության տակ ունենա անհրաժեշտ ռեսուրսներ՝ այդ թվում մարդկային, տեխնիկական, ֆինանսական և ֆիզիկական ռեսուրսներ: Սա չպետք է խանգարի համապատասխան համակարգող մեխանիզմների գոյությանը, ապահովելու համար, որ ակտիվների եկամտաբերության հետ կապված մայր ընկերության տնտեսական և կառավարման վերահսկման իրավունքները, որոնք հոդված 41(6)–ին համապատասխան անուղղակի կերպով կարգավորվում են դուստր ընկերությունում, պաշտպանված են: Մասնավորապես, սա հնարավորություն կտա մայր ընկերությանը հաստատել բաշխման համակարգի օպերատորի տարեկան ֆինանսական պլանը, կամ ցանկացած համարժեք փաստաթուղթ, և իր դուստր ընկերության պարտքային պարտավորության մակարդակների վրա դնել գլոբալ սահմանաչափեր: Դա չպետք է թույլ տա մայր ընկերությանը ցուցումներ տալ կապված ամենօրյա գործառույթների, ինչպես նաև առանձին որոշումների կայացման հետ, որոնք վերաբերում են բաշխիչ ցանցերի կառուցմանը կամ ընդլայնմանը, եթե դա չի գերազանցում հաստատված ֆինանսական պլանի կամ ցանկացած այլ համարժեք փաստաթղթի ժամկետները, և

դ) բաշխման համակարգի օպերատորը պետք է կազմի պարտավորությունների կատարման ծրագիր, որով սահմանվում են խտրական վարքագծի բացառումն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցները և ապահովի, որ այդ ծրագրի իրականացումը դիտանցվի պատշաճ կերպով: Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ այդ նպատակներին հասնելուն ուղղված հատուկ պարտավորություններ: Ձեռնարկված միջոցները սահմանող տարեկան հաշվետվությունը, պետք է ներկայացվի հոդված 39(1)–ում նշված պարտավորությունների կատարման ծրագրի, բաշխման համակարգի օպերատորի պարտավորությունների կատարման համար պատասխանատուի դիտանցման համար պատասխանատու անձի կամ մարմնի կողմից, և պետք է հրապարակվի: Բաշխման համակարգի օպերատորի պարտավորությունների կատարման համար պատասխանատուն պետք է ամբողջությամբ անկախ լինի և իր խնդիրը լուծելու նպատակով նրա համար պետք

է մատչելի լինի բաշխման համակարգի օպերատորի և ցանկացած փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

3. Եթե բաշխման համակարգի օպերատորը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մասն է կազմում, ապա անդամ պետությունները պետք է ապահովեն, որ բաշխման համակարգի օպերատորի գործունեությունը դիտանցվի կարգավորող մարմինների կամ այլ իրավասու մարմինների կողմից, որպեսզի նա չկարողանա օգտագործել իր ուղղահայաց ինտեգրման առավելությունը շուկայում մրցակցությունը խաթարելու համար: Մասնավորապես, ուղղահայաց ինտեգրված բաշխման համակարգի օպերատորները իրենց հաղորդակցման և ապրանքանշման մեջ, չպետք է շփոթություն ստեղծեն՝ կապված ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մատակարարման մասնաճյուղի առանձին ինքնության հետ:

4. Անդամ պետությունները կարող են որոշել չկիրառել 1,2 և 3-րդ պարբերությունները 100000-ից պակաս միացված բաժանորդներին սպասարկող բնական գազի բնագավառում ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

#### *Հոդված 27*

### **Բաշխման համակարգի օպերատորների գաղտնիության պահպանման պարտավորությունները**

1. Չհակասելով հոդված 30-ին կամ տեղեկատվության բացահայտման ցանկացած այլ օրենքով նախատեսված պարտավորությանը՝ յուրաքանչյուր բաշխման համակարգի օպերատոր պահպանում է իր ձեռնարկատիրական գործունեության իրականացման ժամանակ ձեռք բերած առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը և կանխում խտրական եղանակով իր սեփական գործունեության մասին այնպիսի տեղեկատվության բացահայտումը, որը կարող է առևտրային տեսանկյունից մեծ նշանակություն ունենալ:

2. Բաշխման համակարգի օպերատորները, առնչվող տնտեսվարող սուբյեկտների կողմից բնական գազի վաճառքի կամ գնման համատեքստում, չպետք է չարաշահեն առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունները, որոնք ստացվել են երրորդ անձանց կողմից համակարգի մատչելիությունը ապահովելու կամ հեշտացնելու համատեքստում:

**Բաշխման փակ համակարգեր**

1. Անդամ պետությունները կարող են հնարավորություն տալ ազգային կարգավորող կամ այլ իրավասու մարմիններին առանձնացնելու այն համակարգը, որը բաշխում է գազը աշխարհագրական նույն դիրքում գտնվող արդյունաբերական, առևտրային կամ համակցված ծառայությունների տրամադրման վայրերում և որը, որպես բաշխման փակ համակարգ, չհակասելով 4-րդ պարբերությանը, չի մատակարարում կենցաղային սպառում ունեցող բաժանորդներին, եթե՝

ա) այդ համակարգից օգտվողների գործունեությունը կամ արտադրական գործընթացը ինտեգրվում է՝ հատուկ տեխնիկական կամ անվտանգության նկատառումներից ելնելով, կամ

բ) այդ համակարգը բաշխում է գազը հիմնականում համակարգի սեփականատիրոջը կամ օպերատորին կամ նրանց հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտին:

2. Անդամ պետությունները կարող են ազգային կարգավորիչ մարմիններին հնարավորություն տալ ազատելու փակ բաշխման համակարգի օպերատորին հոդված 32(1)-ի պահանջից, համաձայն որի սակագները կամ դրանց հաշվարկումն ընդգծող մեթոդաբանությունները պետք է հաստատվեն նախքան դրանց ուժի մեջ մտնելը համաձայն հոդված 41-ի:

3. Եթե համաձայն 2-րդ պարբերության պարտավորություններից ազատումը շնորհվում է, ապա կիրառվող սակագները կամ դրանց հաշվարկումն ընդգծող մեթոդաբանությունները, պետք է քննարկվեն և հաստատվեն բաշխման փակ համակարգից օգտվողի պահանջով հոդված 41-ի համաձայն:

4. Աշխատանքի առումով կամ նմանատիպ այլ եղանակներով բաշխման համակարգի սեփականատիրոջ հետ կապված և բաշխման փակ համակարգի կողմից սպասարկվող տարածքում գտնվող փոքր քանակությամբ կենցաղային սպառում ունեցող բաժանորդների կողմից համակարգի չնախատեսված օգտագործումը չի արգելում 2-րդ պարբերության համաձայն պահանջից ազատում շնորհելը:

## Հոդված 29

### Համակցված օպերատոր

26(1)-րդ հոդվածը չի խոչընդոտում փոխադրման, ՀԲԳ, պահեստավորման և բաշխման համակցված համակարգի օպերատորին, պայմանով, որ օպերատորը համապատասխանում է հոդված 9(1)-ին, կամ 14-րդ և 15-րդ հոդվածներին, կամ Գլուխ IV-ին, և կամ ներառված է 49(6)-րդ հոդվածում:

**ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ**

*Հոդված 30*

**Հաշիվների մատչելիության իրավունքը**

1. Անդամ պետություններին կամ նրանց կողմից նշանակված ցանկացած իրավասու մարմին՝ այդ թվում հոդված 39(1)–ում նշված կարգավորող մարմիններին և հոդված 34(3)–ում նշված վեճերի կարգավորման մարմիններին տրվում է հոդված 31–ով սահմանված բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտի հաշիվների մատչելիության իրավունք, եթե դա անհրաժեշտ է նրանց գործառույթները իրականացնելու համար:

2. Անդամ պետությունները և ցանկացած նշանակված իրավասու մարմին՝ այդ թվում հոդված 39(1)–ում նշված կարգավորող մարմինները և վեճերի կարգավորման մարմինները պահպանում են առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը: Անդամ պետությունները կարող են հնարավորություն տալ հրապարակել նմանատիպ տեղեկություններ, եթե դա անհրաժեշտ է իրավասու մարմիններին իրենց գործառույթները իրականացնելու համար:

*Հոդված 31*

**Հաշիվների տարանջատումը**

1. Անդամ պետությունները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում ապահովելու համար, որ բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների հաշիվները վարվեն սույն հոդվածի 2–ից 5–րդ պարբերություններին համապատասխան: Եթե բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները 49(2)–ի և (4)–ի հիման վրա ունեն այս դրույթին չհամապատասխանելու իրավունք, ապա նրանք պետք է նվազագույնը իրենց ներքին հաշիվները վարեն սույն հոդվածի համաձայն:

2. Բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները, անկախ իրենց սեփականության համակարգից կամ իրավական ձևից, կազմում, աուդիտի են ներկայացնում և հրապարակում են իրենց տարեկան հաշվետվությունները համաձայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների տարեկան

հաշվետվությունների վերաբերյալ ազգային իրավունքի կանոնների, որոնք ընդունվել են ընկերությունների որոշ տեսակների տարեկան հաշվետվությունների մասին Համաձայնագրի հոդված 44(2)(է)-ի [20] [] հիման վրա Խորհրդի 1978 թվականի հուլիսի 25-ի 78/660/ԵՏՀ չորրորդ հրահանգին համապատասխան:

Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք իրավաբանորեն պարտավորված չեն հրապարակելու իրենց տարեկան հաշվետվությունը, դրա պատճեն հանրության տրամադրության տակ են պահում իրենց գլխամասային գրասենյակում:

3. Իրենց ներքին հաշվառման շրջանակներում, բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները իրենց յուրաքանչյուր փոխադրման, բաշխման, ՀԲԳ և պահեստավորման գործունեության համար պետք է վարեն առանձին հաշիվներ, քանի որ տվյալ գործունեությունը տարբեր ձեռնարկությունների կողմից իրականացվելու դեպքում նրանցից կպահանջվի դա անել՝ խտրականությունից, խաչաձև սուբսիդավորումից և մրցակցության խաթարումից խուսափելու նկատառումով: Նրանք պետք է վարեն նաև այնպիսի հաշիվներ, որոնց կարելի է համախմբել փոխադրման, բաշխման, ՀԲԳ և պահեստավորման գործունեությանը չվերաբերող գազային բնագավառի այլ գործունեության համար: Մինչև 2007 թվականի հուլիսի 1-ը նրանք պետք է առանձին հաշիվներ վարեն պահանջները բավարարող բաժանորդներին գազի մատակարարման գործառույթների և պահանջները չբավարարող բաժանորդներին գազի մատակարարման գործառույթների իրականացման համար: Փոխադրման կամ բաշխման ցանցի տնօրինումից ստացված հասույթը պետք է սահմանվի հաշիվների մեջ: Համապատասխան դեպքում նրանք պետք է համախմբված հաշիվներ վարեն նաև այլ ոչ գազային բնագավառի գործառույթների համար: Ներքին հաշիվները ներառում են հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ յուրաքանչյուր գործունեության համար:

4. 2-րդ պարբերությունում նշված աուդիտը մասնավորապես ստուգում է, որ պահպանվի 3-րդ պարբերությունում նշված խտրականության դրսևորումներից և խաչաձև սուբսիդավորումից խուսափելու պարտավորությունը:

5. Իրենց ներքին հաշվառման մեջ ձեռնարկությունները սահմանում են ակտիվների ու պասիվների, ծախսերի ու եկամուտների բաշխման ինչպես նաև մաշվածության կանոններ՝ չհակասելով ազգային մակարդակով կիրառվող հաշվապահական կանոններին, որոնց նրանք հետևում են 3-րդ պարբերությունում նշված առանձին հաշվետվությունները



կազմելիս: Այդ կանոնները կարող են փոփոխվել միայն բացառիկ դեպքերում: Նմանատիպ փոփոխությունները պետք է նշվեն և պատշաճ կերպով հիմնավորվեն:

6. Տարեկան հաշվետվությունների մեջ պետք է նշումներ կատարվեն հարակից տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված որոշակի չափի ցանկացած գործարքի մասին:

**ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

*Հոդված 32*

**Երրորդ կողմերի մատչելիություն**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն երրորդ կողմերի համար փոխադրման և բաշխման համակարգի ու ՀԲԳ կայանների մատչելիությունն ապահովող համակարգի իրագործումը, հիմնված պահանջները բավարարող բոլոր բաժանորդների՝ այդ թվում մատակարարող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող հրապարակված սակագների վրա, և որոնք կիրառվում է օբյեկտիվորեն՝ խտրականություն չդնելով համակարգից օգտվողների միջև:

Անդամ պետությունները ապահովում են, որ այդ սակագները կամ դրանց հաշվարկումն ընդգծող մեթոդաբանությունները հաստատվեն նախքան իրենց ուժի մեջ դրվելը համաձայն հոդված 41-ի Հոդված 39(1)-ում նշված կարգավորող մարմնի կողմից, և որ այդ սակագները և, միայն մեթոդաբանությունների հաստատման դեպքում, մեթոդաբանությունները հրապարակվեն նախքան ուժի մեջ մտնելը:

2. Փոխադրման համակարգի օպերատորների համար պետք է մատչելի լինի այլ փոխադրման համակարգի օպերատորների ցանցը, եթե դա անհրաժեշտ է իրենց գործառույթները, այդ թվում միջսահմանային փոխադրմանը առնչվող գործառույթները իրականացնելու համար:

3. Սույն Հրահանգի դրույթները չեն խոչընդոտում երկարաժամկետ պայմանագրերի կնքմանը, քանի դեռ դրանք համապատասխանում են Համայնքի մրցակցային կանոններին

*Հոդված 33*

**Պահեստավորման մատչելիությունը**

1. Պահեստավորման կայանների և գազալցման խողովակների մատչելիության կազմակերպման համար, երբ բաժանորդներին մատակարարելու համար տեխնիկապես և/կամ տնտեսապես անհրաժեշտ է ապահովել բավարար մատչելիություն, ինչպես նաև

օժանդակ ծառայությունների մատչելիության կազմակերպման համար, անդամ պետությունները կարող են ընտրել 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված երկու ընթացակարգերից մեկը կամ երկուսը: Այդ ընթացակարգերը պետք է գործեն օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող չափանիշներին համապատասխան:

Կարգավորող մարմինները, եթե անդամ պետությունները այդպես են նախատեսել կամ անդամ պետությունները որոշում և հրապարակում են այն չափանիշները համաձայն որոնց կարող է որոշվել պահեստավորման կայանների և գազալցման խողովակների նկատմամբ կիրառվող մուտքի ռեժիմը: Նրանք պետք է հրապարակեն, կամ պահանջեն պահեստավորման և փոխադրման համակարգի օպերատորներից հրապարակել, թե որ պահեստավորման կայանները կամ այդ կայանների որ մասերը, կամ որ գազալցման խողովակն է առաջարկվում 3-րդ և 4-րդ պարբերություններում նշված տարբեր ընթացակարգերի շրջանակներում:

Երկրորդ ենթապարբերության երկրորդ նախադասությամբ սահմանված պարտականությունը չպետք է հակասի առաջին պարբերությամբ անդամ պետություններին շնորհվող ընտրության իրավունքին:

2. 1-ին պարբերության դրույթները չպետք է կիրառվեն ՀԲԳ կայաններին առնչվող և վերագազաֆիկացման պրոցեսի ու դեպի փոխադրման համակարգ հետագա առաքման համար անհրաժեշտ օժանդակ ծառայությունների և ժամանակավոր պահեստների նկատմամբ:

3. Մատչելիության շուրջ բանակցությունների արդյունքում համաձայնության գալու դեպքում, անդամ պետությունները, կամ եթե անդամ պետությունները սահմանել են՝ կարգավորող մարմինները, պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ փոխկապակցված համակարգով նախատեսվող տարածքի ներսում կամ դրանից դուրս գտնվող բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և պահանջները բավարարող բաժանորդների համար, որպեսզի հնարավոր լինի հասնել պահեստավորման կայանների և գազալցման խողովակների մատչելիության, երբ դա տեխնիկապես կամ տնտեսապես անհրաժեշտ է համակարգի բավարար մատչելիությունը ապահովելու համար, ինչպես նաև այլ օժանդակ ծառայություններից օգտվելու հնարավորությունը կազմակերպելու համար: Կողմերը պարտավոր են բարեխղճորեն բանակցել պահեստավորման, գազալցման խողովակների և այլ օժանդակ ծառայությունների մատչելիության շուրջ:

Պահեստավորման, գազալցման խողովակների և այլ օժանդակ ծառայությունների մատչելիության վերաբերյալ պայմանագրերի շուրջ բանակցությունները տարվում են համապատասխան պահեստավորման օպերատորի կամ բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների հետ: Կարգավորող մարմինները, եթե անդամ պետությունները այդպես են նախատեսել, կամ անդամ պետությունները պետք է մինչև 2005 թվականի հունվարի 1-ը և այնուհետև ամեն տարի պահանջեն պահեստավորման համակարգի օպերատորներից և բնական գազի ձեռնարկություններից հրապարակել պահեստավորումից, գազալցման խողովակներից և այլ օժանդակ ծառայություններից օգտվելու իրենց հիմնական առևտրային պայմանները:

Երկրորդ ենթապարբերությունում նշված պայմանների բարելավման ժամանակ, պահեստավորման օպերատորները և բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները պետք է խորհրդակցեն համակարգից օգտվողների հետ:

4. Կարգավորվող մատչելիության դեպքում, կարգավորող մարմինները, եթե անդամ պետությունները այդպես են նախատեսել, կամ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ փոխկապակցված համակարգով նախատեսվող տարածքի ներսում կամ դրանից դուրս գտնվող բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և պահանջները բավարարող բաժանորդներին իրավունք ընձեռելու համար օգտվել պահեստավորման, գազալցման խողովակներից և այլ օժանդակ ծառայություններից, այդ պահեստավորման և գազալցման խողովակների օգտագործման համար հրապարակված սակագների և/կամ այլ ժամկետների և պարտավորությունների հիման վրա, երբ դա տեխնիկապես կամ տնտեսապես անհրաժեշտ է համակարգի բավարար մատչելիությունը ապահովելու համար, ինչպես նաև այլ օժանդակ ծառայություններից օգտվելու հնարավորությունը կազմակերպելու համար: Կարգավորող մարմինները, եթե անդամ պետությունները այդպես են նախատեսել, կամ անդամ պետությունները այդ սակագների կամ այդ սակագների մեթոդաբանությունների բարելավման ժամանակ պետք է խորհրդակցեն համակարգից օգտվողների հետ: պահանջները բավարարող բաժանորդներին մատչելիության իրավունքը կարող է տրվել՝ նրանց հնարավորություն ընձեռելով գործելու այն մատակարարման պայմանագրերի շրջանակներում, որոնք կնքվել են սեփականատիրոջից կամ/և համակարգի կամ հարակից տնտեսվարող սուբյեկտից տարբեր բնական գազի բնագավառում մրցակցող այլ տնտեսվարող սուբյեկտների հետ:

**Բարձր ճնշման խողովակաշարի ցանցերի մատչելիությունը**

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն ապահովելու համար, որ բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները և պահանջները բավարարող բաժանորդները, անկախ նրանց գտնվելու վայրից, համաձայն սույն հոդվածի, կարող են մուտք գործել բարձր ճնշման խողովակաշարի ցանցեր, այդ թվում՝ նմանատիպ մուտքին օժանդակ տեխնիկական ծառայություններ մատուցող կայաններ, բացառությամբ նմանատիպ ցանցերի և կայանների այն մասերի, որոնք օգտագործվում են գազի արտադրման տարածքում տեղական արտադրական գործընթացի համար: Միջոցների մասին հանձնաժողովին պետք է ծանուցվի համապատասխան 54-րդ հոդվածի դրույթներին:

2. 1-ին պարբերությունում նշված մատչելիությունը պետք է ապահովվի անդամ պետությունների կողմից որոշված եղանակով, համաձայն իրավական փաստաթղթերի: Անդամ պետությունները պետք է իրականացնեն արդար և բաց մատչելիությանն ուղղված նպատակներ՝ հասնելով բնական գազի մրցակցային շուկայի և խուսափելով գերակա դիրքի ցանկացած չարաշահումից՝ հաշվի առնելով մատակարարման անվտանգությունն ու կանոնավորությունը, կարողությունները, որոնք առկա են կամ որոնց կարելի է ողջամտորեն հասնել, և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Կարող են հաշվի առնվել հետևյալ խնդիրները՝

ա) մատչելիության ապահովումը մերժելու անհրաժեշտությունը, երբ առկա է տեխնիկական մասնագրերի այնպիսի անհամատեղելիություն, որը չի կարող արդյունավետորեն վերացվել.

բ) այնպիսի դժվարություններից խուսափելու անհրաժեշտությունը, որոնք չեն կարող արդյունավետորեն հաղթահարվել, և որոնք կարող են հակասել ածխաջրածինների արդյունավետ, ընթացիկ և նախատեսված հետագա արտադրությանը, այդ թվում՝ մարզինալ տնտեսական կենսունակության ոլորտի դժվարությունները.

գ) գազի վերամշակման և փոխադրման համար բարձր ճնշման խողովակաշարի ցանցի սեփականատիրոջ կամ օպերատորի հիմնավորված և տրամաբանական կարիքները, և բարձր ճնշման խողովակաշարի ցանցի կամ համապատասխան մշակման և օժանդակ կառուցվածքների այլ օգտագործողների շահերը բավարարելու անհրաժեշտությունը, և

դ) Համայնքի իրավունքի համաձայն իրենց օրենքների և վարչական ընթացակարգերի կիրառման անհրաժեշտությունը, արտադրության կամ աճող գազատար խողովակների ցանցը բարելավելու թույլտվություն տալու համար:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ լինեն վեճերի լուծման գործող մեխանիզմներ, այդ թվում՝ վիճող կողմերից անկախ իրավասու մարմին, որը հնարավորություն կունենա ստանալու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք կնպաստեն բարձր ճնշման խողովակաշարի ցանցերի մատչելիության ապահովման հետ կապված վեճերի արագ լուծմանը՝ հաշվի առնելով 2-րդ պարբերությամբ սահմանված չափանիշները և նմանատիպ ցանցերի մատչելիության ապահովման շուրջ բանակցությունների մեջ ներգրավված կողմերի թիվը:

4. Միջսահմանային վեճերի դեպքում գործում է այն անդամ պետության վեճերի կարգավորման օրենսդրությունը, որի իրավազորության ներքո են գտնվում վեճի առարկա դարձած բարձր ճնշման խողովակաշարի ցանցը: Այն դեպքերում, երբ անդրսահմանային վեճը վերաբերում է ավելի քան մեկ անդամ պետության տարածքում գտնվող ցանցին, ներգրավված անդամ պետությունները պետք է խորհրդակցեն միմյանց հետ սույն հրահանգի դրույթները հետևողականորեն կիրառելու համար:

### *Հոդված 35*

#### **Մուտքի մերժում**

1. Բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները կարող են մերժել մուտքը դեպի համակարգ կարողությունների պակասի հիմնավորմամբ, կամ եթե մուտքը դեպի համակարգ կարող է խոչընդոտ հանդիսանալ Հոդված 3(2)-ում նշված իրենց հանձնարարված հանրային ծառայության պարտավորությունների կատարման համար, կամ հիմնվելով «վերցրու կամ վճարիր» սկզբունքով պայմանագրերի լուրջ տնտեսական և ֆինանսական դժվարությունների վրա՝ հաշվի առնելով Հոդված 48-ով սահմանված, ինչպես նաև այդ հոդվածի 1-ին պարբերության համապատասխան անդամ պետությունների կողմից ընտրված այլընտրանքային չափանիշները և ընթացակարգերը: Ցանկացած նմանատիպ մերժման համար պետք է տրվեն հիմնավորված պատճառներ:

2. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար, որ կարողությունների կամ միացումների բացակայության

հիմնավորմամբ մուտքը դեպի համակարգ մերժող բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտը անհրաժեշտ աշխատանքներ իրականացնի կառուցվածքների հզորությունների մեծացման ուղղությամբ՝ այնքանով, որքանով դա տնտեսապես հիմնավորված է, կամ երբ պոտենցիալ բաժանորդը պատրաստ է վճարել այդ աշխատանքների համար: Անդամ պետությունների կողմից հոդված 4(4) կիրառման հանգամանքներում, անդամ պետությունները պետք է ձեռնարկեն նմանատիպ միջոցներ:

### *Հոդված 36*

#### **Նոր ենթակառուցվածքները**

1. Նոր հիմնական գազի ենթակառուցվածքները, ինչպես օրինակ՝ խողովակաշարերը, ՀԲԳ և պահեստավորման կայանները, կարող են պահանջի համաձայն որոշված ժամանակահատվածով ազատվել հոդված 9-ի, 32-ի, 33-ի և 34-ի ինչպես նաև հոդված 41(6)-ի, (8)-ի և (10)-ի դրույթներից հետևյալ պայմաններում՝

ա) ներդրումը պետք է մեծացնի գազամատակարարման մրցակցությունը և անխափան մատակարարումը.

բ) ներդրումին կցված ռիսկի մակարդակը, պետք է այնպիսին լինի, որ ներդրումը չկատարվի եթե այդ ռիսկի բացառումը ապահովված չէ.

գ) Ենթակառուցվածքը պետք է պատկանի ֆիզիկական կամ իրավաբանական անձին, որը նվազագույնը իր իրավական ձևով անկախ է այն համակարգի օպերատորներից, որոնց համակարգերում պետք է կառուցվի տվյալ ենթակառուցվածքը.

դ) Տվյալ ենթակառուցվածքից օգտվողներից պետք է գանձվեն վճարներ, և

ե) պարտավորություններից ազատումը չպետք է վնասի բնական գազի ներքին շուկայի մրցակցությանը կամ արդյունավետ գործունեությանը, կամ այն կարգավորվող համակարգի արդյունավետ գործունեությանը, որին միացված է ենթակառուցվածքը:

2. 1-ին պարբերությունը պետք է կիրառվի նաև առկա ենթակառուցվածքի կարողությունների նշանակալից բարձրացման և նմանատիպ ենթակառուցվածքների ձևափոխման համար, որը հնարավորություն կտա զարգացնել գազամատակարարման նոր աղբյուրներ:

3. Գլուխ VIII–ում նշված կարգավորող մարմինը, կարող է յուրաքանչյուր դեպքի համար առանձին որոշում կայացնել 1–ին և 2–րդ պարբերություններում նշված պարտավորություններից ազատման վերաբերյալ:

4. Երբ տվյալ ենթակառուցվածքը գտնվում է մեկից ավելի անդամ պետությունների տարածքում, ապա Գործակալությունը խորհրդատվական եզրակացությունը ներկայացնում է առնչվող անդամ պետություններին, որը կարող է հիմք հանդիսանալ նրանց եզրակացության համար այդ կարգավորող մարմինների վերջինի կողմից պարտավորություններից ազատման պահանջը ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Եթե բոլոր համապատասխան կարգավորող մարմինները պարտավորություններից ազատման պահանջի վերաբերյալ համաձայնության են գալիս կարգավորող մարմիններից վերջինի կողմից այդ պահանջը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում, ապա նրանք տեղեկացնում են Գործակալությանը իրենց եզրակացության մասին:

Գործակալությունը պետք է իրականացնի սույն հոդվածով նախատեսված անդամ պետությունների կարգավորող մարմիններին վերապահած խնդիրները:

ա) Երբ բոլոր հարակից կարգավորող մարմինները չեն կարողացել համաձայնության գալ կարգավորող մարմիններից վերջինի կողմից այդ պահանջը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում, կամ

բ) համապատասխան կարգավորող մարմինների կողմից ստացված համատեղ պահանջով:

Բոլոր համապատասխան կարգավորող մարմինները, կարող են համատեղ պահանջել, որ երրորդ ենթապարբերության (ա) կետում նշված ժամանակահատվածը երկարաձգվի առավելագույնը երեք ամսով:

5. Նախքան եզրակացություն կայացնելը, Գործակալությունը պետք է խորհրդակցի համապատասխան կարգավորող մարմինների և դիմողների հետ:

6. Բացառություն կարող է արվել նոր ենթակառուցվածքի, կամ զգալիորեն ավելի բարձր հնարավորություններ ունեցող առկա ենթակառուցվածքի բոլոր հնարավորությունների կամ դրանց մի մասի նկատմամբ:

Պարտավորություններից ազատման մասին որոշում կայացնելու ժամանակ, յուրաքանչյուր դեպքի համար պետք է հաշվի առնվի պարտավորություններից ազատման տևողությանը



առնչվող ու ենթակառուցվածքի մատչելիության խտրականությունը բացառող պայմաններ սահմանելու անհրաժեշտությունը: Այդ պայմանների վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ, մասնավորապես հաշվի են առնվում հավելյալ թողունակության ստեղծումը կամ առկա թողունակության վերափոխումը, ծրագրին տրված ժամանակահատվածը և ազգային հանգամանքները:

Պարտավորություններից ազատում շնորհելուց առաջ, կարգավորող մարմինը պետք է սահմանի թողունակության կառավարման և բաշխման կանոններ ու մեխանիզմներ: Այդ կանոններով ենթակառուցվածքից բոլոր օգտվողներից պահանջվում է նշել պայմանագրով տրամադրվելիք թողունակության մասով իրենց շահերը, այդ թվում սեփական օգտագործման համար, նախքան տեղի կունենա կարողությունների բաշխում նոր ենթակառուցվածքի ներսում: Կարգավորող մարմինը պետք է պահանջի, որ գերբեռնվածության կառավարման մասին նորմերը ներառեն չօգտագործված թողունակությունը շուկայում առաջարկելու պարտավորություն, և պետք է պահանջեն, որ ենթակառուցվածքից օգտվողները իրավասու լինեն վաճառել/փոխանակել պայմանագրով իրենց տրված թողունակության իրավունքը երկրորդային շուկայում: 1-ին պարբերության (ա), (բ) և (ե) կետերում նշված չափանիշների գնահատման ժամանակ, կարգավորող մարմինը պետք է հաշվի առնի այդ թողունակության բաշխման ընթացակարգի արդյունքները:

Պարտավորություններից ազատելու մասին որոշումը, այդ թվում՝ սույն պարբերության երկրորդ ենթապարբերության մեջ նշված ցանկացած պայման, պետք է հիմնավորվի և հրապարակվի:

7. Չնայած 3-րդ պարբերությանը, անդամ պետությունները կարող են նախատեսել, որ իրենց կարգավորող մարմինը կամ Գործակալությունը, կախված հանգամանքներից, պաշտոնական որոշում կայացնելու նպատակներով անդամ պետության համապատասխան մարմնին ներկայացնի պարտավորություններից ազատելու պահանջի վերաբերյալ իր եզրակացությունը: Այդ եզրակացությունը պետք է հրապարակվի որոշման հետ համատեղ:

8. Կարգավորող մարմինը պետք է անհապաղ Հանձնաժողովին ներկայացնի պարտավորություններից ազատելու վերաբերյալ ստացված յուրաքանչյուր պահանջի պատճենը: Որոշումը և այդ որոշմանը առնչվող ողջ համապատասխան տեղեկությունները անհապաղ պետք է ծանուցվեն Հանձնաժողովին իրավասու մարմնի կողմից: Այդ տեղեկությունները կարող են ներկայացվել Հանձնաժողովին համախմբված ձևով՝

հնարավորություն տալով Հանձնաժողովին ընդունելու հիմնավորված որոշում:  
Տեղեկությունները մասնավորապես պետք է պարունակեն՝

ա) 1-ին պարբերությանը կատարվող հղումի հետ մեկտեղ մանրամասն հիմնավորված պատճառները, որոնց հիման վրա կարգավորող մարմինը կամ անդամ պետությունը տրամադրել կամ հրաժարվել է տրամադրել պարտավորություններից ազատում՝ ներառյալ այդ պարբերության համապատասխան կետը կամ կետերը, որոնց վրա հիմնված է նմանատիպ որոշումը, այդ թվում՝ պարտավորություններից ազատման անհրաժեշտությունը հիմնավորող ֆինանսական տեղեկությունները.

բ) պարտավորություններից ազատման հետևանքով բնական գազի ներքին շուկայի մրցակցության և արդյունավետ գործունեության վրա ունեցած ազդեցության վերաբերյալ կատարված վերլուծությունը:

գ) պատճառները, որոնց հիման վրա սահմանվում են տվյալ գազի ենթակառուցվածքին տրվող պարտավորություններից ազատման ժամկետը և ընդհանուր թողունակության մասնաբաժինը:

դ) հարակից կարգավորող մարմինների հետ խորհրդակցությունից ստացված արդյունքը, այն դեպքում, երբ արտոնությունների տրամադրումը վերաբերում է խողովակաշարին, և

ե) գազամատակարարման բազմազանեցմանն ուղղված ենթակառուցվածքի ներդրումը:

9. Ծանուցումը ստանալու հաջորդ օրվանից հետո երկու ամսվա ընթացքում, Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել՝ պահանջելով կարգավորող մարմնից փոփոխել կամ չեղյալ համարել պարտավորություններից ազատման որոշումը: Այդ երկամսյա ժամկետը կարող է լրացուցիչ երկամսյա ժամկետով երկարաձգվել, եթե Հանձնաժողովին անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ: Այդ լրացուցիչ ժամկետը սկսվում է ամբողջական տեղեկությունները ստանալուն հաջորդող օրը: Նախնական երկամսյա ժամկետը կարող է երկարաձգվել Հանձնաժողովի և համապատասխան կարգավորող մարմնի համաձայնությամբ:

Եթե պահանջվող տեղեկությունները չեն տրամադրվում պահանջով սահմանված ժամկետի ընթացքում, ապա ծանուցումը չեղյալ է հայտարարվում, եթե այդ ժամկետի լրանալուց առաջ այդ ժամկետը չի երկարաձգվել Հանձնաժողովի և կարգավորող մարմնի համաձայնությամբ կամ եթե կարգավորիչ մարմինը պատշաճ հիմնավորված հայտարարագրով չի տեղեկացրել Հանձնաժողովին այն մասին, որ ինքը կարծում է, որ հայտարարագրումը ամբողջական է:

Կարգավորող մարմինը կատարում է Հանձնաժողովի՝ մեկամյա ժամկետում պարտավորություններից ազատման վերաբերյալ որոշումը փոփոխելու կամ չեղյալ ճանաչելու մասին եզրակացությունը և համապատասխանաբար տեղեկացնում է Հանձնաժողովին:

Հանձնաժողովը պետք է պահպանի առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

Հանձնաժողովի կողմից պարտավորություններից ազատում տրամադրելու մասին հաստատված որոշումը ուժը կորցնում է դրա ընդունումից երկու տարի հետո, այն դեպքում, երբ ենթակառուցվածքի կառուցումը դեռ չի սկսվել, և դրա ընդունումից հինգ տարի հետո, այն դեպքում, երբ ենթակառուցվածքը շահագործման չի հանձնվել, եթե Հանձնաժողովը չի որոշում, որ ցանկացած այդպիսի ուշացում պայմանավորված է անձի կողմից անկառավարելի մեծ խոչընդոտների առաջացմամբ:

10. Հանձնաժողովը կարող է ուղեցույցներ ընդունել սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված պայմանների կիրառման համար, և ուղղված սահմանելու ընթացակարգ, որին պետք է հետևել սույն հոդվածի 3, 6, 8 և 9-րդ պարբերությունները կիրառելիս: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

### *Հոդված 37*

#### **Շուկայի բացումն ու փոխադարձությունը**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պահանջները բավարարող բաժանորդների մեջ ընդգրկվեն՝

ա) մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը պահանջները բավարարող բաժանորդները, ինչպես նշված է «Բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/30/ԵՀ հրահանգի [21] 18-րդ հոդվածում: Անդամ պետությունները պետք է հրապարակեն պահանջները բավարարող այդ բաժանորդներին որոշելու չափանիշները ամեն տարի մինչև հունվարի 31-ը,

բ) 2004 թվականի հուլիսի 1-ից բոլոր ոչ կենցաղային բաժանորդները.

գ) 2007 թվականի հուլիսի 1-ից բոլոր բաժանորդները:

2. գազի շուկաների բացման ժամանակ անհավասարակշռությունից խուսափելու համար՝

ա) մեկ այլ անդամ պետության համակարգի մեջ գտնվող պահանջները բավարարող բաժանորդների հետ մատակարարման պայմանագրերի կնքումը չպետք է արգելվի, եթե բաժանորդը բավարարում է ներգրավված երկու համակարգի պահանջները:

բ) երբ (ա) կետով նախատեսված գործարքները մերժվում են, քանի որ բաժանորդը բավարարում է երկու համակարգերից միայն մեկի պահանջները, ապա Հանձնաժողովը, հաշվի առնելով շուկայում տիրող իրավիճակը և ընդհանուր շահերը, կարող է պարտադրել մերժող կողմին իրականացնել պահանջվող մատակարարումը երկու համակարգերը ընդգրկող անդամ պետություններից մեկի պահանջով:

### *Հոդված 38*

#### **Ուղիղ գծեր**

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ հնարավորություն տալու, որ՝

ա) իրենց տարածքում հիմնադրված բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտները մատակարարեն պահանջները բավարարող բաժանորդներին մատակարարման ուղիղ գծի միջոցով, և

բ) իրենց տարածքում գտնվող ցանկացած պահանջները բավարարող նմանատիպ բաժանորդին մատակարարումը իրացվի բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների կողմից մատակարարման ուղիղ գծի միջոցով:

2. Երբ ուղիղ գծեր կառուցելու կամ շահագործելու համար պահանջվում է արտոնագիր (օրինակ՝ լիցենզիա, թույլտվություն, կոնցեսիա, համաձայնություն կամ հաստատում), ապա անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված որևէ իրավասու մարմին սահմանում են արտոնագրերի տրամադրման չափանիշներ իրենց տարածքում նման գծերի կառուցման կամ շահագործման համար: Այս չափանիշները պետք է բացառեն խտրականությունը, լինեն թափանցիկ և անկողմնակալ:

3. Անդամ պետությունները կարող են ուղիղ գծի կառուցման համար արտոնագիր տրամադրելու պահանջ ներկայացնել, որի հետևանքով կարող է հոդված 35-ի հիման վրա՝

մերժվել համակարգի մատչելիությունը կամ հոդված 41-ի համաձայն սկսվել վեճերի լուծման ընթացակարգ:

**ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

*Հոդված 39*

**Կարգավորող մարմինների նշանակումն ու անկախությունը**

1. Յուրաքանչյուր անդամ պետությունն նշանակում է մեկ ազգային կարգավորող մարմին ազգային մակարդակով:
2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը չպետք է հակասի անդամ պետություններում ազգային մակարդակով այլ կարգավորող մարմինների նշանակմանը, պայմանով, որ համաձայն թիվ 713/2009 կանոնակարգի (ԵՀ) հոդված 14-ի Գործակալության կարգավորողների խորհրդում ներկայացուցչության և կապ հաստատելու նպատակով Համայնքի մակարդակով առկա է ղեկավար անձնակազմի մեկ ներկայացուցիչ :
3. Շեղում կատարելով սույն հոդվածի 1-ին պարբերությունից՝ անդամ պետությունները կարող են կարգավորող մարմիններ նշանակել աշխարհագրական դիրքով անջատ տարածաշրջանի փոքր համակարգերի համար, որոնց սպառումը, 2008 թվականին չի գերազանցում այն անդամ պետության ընդհանուր սպառման 3 %-ը, որի մասը այն կազմում է: Այդ շեղումը չպետք է հակասի թիվ 713/2009 կանոնակարգի (ԵՀ) հոդված 14-ի համաձայն Գործակալության կարգավորողների խորհրդում Համայնքի մակարդակով ղեկավար անձնակազմի մեկ ներկայացուցչի նշանակմանը ներկայացուցչության և կապ հաստատելու նպատակով:
4. Անդամ պետությունները պետք է երաշխավորեն կարգավորող մարմնի անկախությունը և ապահովեն, որ այն իրականացնի իր լիազորությունները անաչառ և թափանցիկ եղանակով: Այս նպատակով, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ սույն Հրահանգով և առնչվող օրենսդրությամբ իրեն վերապահված կարգավորման խնդիրները իրականացնելիս, կարգավորող մարմինը՝
  - ա) լինի իրավաբանորեն առանձին և գործառույթի մասով անկախ ցանկացած այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունից.
  - բ) ապահովում է, որ իր անձնակազմը և իր կառավարման համար պատասխանատու անձինք՝

(i) գործեն ցանկացած շուկայի շահերից անկախ, և

(ii) Կարգավորման խնդիրները իրականացնելիս չփորձեն կատարել կամ չկատարեն ցանկացած կառավարությունից կամ այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունից ստացված անմիջական հրահանգները: Այդ պահանջը չի հակասում ըստ անհրաժեշտության այլ համապատասխան ազգային մարմինների հետ սերտ համագործակցելուն, կամ հոդված 41-ով սահմանված կարգավորման պարտականությունների ու լիազորությունների հետ առնչություն չունեցող կառավարության կողմից սահմանված քաղաքականության ընդհանուր ուղեցույցներին:

5. Կարգավորող մարմնի անկախությունը պաշտպանելու համար, անդամ պետությունները մասնավորապես պետք է ապահովեն, որ՝

ա) կարգավորող մարմինը կարողանա կայացնել ցանկացած քաղաքական մարմնից անկախ ավտոնոմ որոշումներ, և ունենա տարեկան բյուջեի առանձին հատկացումներ այդ հատկացված բյուջեի ազատ կատարման իրավունքով, և ունենա բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ իր պարտականությունները իրականացնելու համար, և

բ) կարգավորող մարմնի խորհրդի անդամները կամ խորհրդի բացակայության դեպքում կարգավորող մարմնի բարձրաստիճան ղեկավարները նշանակվեն հինգից յոթ տարի ֆիքսված ժամկետով՝ մեկ անգամ վերանշանակման իրավունքով:

Առաջին ենթապարբերության (բ) կետի առնչությամբ, անդամ պետությունները պետք է ապահովեն համապատասխան ռոտացիոն համակարգ խորհրդի կամ բարձրաստիճան ղեկավարության անդամների համար: Խորհրդի անդամները կամ, խորհրդի բացակայության դեպքում բարձրաստիճան ղեկավարության անդամները կարող են ազատվել պաշտոնից իրենց պաշտոնավարման ժամանակ, միայն եթե նրանք այլևս չեն իրականացնում սույն հոդվածով սահմանված պայմանները կամ մեղավոր են ազգային իրավունքի համաձայն իրավախախտում կատարելու համար:

#### *Հոդված 40*

#### **Կարգավորող մարմնի ընդհանուր նպատակները**

Սույն Հրահանգում նշված կարգավորման խնդիրներն իրագործելիս, կարգավորող մարմինը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները 41-րդ հոդվածով սահմանված իր

պարտականությունների ու լիազորությունների շրջանակներում, սերտ խորհրդակցելով այլ համապատասխան ազգային մարմինների, այդ թվում՝ համապատասխան դեպքում մրցակցային մարմինների հետ, և չխախտելով իրենց իրավասությունները, իրագործելու համար հետևյալ նպատակները՝

ա) սերտ համագործակցելով Գործակալության, այլ անդամ պետությունների կարգավորող մարմինների և Հանձնաժողովի հետ՝ խթանել Համայնքում բնական գազի մրցակցային, ապահով և բնապահպանական տեսանկյունից կայուն ներքին շուկայի և շուկայի արդյունավետ բացմանը Համայնքի բոլոր բաժանորդների և մատակարարների համար, և ապահովել համապատասխան պայմաններ գազի ցանցերի արդյունավետ ու հուսալի գործունեության համար՝ հաշվի առնելով երկարաժամկետ նպատակները.

բ) (ա) կետում նշված նպատակներին հասնելու նկատառումով զարգացնել Համայնքում մրցակցային և պատշաճ գործունեություն ծավալող տարածաշրջանային շուկաները.

գ) վերացնել անդամ պետությունների միջև բնական գազի առևտրի սահմանափակումները, այդ թվում՝ զարգացնել համապատասխան միջսահմանային փոխադրման հնարավորությունները ազգային շուկաների պահանջը բավարարելու և ինտեգրումը խթանելու համար, ինչը կարող հեշտացնել բնական գազի հոսքը Համայնքի տարածքում.

դ) օգնել ամենածախսարդյունավետ եղանակով հասնելու սպառողների համար բարենպաստ խտրականությունը բացառող ապահով, հուսալի և արդյունավետ համակարգերի զարգացմանը, և խթանել համակարգի պահանջվող որակին ու ընդհանուր էներգիայի քաղաքականության նպատակների հետ մեկտեղ էներգաարդյունավետությանը հասնելուն, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրներից գազի լայնածավալ և փոքրածավալ արտադրության և փոխադրման ու բաշխման ցանցերում բաշխված արտադրության ինտեգրմանը.

ե) նոր արտադրության կարողություններ ստեղծելու համար դյուրացնել մուտքը ցանց՝ մասնավորապես հեռացնելով խոչընդոտները, որոնք կարող են խանգարել նոր շուկա մուտք գործողների և վերականգնվող էներգիայի աղբյուրներից գազի մուտքը շուկա.

զ) ապահովել, որ համակարգի օպերատորներին և համակարգից օգտվողներին տրվեն խրախուսական համապատասխան միջոցներ՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով, բարձրացնելու համակարգի գործունեության արդյունավետությունը և խթանելու շուկայի ինտեգրումը.



է) ապահովել, որ բաժանորդները օգուտ ստանան իրենց ազգային ներքին շուկայի արդյունավետ գործունեությունից, խթանել արդյունավետ մրցակցությունն ու օգնել ապահովել սպառողների պաշտպանությունը.

ը) օգնել հասնելու բնական գազի հանրային ծառայությունների բարձր ստանդարտների՝ խթանելով խոցելի սպառողների պաշտպանությանը և խթանելով բաժանորդների միացման մասով անհրաժեշտ տվյալների փոխանակման գործընթացների համեմատելիությունը:

#### *Հոդված 41*

### **Կարգավորող մարմնի պարտականություններն ու լիազորությունները**

1. Կարգավորող մարմինն ունի հետևյալ պարտականությունները՝

ա) թափանցիկ չափորոշիչներին համապատասխան հաղորդման կամ բաշխման սակագների կամ դրանց մեթոդաբանությունների սահմանում կամ հաստատում.

բ) հաղորդման և բաշխման համակարգի օպերատորների, անհրաժեշտության դեպքում՝ համակարգի սեփականատերերի, ինչպես նաև բնական գազի բնագավառի ցանկացած տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն Հրահանգով և Համայնքի այլ համապատասխան օրենսդրության համաձայն դրանց վերագրված պարտականությունների, այդ թվում՝ միջսահմանային խնդիրներին առնչվող պարտականությունների կատարման ապահովում.

գ) միջսահմանային խնդիրների առնչությամբ համապատասխան անդամ պետությունների կարգավորող մարմնի կամ մարմինների և Գործակալության միջև համագործակցության հաստատում.

դ) Գործակալության և Հանձնաժողովի իրավական պարտադիր ուժ ունեցող ցանկացած համապատասխան որոշման կատարում և իրականացում.

ե) գործունեության և պարտականությունների կատարման մասին տարեկան հաշվետվությունների ներկայացում անդամ պետությունների համապատասխան մարմիններ, Գործակալություն և Հանձնաժողով. Այդպիսի հաշվետվություններում ընդգրկվում են ձեռնարկված քայլերը և արձանագրված արդյունքները՝ կապված սույն հոդվածում նշված խնդիրներից յուրաքանչյուրի հետ.

զ) հաղորդման, բաշխման և մատակարարման գործողությունների միջև խաչաձև սուբսիդավորման բացակայության ապահովում.

է) հաղորդման համակարգի օպերատորների ներդրումային ծրագրերի դիտանցում և տարեկան հաշվետվության մեջ՝ հաղորդման համակարգի օպերատորների ներդրումային ծրագրերի գնահատում՝ կապված թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 8(3)(բ) հոդվածում նշված՝ Համայնքում ցանցի զարգացման ծրագրի հետ դրանց համապատասխանության հետ. այդպիսի գնահատումը կարող է ներառել այդ ներդրումային ծրագրերում փոփոխությունների կատարելու մասին առաջարկություններ.

ը) ցանցի անվտանգության և հուսալիության կանոնների պահպանման գնահատում և անցյալում դրանց ապահովության վերանայում, ինչպես նաև՝ ծառայության և մատակարարման որակի ստանդարտների և պահանջների սահմանում կամ հաստատում կամ դրանց խթանում այլ իրավասու մարմինների հետ համագործակցությամբ.

թ) թափանցիկության մակարդակի, այդ թվում՝ մեծածախ գների դիտանցում և բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների կողմից թափանցիկության ապահովման մասով պարտականությունների կատարման ապահովում.

ժ) մեծածախ և մանրածախ մակարդակներում շուկայի բացման ու մրցակցության մակարդակի ու արդյունավետության դիտանցում, այդ թվում՝ բնական գազի փոխանակումներ, կենցաղային նպատակներով սպառող բաժանորդների համար նախատեսված գներ՝ ներառյալ նախավճարային համակարգերը, միացման, անջատման դրույքաչափերը, սպասարկման վճարները և սպասարկումը, կենցաղային նպատակներով սպառող բաժանորդների կողմից բողոքները, նաև՝ մրցակցության խաթարման կամ սահմանափակման դեպքերը, ինչպես նաև՝ համապատասխան մրցակցային մարմիններին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրում և ցանկացած էական դեպքերի մասին ծանուցում.

ժա) սահմանափակ պայմանագրային գործելակերպերի առկայության դիտանցում, այդ թվում՝ բացառիկ իրավունքի մասին դրույթների, որոնք կարող են խոչընդոտել ոչ կենցաղային նպատակներով սպառող խոշոր բաժանորդներին մի քանի մատակարարների հետ միաժամանակ պայմանագրեր կնքելու հարցում կամ սահմանափակել նրանց այդպես գործելու իրավունքը, անհրաժեշտության դեպքում նաև՝ այդպիսի գործելակերպերի մասին տեղեկությունների տրամադրում ազգային մրցակցային մարմիններ.

ժբ) պայմանագրեր կնքելու ազատության պահպանում դադարեցվող մատակարարման պայմանագրերի և երկարաժամկետ պայմանագրերի մասով՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն Համայնքի իրավունքին ու Համայնքի քաղաքականություններին.

ժգ) միացումներ և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով հաղորդման ու բաշխման համակարգերի օպերատորների կողմից վերցված ժամանակի դիտանցում.

ժդ) պահեստավորման, խողովակաշարերի և հողված 33-ով նախատեսված այլ օժանդակ ծառայությունների մատչելիության պայմանների դիտանցում և վերանայում: Եթե պահեստավորման մուտքի ռեժիմը սահմանվում է 33(3) հողվածի համաձայն, ապա այդ առաջադրանքը բացառում է սակագների վերանայումը.

ժե) այլ համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ աջակցության ցուցաբերում՝ ուղղված սպառողների իրավունքների պաշտպանության միջոցների՝ նաև I հավելվածով սահմանված միջոցների արդյունավետության ու դրանց իրականացման ապահովմանը.

ժզ) առնվազն տարին մեկ անգամ առաջարկությունների հրապարակում՝ կապված 3-րդ հողվածի դրոյթների հետ մատակարարման գների համապատասխանության հետ, և անհրաժեշտության դեպքում՝ դրանց տրամադրում մրցակցային մարմիններին.

ժէ) բաժանորդների կողմից սպառման մասին տվյալներից օգտվելու հնարավորության ապահովում, սպառման մասին տվյալների՝ ազգային մակարդակում ներդաշնակեցված դյուրըմբռնելի ձևաչափի տրամադրում այլընտրանքային գործածման նպատակով և բոլոր բաժանորդներին այդպիսի տվյալներից անհապաղ օգտվելու հնարավորության ընձեռում՝ համաձայն I հավելվածի (ը) կետի.

ժը) հաղորդման համակարգի օպերատորների, բաշխման համակարգի օպերատորների, մատակարարների և բաժանորդների և շուկայի այլ դերակատարների գործառույթներին ու պարտականություններին վերաբերող կանոնների իրականացման դիտանցում՝ համաձայն թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ),

ժթ) այն չափորոշիչների ճիշտ կիրառման դիտանցում, որոնցով որոշվում է պահեստի՝ 33(3)-րդ կամ (4)-րդ հողվածում ընդգրկվելը:

ի) երաշխիքային միջոցների իրականացման դիտանցում, ինչպես նշված է 46-րդ հողվածում,

իա) շուկայում իրականացվող ամենակարևոր գործընթացների մասով տվյալների փոխանակման գործընթացների համեմատելիության խթանում տարածաշրջանային մակարդակով:

2. Եթե անդամ պետությունը նախատեսում է այդպիսի դրույթներ, 1-ին պարբերությամբ սահմանված դիտանցման պարտականությունները կարող են իրականացվել կարգավորող մարմնից բացի, այլ մարմինների կողմից: Այդ դեպքում, այդպիսի դիտանցման արդյունքում ստացված տեղեկությունները հնարավորինս շուտ մատչելի են դարձվում կարգավորող մարմնին:

Պահպանելով նրանց անկախությունը, չսահմանափակելով նրանց հատուկ իրավասությունները և հավատարիմ մնալով առավել արդյունավետ կարգավորման սկզբունքներին՝ կարգավորող մարմինը, հարկ եղած դեպքում, խորհրդակցում է հաղորդման համակարգի օպերատորների հետ և, ըստ անհրաժեշտության, սերտորեն համագործակցում համապատասխան այլ ազգային մարմինների հետ 1-ին պարբերությամբ սահմանված պարտականություններն իրականացնելիս:

Կարգավորող մարմնի կամ Գործակալության կողմից սույն Հրահանգի համաձայն տրված որևէ հավանություն չի սահմանափակում կարգավորող մարմնի կողմից իր լիազորությունների պատշաճ կերպով հիմնավորված հետագա օգտագործումը՝ համաձայն սույն հոդվածի, կամ համապատասխան այլ մարմինների կամ Հանձնաժողովի կողմից սահմանված տույժերը:

3. Սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն վերապահված պարտականություններից բացի՝ 14-րդ հոդվածի համաձայն անկախ համակարգի օպերատորի նշանակումից հետո կարգավորող մարմինը՝

ա) դիտանցում է հաղորդման համակարգի սեփականատիրոջ և անկախ համակարգի օպերատորի կողմից սույն հոդվածի համաձայն նրանց վերապահված պարտականությունների կատարումը և սահմանում է տույժեր դրանց չկատարման դեպքում՝ 4(դ) պարբերությանը համապատասխան.

բ) դիտանցում է անկախ համակարգի օպերատորի և հաղորդման համակարգի սեփականատիրոջ միջև հարաբերությունները և կապերը՝ անկախ համակարգի օպերատորի կողմից իր պարտականությունների կատարումն ապահովելու համար, մասնավորապես՝ հաստատում է պայմանագրեր և հանդես գալիս որպես վեճեր կարգավորող մարմին անկախ համակարգի օպերատորի և հաղորդման համակարգի սեփականատիրոջ միջև՝ ցանկացած կողմի ներկայացրած բողոքի առնչությամբ՝ համաձայն 11-րդ պարբերության.

գ) չհակասելով 14(2)(գ) հոդվածի համաձայն սահմանված կարգին՝ առաջին տասնամյակի համար ցանցի զարգացման ծրագրի առնչությամբ հաստատում է ներդրումային ծրագրերը և անկախ համակարգի օպերատորի կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվող ցանցի զարգացման բազմամյա ծրագիրը:

դ) ապահովում է, որ անկախ համակարգի օպերատորի կողմից գանձված ցանցին միանալու վճարներում ներառվի ցանցի սեփականատիրոջ կամ ցանցի սեփականատերերի համար վարձատրությունը, որը ենթադրում է ցանցի ակտիվների և դրանցում կատարված ցանկացած նոր ներդրման համարժեք փոխհատուցում՝ պայմանով, որ դրանք շահավետ են ու արդյունարար, և

ե) իրավունք ունի տեսչական ստուգումներ՝ նաև առանց զգուշացման տեսչական ստուգումներ անցկացնելու հաղորդման համակարգի սեփականատիրոջը և անկախ համակարգի օպերատորին պատկանող շինություններում:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ կարգավորող մարմիններին վերապահվեն այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն կտան վերջիններիս 1-ին, 3-րդ և 6-րդ պարբերություններում նշված պարտականությունները կատարել արդյունավետ և արագ եղանակով: Այդ նպատակով՝ կարգավորող մարմինն ունի առնվազն հետևյալ լիազորությունները՝

ա) պարտադիր որոշումներ կայացնել բնական գազի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ:

բ) ուսումնասիրություններ կատարել գազի շուկայի գործունեության շուրջ և որոշում կայացնել ցանկացած անհրաժեշտ ու համաչափ միջոցի վերաբերյալ, որն ուղղված է արդյունավետ մրցակցության բարձրացման և շուկայի պատշաճ գործունեության ապահովմանը, ինչպես նաև սահմանել այդպիսի միջոցներ: Ըստ անհրաժեշտության՝ կարգավորող մարմինը մրցակցային իրավունքին առնչվող ուսումնասիրություն կատարելիս իրավունք ունի նաև համագործակցելու ազգային մրցակցային մարմնի և ֆինանսական շուկան կարգավորող մարմինների կամ Հանձնաժողովի հետ:

գ) բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներից պահանջել ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ է իր գործառույթներն իրականացնելու համար, այդ թվում՝ երրորդ կողմի միանալու հնարավորության մերժման հիմնավորումը, ինչպես նաև ցանկացած տեղեկություն ցանցն ուժեղացնելու համար անհրաժեշտ միջոցների մասին:

դ) սահմանել արդյունավետ, համաչափ ու տարհամոզիչ տույժեր գազի բնագավառի այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք չեն կատարում իրենց պարտականությունները համաձայն սույն Հրահանգի կամ կարգավորող մարմնի կամ Գործակալության կողմից կայացված իրավական պարտադիր ուժ ունեցող որոշումները, կամ առաջարկել, որ իրավասու դատարանը սահմանի այդպիսի տույժեր: Դա ներառում է սույն Հրահանգի համաձայն իրենց համապատասխան պարտականությունները չկատարելու համար՝ հաղորդման համակարգի օպերատորի վրա հաղորդման համակարգի օպերատորի տարեկան շրջանառության մինչև 10 %-ի չափով կամ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի վրա ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի տարեկան շրջանառության մինչև 10 %-ի չափով տույժեր սահմանելու կամ դրանք սահմանելու առաջարկի լիազորություն՝ ելնելով կոնկրետ դեպքից, ինչպես նաև ուսումնասիրություններ կատարելու համապատասխան իրավունքներ և վեճերի կարգավորման ցուցումների համապատասխան լիազորություններ՝ համաձայն 11-րդ և 12-րդ պարբերությունների, և

ե) տալ ուսումնասիրություններ կատարելու համապատասխան իրավունքներ և վեճերի կարգավորման ցուցումների համապատասխան լիազորություններ՝ համաձայն 11-րդ և 12-րդ պարբերությունների:

5. Ի հավելումն սույն հոդվածի 1-ին և 4-րդ պարբերությունների համաձայն դրան վերապահված պարտականությունների և իրավասությունների, երբ բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորը նշանակվել է IV գլխի համաձայն, կարգավորող մարմնին վերապահվում են առնվազն հետևյալ պարտականություններն ու իրավասությունները՝

ա) կիրառել պատասխանատվության միջոցներ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի օգտին խտրական վարքագծի համար 4(դ) պարբերության համաձայն.

բ) դիտանցել հաղորդակցումը բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի և ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի միջև՝ ապահովելու համար բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի կողմից իր պարտականությունների կատարումը.

գ) 11-րդ պարբերության համաձայն ներկայացվող բողոքի մասով ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի միջև գործել որպես վեճերի լուծման համար պատասխանատու մարմին.

դ) դիտանցել առևտրային և ֆինանսական կապերը, այդ թվում նաև փոխառությունները ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի միջև.

ե) հաստատել բոլոր առևտրային և ֆինանսական պայմանագրերը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի միջև պայմանով, որ դրանք բավարարում են շուկայի պայմանները.

զ) պահանջել հիմնավորում ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից, պարտականությունների կատարման համար պատասխանատուի կողմից 21(4) հոդվածի համաձայն ծանուցումն ստանալուց հետո: Այդ հիմնավորումը մասնավորապես ներառում է փաստեր առ այն, որ ոչ մի խտրական վարքագիծ ի օգուտ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի չի դրսևորվել.

է) իրականացնել տեսչական ստուգումներ այդ թվում նաև առանց զգուշացման տեսչական ստուգումներ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի մոտ, և

ը) հանձնարարել բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի բոլոր կամ կոնկրետ առաջադրանքները 14-րդ հոդվածի համաձայն նշանակված՝ համակարգի անկախ օպերատորին սույն Հրահանգի համաձայն բնական գազի հաղորդման (փոխադրման) համակարգի օպերատորի կողմից իր պարտականությունների մշտական խախտման դեպքում, մասնավորապես ի օգուտ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի շարունակական խտրական վարքագծի դեպքում:

6. Կարգավորող մարմինները պատասխանատու են բավարար կերպով նախօրոք սահմանելու կամ հաստատելու մինչ դրանց ուժի մեջ մտնելը առնվազն՝ ստորև ժամկետներ և պայմաններ հաշվարկելու կամ սահմանելու համար կիրառվող մեթոդաբանությունները ստորև նշվածի համար՝

ա) կապը և մուտքը ազգային ցանցեր, այդ թվում նաև փոխադրման և բաշխման սակագները և ժամկետները, և հեղուկացված բնական գազի կայանքներին մուտքի պայմանները և սակագները: Այդ սակագները կամ մեթոդաբանությունները հնարավորություն են տալիս, որպեսզի ցանցերում և հեղուկացված բնական գազի կայանքներում անհրաժեշտ ներդրումները կատարվեն այնպես, որ այդ ներդրումներով հնարավոր լինի ապահովել ցանցերի և հեղուկացված բնական գազի կայանքների կենսունակությունը.

բ) հավասարակշռման ծառայությունների մատուցում, որն իրականացվելու է տնտեսապես առավել արդյունավետ ձևով և համապատասխան միջոցներ տրամադրել ցանցից օգտվողներին իրենց ցանցին տրված և վերցված ծավալները հավասարակշռելու նպատակով: Հավասարակշռման ծառայությունները մատուցվում են արդար և ոչ խտրական ձևով և հիմնված է օբյեկտիվ չափորոշիչների վրա, և

գ) մուտք դեպի միջսահմանային ենթակառուցվածքները, այդ թվում նաև կարողությունների բաշխման և գերբեռնվածքի կառավարման ընթացակարգերը:

7. Վեցերորդ պարբերությունում նշված ժամկետները և պայմանները կամ մեթոդաբանությունները հրապարակվում են:

8. Սակագները կամ մեթոդաբանությունները և հավասարակշռման ծառայությունները սահմանելիս կամ հաստատելիս կարգավորող մարմիններն ապահովում են, որ փոխադրման և բաշխման համակարգի օպերատորներին տրվեն համապատասխան միջոցներ՝ ինչպես կարճաժամկետ այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով, խթանել շուկայի ինտեգրումը և մատակարարման ապահովությունը ու դրանց առնչվող հետազոտական աշխատանքներին աջակցելը:

9. Կարգավորող մարմինները դիտանցում են բնական գազի փոխադրման ցանցերի այդ թվում նաև միջպետական փոխմիացումների գերբեռնվածության կառավարումը և գերբեռնվածության կառավարման կանոնների կատարումը: Այս իսկ նպատակով փոխադրման համակարգի օպերատորները կամ շուկայի օպերատորները ներկայացնում են գերբեռնվածության կառավարման իրենց կանոնները, այդ թվում նաև կարողությունների բաշխումը ազգային կարգավորող մարմիններին: Ազգային կարգավորող մարմինները կարող են պահանջել այդ կանոններում փոփոխություններ կատարել:

10. Կարգավորող մարմինները իրավասու են պահանջել փոխադրման, պահման, հեղուկացված բնական գազի և բաշխման համակարգի օպերատորներից, հարկ եղած դեպքում, փոփոխել ժամկետները և պայմանները, այդ թվում նաև սույն հոդվածում նշված սակագները և մեթոդաբանությունները՝ ապահովելու համար դրանց համամասնական և ոչ խտրական ձևով կիրառումը: Եթե մուտքի ռեժիմը դեպի պահեստավորումը սահմանվում է 33(3) հոդվածի համաձայն, այդ առաջադրանքը բացառում է փոփոխություն սակագներում: Փոխադրման և բաշխման սակագները սահմանելու հարցում ձգձգումների դեպքում կարգավորող մարմինները իրավասու են սահմանել կամ հաստատել ժամանակավոր փոխադրման և բաշխման սակագներ կամ մեթոդաբանություններ և որոշում կայացնել



համապատասխան փոխհատուցման միջոցների շուրջ, եթե վերջնական սակագները կամ մեթոդաբանությունները շեղվում են այդ ժամանակավոր սակագներից կամ մեթոդաբանություններից:

11. Եթե որևէ կողմ ունի բողոքներ սույն Հրահանգի համաձայն օպերատորի՝ փոխադրման, պահման, հեղուկացված բնական գազի կամ բաշխման համակարգի օպերատորի պարտականությունների մասով, կարող է բողոքը ներկայացնել այն կարգավորող մարմնին, որը գործելով որպես վեճերի լուծման մասով պատասխանատու մարմին ընդունում է որոշում բողոքը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում: Այդ ժամանակահատվածը կարող է երկու ամսով հետաձգվել, եթե կարգավորող մարմիններին անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ: Այդ հետաձգված ժամանակահատվածը/ժամկետը կարող է ևս երկարաձգվել բողոքը ներկայացնողի համաձայնությամբ: Կարգավորող մարմնի որոշումը պարտադիր է, եթե կամ քանի դեռ այն չեղյալ չի համարվում բողոքարկման հիման վրա:

12. Ցանկացած անձ, ով ներգործություն է կրել կամ ով իրավունք ունի բողոքել սույն հոդվածի համաձայն ընդունված մեթոդաբանությունների մասով որոշումների շուրջ կամ, եթե կարգավորող մարմինը պարտավոր է սակագների կամ մեթոդաբանությունների շուրջ խորհրդակցել, կարող է ամենաուշը երկու ամսվա ընթացքում կամ առավել կարճ ժամանակահատվածում՝ ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից, որոշումը հրատարակելուց կամ որոշման մասով առաջարկությունից հետո բողոքը քննարկման/ուսումնասիրության ներկայացնել: Բողոքը կասեցնում է այդ որոշումների կատարումը:

13. Անդամ պետությունները ստեղծում են համապատասխան և արդյունավետ մեխանիզմներ կարգավորման, հսկողության և թափանցիկության համար՝ խուսափելու համար գերիշխող դիրքի չարաշահումից, մասնավորապես՝ ի վնաս սպառողների և ցանկացած այլ թալանչիական վարքագծի: Այդ մեխանիզմներում հաշվի են առնվում Պայմանագրի դրույթները և մասնավորապես դրա 82-րդ հոդվածը:

14. Անդամ պետություններն ապահովում են, որ համապատասխան միջոցներ ձեռնարկվեն, այդ թվում նաև վարչական ակտ կամ քրեական վարույթներ իրենց ազգային իրավունքին համապատասխան, այն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց դեմ, որոնք չեն պահպանել սույն Հրահանգով նախատեսվող կոնֆիդենցիալության կանոնները:

15. Տասնմեկերորդ և տասներկուերորդ պարբերություններում նշված բողոքները չպետք է հակասեն Համայնքի կամ ազգային իրավունքի համաձայն բողոքարկման իրավունքի իրականացմանը:

16. Իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումները ամբողջությամբ հիմնավորվում և պատճառաբանվում են՝ դատական վերանայման հնարավորություն ընձեռելու համար: Որոշումները մատչելի են հանրությանը՝ միաժամանակ պահպանելով առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների կոնֆիդենցիալությունը:

17. Անդամ պետություններն ապահովում են, որ հարմար մեխանիզմներ գործեն ազգային մակարդակով, որի ներքո կարգավորող մարմնի որոշման ազդեցությունը կրած կողմն իրավունք ունենա բողոքարկելու ներգրավված կողմերից և ցանկացած կառավարությունից անկախ մարմին:

#### *Հոդված 42*

#### **Միջսահմանային խնդիրների համար կարգավորման ռեժիմը**

1. Կարգավորող մարմինները սերտորեն խորհրդակցում և միմյանց հետ համագործակցում են և միմյանց ու Գործակալությանը տրամադրում են սույն Հրահանգի համաձայն իրենց առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկությունները: Փոխանակված տեղեկատվության կապակցությամբ այն ստացող մարմինը պետք է ապահովի կոնֆիդենցիալության նույն մակարդակը, որն ապահովում է այդ տեղեկատվությունը տրամադրող մարմինը:

2. Կարգավորող մարմինները համագործակցում են առնվազն տարածքային մակարդակով՝

ա) գործնական միջոցների ստեղծումը խթանելու համար՝ հնարավոր դարձնելու համար ցանցի օպտիմալ կառավարումը, խթանելու գազի համատեղ փոխանակումները և միջսահմանային կարողությունների բաշխումը և հնարավոր դարձնելու փոխմիացման կարողությունների համարժեք մակարդակը, այդ թվում նոր փոխմիացումների միջոցով, տարածաշրջանում և տարածաշրջանների միջև՝ հնարավոր դարձնելու արդյունավետ մրցակցության զարգացումը և մատակարարման ապահովության բարելավումը՝ խտրականություն չդնելով տարբեր անդամ պետություններում մատակարարող ընկերությունների միջև,

բ) համակարգելու համար ցանցի բոլոր ծածկագրերը փոխադրման համակարգի համապատասխան օպերատորների և շուկայի այլ մասնակիցների համար, և

գ) համակարգելու համար գերբեռնվածության կառավարումը կարգավորող կանոնների զարգացումը:

3. Ազգային կարգավորող մարմիններն իրավունք ունեն իրականացնել համագործակցային միջոցառումներ միմյանց հետ՝ կարգավորող համագործակցությունը խթանելու համար:

4. Երկրորդ պարբերությունում նշված գործողությունները, անհրաժեշտության դեպքում, իրականացվում են այլ համապատասխան ազգային մարմինների հետ սերտ խորհրդակցությամբ և չհակասելով իրենց կոնկրետ իրավասություններին:

5. Հանձնաժողովը կարող է ընդունել ուղեցույց միմյանց հետ կամ Գործակալության հետ համագործակցելու համար կարգավորող մարմինների պարտավորությունների շրջանակի մասին: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսվող ակտերը պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորող ընթացակարգին համապատասխան:

#### *Հոդված 43*

#### **Համապատասխանությունն ուղեցույցի հետ**

1. Յուրաքանչյուր կարգավորող մարմին և Հանձնաժողով կարող է պահանջել Գործակալության կարծիքը սույն Հրահանգում կամ թիվ 715/2009 կանոնակարգում նշված ուղեցույցի հետ կարգավորող մարմնի կողմից ընդունվող որոշման համապատասխանության մասին:

2. Գործակալությունն իր եզրակացությունն է ներկայացնում կարգավորող մարմնին, որն այն պահանջել է կամ Հանձնաժողովին համապատասխանաբար, և կարգավորող մարմնին, որն ընդունել է համապատասխան որոշում դիմումը/պահանջը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում:

3. Եթե որոշում ընդունած կարգավորող մարմինը չի համապատասխանում Գործակալության եզրակացության հետ այդ եզրակացությունը ստանալուց հետո չորս ամսվա ընթացքում Գործակալությունն համապատասխանաբար տեղեկացնում է Հանձնաժողովին:

4. Ցանկացած կարգավորող մարմին կարող է տեղեկացնել Հանձնաժողովին, եթե այն համարում է, որ կարգավորող մարմնի կողմից ընդունված միջսահմանային առևտրի համար կարևոր որոշումը չի համապատասխանում թիվ 715/2009 Կանոնակարգում կամ սույն Հրահանգում նշված ուղեցույցի հետ այդ որոշման ընդունման ամսաթվից հետո երեք ամսվա ընթացքում:

5. Եթե Հանձնաժողովը, Գործակալության կողմից երկու ամսվա ընթացքում 3-րդ պարբերության համաձայն կամ կարգավորող մարմնի կողմից 4-րդ պարբերության համաձայն տեղեկանալուց հետո կամ իր սեփական նախաձեռնությամբ որոշումն ընդունելուց հետո երեք ամսվա ընթացքում, գտնում է, որ կարգավորող մարմնի որոշումը լուրջ կասկածների տեղիք է տալիս սույն Հրահանգում կամ թիվ 715/2009 Կանոնակարգում նշված ուղեցույցի հետ համատեղելիության մասով, Հանձնաժողովը կարող է որոշել դեպքն առավել մանրամասն ուսումնասիրել: Նման դեպքում այն հրավիրում է կարգավորող մարմնին և կողմերին կարգավորող մարմնի նիստերին՝ իրենց դիտարկումները ներկայացնելու նպատակով:

6. Եթե Հանձնաժողովը որոշում է գործն առավել մանրամասն ուսումնասիրել, այն այդ որոշումն ընդունելուց հետո չորս ամսվա ընթացքում վերջնական որոշում է ընդունում՝

ա) կարգավորող մարմնի որոշման դեմ առարկություններ առաջ չքաշել, կամ

բ) պահանջել համապատասխան կարգավորող մարմնից չեղյալ ճանաչել իր կողմից ընդունած որոշումը, ելնելով այն հանգամանքներից, որ ուղեցույցի պահանջները չեն կատարվել:

7. Եթե Հանձնաժողովը չի ընդունել որոշում՝ գործը կամ կամ վերջնական որոշումը համապատասխանաբար առավել մանրամասն ուսումնասիրելու նպատակով 5-րդ և 6-րդ պարբերություններում սահմանված ժամկետներում, համարվում է, որ այն կարգավորող մարմնի որոշման մասով առարկություններ առաջ չի քաշել:

8. Կարգավորող մարմինը համապատասխանում է երկու ամսվա ընթացքում իր որոշումը չեղյալ ճանաչելու մասին Հանձնաժողովի որոշմանը և տեղեկացնում է համապատասխանաբար Հանձնաժողովին:

9. Հանձնաժողովը կարող է ընդունել ընթացակարգի մանրամասները սահմանող ուղեցույց, որին պետք է հետևեն կարգավորող մարմինները, Գործակալությունը և Հանձնաժողովը սույն հոդվածում նշված ուղեցույցի հետ կարգավորող մարմինների կողմից ընդունած

որոշումների համապատասխանության մասով: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

#### *Հոդված 44*

### **Տվյալների վարումը**

1. Անդամ պետությունները պահանջում են մատակարարող ձեռնարկություններից պահել ազգային մարմինների, այդ թվում նաև կարգավորող մարմնի, ազգային իրավասության մարմինների և Հանձնաժողովի հայեցողության տակ իրենց առաջադրանքների կատարման համար առնվազն հինգ տարվա համար գազի մատակարարման պայմանագրերում բոլոր գործարքներին առնչվող համապատասխան տվյալները և մեծածախ հաճախորդների և փոխադրման համակարգի օպերատորների ինչպես նաև պահեստավորման/պահման և հեղուկացված բնական գազի օպերատորների հետ կնքած գազի մատակարարման երկրորդային պայմանագրերը:
2. Տվյալները ներառում են համապատասխան գործարքների բնութագրերի մասին մանրամասներ, ինչպես օրինակ՝ տևողության, առաքման և հաշվարկի կանոնները, քանակը, կատարման ամսաթվերը և ժամանակը և գործարքի գները և համապատասխան մեծածախ հաճախորդի նույնականացման միջոցները, ինչպես նաև գազի բոլոր չկնքված մատակարարման պայմանագրերի և գազի մատակարարման երկրորդային պայմանագրերի կոնկրետ տրված մանրամասները:
3. Կարգավորող մարմինը կարող է որոշել շուկայի մասնակիցների համար մատչելի դարձնել այդ տեղեկությունների տարրերը, պայմանով, որ առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունները շուկայի առանձին մասնակիցների կամ առանձին գործարքների մասին չեն տրամադրվում: Սույն պարբերությունը չի կիրառվում ֆինանսական գործիքների մասին այն տեղեկությունների նկատմամբ, որոնք կարգավորվում են 2004/39/ԵՀ հրահանգով:
4. Ապահովելու համար սույն հոդվածի միասնական կիրառումը Հանձնաժողովը կարող է ընդունել ուղեցույց, որով սահմանվում են մեթոդներ և միջոցներ՝ տվյալների վարման, ինչպես նաև տվյալների ձևի և բովանդակության համար, որոնք պետք է պահպանվեն:

Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 51(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

5. Մեծածախ հաճախորդներ ունեցող մատակարարող ձեռնարկությունների գազի մատակարարման երկրորդային պայմանագրերի մասով գործարքների և փոխադրման համակարգի օպերատորների ինչպես նաև պահման և հեղուկացված բնական գազի օպերատորների մասով սույն հոդվածը կիրառվում է 4-րդ պարբերությունում նշված ուղեցույցը Հանձնաժողովի կողմից ընդունելուց անմիջապես հետո:

6. Սույն հոդվածի դրույթները չեն առաջացնում լրացուցիչ պարտավորություններ 1-ին պարբերությունում նշված լիազորությունների մասով 2004/39/ԵՀ հրահանգով կարգավորվող ընկերությունների համար:

7. Եթե 1-ին պարբերությունում նշված մարմիններին անհրաժեշտ լինի մուտքը 2004/39/ԵՀ հրահանգով կարգավորվող ընկերությունների/ձեռնարկությունների կողմից տնօրինվող տվյալներին, այդ Հրահանգի համաձայն պատասխանատու մարմինները պետք է դրանք տրամադրեն պահանջվող տվյալների հետ մեկտեղ:

**ՄԱՆՐԱԾԱԽ ՇՈՒԿԱՆԵՐԸ**

*Հոդված 45*

**Մանրածախ շուկաները**

Դյուրացնելու համար Համայնքում արդյունավետ գործող և թափանցիկ մանրածախ շուկաների առաջացումը, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխադրման համակարգի օպերատորների դերերը և պատասխանատվությունները, բաշխման համակարգի օպերատորները, մատակարարման համակարգի օպերատորները, մատակարարող ձեռնարկությունները և հաճախորդները և, անհրաժեշտության դեպքում, շուկայի այլ կողմերը սահմանվում են պայմանագրային միջոցառումների, հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտավորությունների, տվյալների փոխանակման և հաշվարկային կանոնների, տվյալների սեփականության և չափման պատասխանատվության մասով:

Այդ կանոնները մատչելի են հանրությանը, նախագծվում են հաճախորդների և մատակարարների մուտքը ցանցեր դյուրինացնելու նպատակով, և դրանք ենթակա են վերանայման/ուսումնասիրության կարգավորող մարմինների կամ այլ համապատասխան ազգային մարմինների կողմից:

**ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

*Հոդված 46*

**Պաշտպանական միջոցները**

1. Էներգետիկայի շուկայում անսպասելի ճգնաժամի դեպքում կամ եթե անձանց, գործիքների կամ հարմարանքների ֆիզիկական անվտանգությունը կամ ապահովությունը կամ համակարգի ամբողջականությունը վտանգված են, անդամ պետությունները կարող է ժամանակավոր անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներ ձեռնարկել:
2. Նման միջոցները պետք է նվազագույն հնարավոր ներքին շուկայի աշխատանքը և չպետք է ընդգրկեն ավելի լայն շրջանակներ, քան անհրաժեշտ է անսպասելիորեն առաջացած դժվարությունները հաղթահարելու համար:
3. Շահագրգիռ անդամ պետություններն անհապաղ ծանուցում են այդ միջոցների մասին այլ անդամ պետություններին կամ Հանձնաժողովին, որոնք կարող են որոշել, որ շահագրգիռ անդամ պետությունը պետք է փոփոխի կամ վերացնի այդ միջոցները, եթե դրանք խաթարում են մրցակցությունը և բացասաբար են անդրադառնում առևտրի վրա այնպես, որ այն հակասում է ընդհանուր շահերին:

*Հոդված 47*

**Հավասար մրցակցային պայմանները**

1. Այն միջոցները, որ անդամ պետությունները կարող են ձեռնարկել սույն Հրահանգի համաձայն՝ ապահովելու համար հավասար մրցակցային պայմաններ, պետք է համատեղելի լինեն Պայմանագրի հետ, մասնավորապես դրա 30-րդ հոդվածին և Համայնքի օրենսդրությանը:
2. Առաջին պարբերությունում նշված միջոցները պետք է լինեն համամասնական, ոչ խտրական և թափանցիկ: Այդ միջոցները կարող են ուժի մեջ դրվել միայն Հանձնաժողովին ծանուցելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո:



3. Հանձնաժողովը գործում է 2-րդ պարբերությունում նշված ծանուցման մասով ծանուցումը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում: Այդ ժամանակահատվածը մեկնարկում է լրիվ տեղեկությունները ստանալուն հաջորդող օրը: Եթե Հանձնաժողովը չի գործել երկու ամսվա ընթացքում, այն համարվում է, որ չի վեր հանել առարկություններ ծանուցված միջոցների մասով:

#### *Հոդված 48*

### **Ապրանքը գնելու կամ ուշացման համար վճարելու պարտականությունների մասով շեղումները/վերապահումները**

1. Եթե բնական գազի ձեռնարկությունը բախվում է կամ կարող է բախվել լուրջ տնտեսական և ֆինանսական դժվարությունների, գազի գնման մեկ կամ մի քանի պայմանագրերում ընդունված՝ դրա՝ ապրանքը գնելու կամ ուշացման համար պարտականությունների պատճառով, այն կարող է դիմում ուղարկել 32-րդ հոդվածից ժամանակավոր վերապահման համար շահագրգիռ անդամ պետությանը կամ նշանակված իրավասու մարմին: Դիմումները անդամ պետությունների ընտրության համաձայն ներկայացվում են ելնելով կոնկրետ դեպքից համակարգ մուտք գործելը մերժելուց հետո կամ առաջ: Անդամ պետությունները նույնպես կարող են տալ բնական գազի ձեռնարկությանը դիմումը ներկայացնելու հնարավորություն համակարգ մուտք գործելը մերժելուց հետո կամ առաջ: Եթե բնական գազի ձեռնարկությունը մերժել է մուտքը, դիմումն անհապաղ ներկայացվում է: Դիմումներին կից ներկայացվում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հիմնախնդրի բնույթի, ինչպես նաև ծավալի մասին և հիմնախնդիրը լուծելու համար բնական գազի ձեռնարկությունների կողմից ձեռնարկվող միջոցների մասին:

Եթե այլընտրանքային լուծումները հիմնավոր պատճառներով բացակայում են և հաշվի առնելով 3-րդ պարբերությունը, անդամ պետությունը կամ նշանակված իրավասու մարմինը կարող է որոշել վերապահում շնորհել:

2. Անդամ պետությունը կամ նշանակված իրավասու մարմինն անհապաղ ծանուցում են Հանձնաժողովին վերապահում շնորհելու մասին իր որոշման մասին վերապահման մասով բոլոր համապատասխան տեղեկությունների հետ մեկտեղ: Այդ տեղեկությունները կարող են ներկայացվել Հանձնաժողովին համախմբված ձևով՝ հնարավորություն տալով Հանձնաժողովին ընդունելու հիմնավորված որոշում: Այդ ծանուցումը ստանալուց հետո ութ շաբաթվա ընթացքում Հանձնաժողովը կարող է պահանջել, որ անդամ պետությունը կամ

շահագրգիռ նշանակված իրավասու մարմինը փոփոխեն կամ չեղյալ հայտարարեն վերապահում շնորհելու մասին որոշումը:

Եթե անդամ պետությունը կամ շահագրգիռ նշանակված իրավասու մարմինը չեն համապատասխանում այդ պահանջին չորս շաբաթվա ընթացքում, վերջնական որոշումն անհապաղ ընդունվում է 51(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն:

Հանձնաժողովը պետք է պահպանի առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների կոնֆիդենցիալությունը:

3. Առաջին պարբերություն նշված շեղումների շուրջ որոշումներ կայացնելիս անդամ պետությունը կամ նշանակված իրավասու մարմինը և Հանձնաժողովը հաշվի են առնում մասնավորապես հետևյալ չափորոշիչները՝

ա) գազի մրցակցային շուկա ստեղծելու նպատակը.

բ) հանրային ծառայությունների մասով պարտավորությունները կատարելու և մատակարարման ապահովությունը երաշխավորելու անհրաժեշտությունը.

գ) գազի շուկայում բնական գազի ընկերության դիրքը և այդ շուկայում մրցակցության առկա վիճակը.

դ) բնական գազի ընկերությունների ինչպես նաև փոխադրման ընկերությունների կամ հնարավոր հաճախորդների մոտ տնտեսական և ֆինանսական դժվարությունների լրջությունը.

ե) համապատասխան պայմանագրի կամ պայմանագրերի ստորագրման ամսաթվերը և պայմանները, այդ թվում նաև այն թե ինչքանով են դրանք թույլ տալիս շուկայի փոփոխությունները.

զ) հիմնախնդրին լուծում գտնելու համար գործադրած ջանքերը.

է) այնքան թե ստանձնելով համապատասխան “վերցնել կամ վճարել” պարտականությունները ընկերությունը կարող է հիմնավորված ձևով կանխատեսել՝ հաշվի առնելով սույն Հրահանգի դրույթները, որ կարող էին առաջանալ լուրջ դժվարություններ.

ը) այլ համակարգերի հետ համակարգի կապի մակարդակը և այդ համակարգերի փոխգործողության աստիճանը.

թ) բնական գազի ներքին շուկայի բնականոն գործունեության մասով սույն Հրահանգի ճիշտ կիրառման մասով շեղում շնորհելու հետևանքները:

2003 թվականի օգոստոսի 4-ին կնքված 'վերցնել կամ վճարել' պայմանագրերի մասին վերապահման մասով պահանջի մասին որոշումը չպետք է հանգեցնի այնպիսի իրավիճակի, որտեղ հնարավոր չէ գտնել տնտեսապես կենսունակ այլընտրանքային արդյունքները: Լուրջ դժվարությունները ամեն դեպքում կարող են համարվել որ գոյություն չունեն, եթե բնական գազի վաճառքը չի ընկնում գազի գնման "վերցրու կամ վճարիր" պայմանագրերով սահմանված նվազագույն բաշխման երաշխիքների մակարդակից ցածր կամ այնքանով, որքանով գազի գնման "վերցրու կամ վճարիր" պայմանագիրը կարող է հարմարեցվել կամ բնական գազի ընկերությունը կարող է գտնել այլընտրանքային արդյունքները:

4. Բնական գազի ընկերությունները, որոնց ինչպես նշված է սույն հոդվածի առաջին պարբերությունում վերապահում չի շնորհվել չպետք է մերժեն կամ այլևս չմերժեն մուտքը համակարգ գազի գնման պայմանագրում ընդունված "վերցրու-կամ վճարիր" պարտավորությունների պատճառով: Անդամ պետությունները ապահովում են, որ կատարվեն 32ից 44-րդ հոդվածների համապատասխան դրույթները:

5. Վերը նշված դրույթների համաձայն շնորհված ցանկացած վերապահում պետք է պատշաճ կերպով հիմնավորվի: Հանձնաժողովը որոշումը հրապարակում է Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում:

6. Հանձնաժողովը 2008 թվականի օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում ներկայացնում է սույն հոդվածի կիրառման արդյունքում ձեռք բերված փորձի մասին ամփոփ զեկույց՝ հնարավորություն տալու Եվրոպականի միությանը կամ Խորհրդին վերլուծելու պատշաճ կերպով այն հարմարեցնելու անհրաժեշտությունը:

#### *Հոդված 49*

#### **Զարգացող և մեկուսացած շուկաներ**

1. Անդամ պետությունները, որոնք ուղղակիորեն կապված չեն որևէ անդամ պետության փոխկապակցված համակարգի և որոնք ունեն միայն մեկ արտաքին մատակարար կարող է շեղվել 4, 9, 37 և/կամ 38 հոդվածներից: Մատակարարող ընկերությունը, որն ունի ավելի քան 75% շուկայական բաժին համարվում է հիմնական մատակարարը: Ցանկացած նման շեղում ավտոմատ կերպով լրանում է, եթե այլևս չի կիրառվում սույն ենթապարբերությունում

նշված պայմաններից առնվազն մեկը: Ցանկացած նման շեղում ծանուցվում է Հանձնաժողովին:

Կիպրոսը կարող է շեղում կատարել 4, 9, 37 և/կամ 38 հոդվածներից: Նման շեղումը լրանում է այն պահից, երբ Կիպրոսը չի բավարարում մեկուսացված շուկա լինելու մասով պահանջները:

4, 9, 37 և/կամ 38 հոդվածները չեն կիրառվում Էստոնիայի, Լատվիան և/կամ Ֆինլանդիան, մինչև այդ անդամ պետություններից որևէ մեկը ուղղակիորեն միանա Էստոնիայից, Լատվիայից, Լիտվայից և Ֆինլանդիայից բացի այլ անդամ պետության փոխմիացված համակարգին: Սույն ենթապարբերությունը չի հակասում սույն պարբերության առաջին ենթապարբերության համաձայն շեղումներին:

2. Անդամ պետությունը, որը բավարարում է ստեղծվող շուկայի մասով պահանջները, որը սույն Հրահանգի կիրարկման պատճառով զգալի հիմնախնդիրներ կունենա, կարող է շեղվել 4-րդ և 9-րդ հոդվածներից, 13(1) և (3), 14-րդ և 24-րդ, 25(5), 26-րդ, 31-րդ և 32-րդ, 37(1) և/կամ 38-րդ հոդվածներից: Նման շեղումը ավտոմատ կերպ լրանում է այն պահից, երբ անդամ պետությունն այլևս չի բավարարում առաջացող շուկայի պահանջները: Ցանկացած նման շեղում ծանուցվում է Հանձնաժողովին:

Կիպրոսը կարող է շեղում կատարել 4-րդ և 9-րդ, 13(1) և (3), 14-րդ և 24-րդ, 25(5), 26-րդ, 31-րդ և 32-րդ, 37(1) և/կամ 38-րդ հոդվածներից: Այդ վերապահումը լրանում է այն պահից, երբ Կիպրոսը չի բավարարում ստեղծվող շուկայի պահանջները:

3. Այն օրը, երբ 2-րդ պարբերության առաջին ենթապարբերությունում նշված շեղումը լրանում է, պահանջները բավարարող հաճախորդների սահմանումը հանգեցնում է բնական գազի շուկայի գազի ընդհանուր տարեկան սպառման առնվազն 33 %-ին հավասար շուկայի բացմանը: Երկու տարի անց 37(1)(բ) հոդվածը կիրառվում է և դրանից երեք տարի անց կիրառվում է 37(1)(գ) հոդվածը: Մինչ 37(1)(բ) հոդվածի կիրառումը սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել 32-րդ հոդվածը եթե խոսքը գնում է օժանդակ ծառայությունները և ժամանակավոր պահեստավորումը վերագազալցման գործընթացի համար և դրա հետագա բաշխումը փոխադրման համակարգին:

4. Եթե սույն Հոդվածի կիրառումը չի հանգեցնում զգալի հիմնախնդիրների անդամ պետության աշխարհագրորեն սահմանափակված տարածքում, մասնավորապես փոխադրման և խոշոր բաշխման ենթակառուցվածքի զարգացման մասով և խթանելու

համար ներդրումները, անդամ պետությունը կարող է կիրառել հանձնաժողովի նկատմամբ ժամանակավոր շեղում 4-րդ և 9-րդ, 13(1) և (3), 14-րդ և 24-րդ, 25(5), 26-րդ, 31-րդ և 32-րդ, 37(1) և/կամ 38-րդ հոդվածից այդ տարածքում զարգացումների համար:

5. Հանձնաժողովը կարող է շնորհել 4-րդ պարբերությունում նշված շեղում՝ հաշվի առնելու մասնավորապես՝ հետևյալ չափորոշիչները՝

ենթակառուցվածքային ներդրումների անհրաժեշտություն, ինչը չի լինի տնտեսական գործելու մրցակցային շուկայական միջավայրում.

- պահանջվող ներդրումների մակարդակը և մարման հեռանկարները.

- համապատասխան տարածքում գազի համակարգի ծավալը և զարգացումը.

- համապատասխան գազի շուկայի համար հեռանկարները.

- համապատասխան տարածքի կամ տարածաշրջանի աշխարհագրական չափսը և բնութագրերը և սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործոնները:

Բաշխման ենթակառուցվածքից բացի այլ գազի ենթակառուցվածքի համար շեղում կարող է շնորհվել միայն եթե այդ տարածքում չի ստեղծվել ոչ մի գազի ենթակառուցվածք կամ եթե գազի ենթակառուցվածքը սահմանվել է ոչ ավել քան տաս տարվա համար: Ժամանակավոր շեղումը չի գերազանցում 10 տարին այն ժամանակվանից, երբ գազն առաջին անգամ մատակարարվում է այդ տարածքում:

Բաշխման ենթակառուցվածքի համար շեղումը կարող է շնորհվել այն ժամանակահատվածի համար, որը չի գերազանցում 20 տարին այն ժամանակվանից, երբ գազն առաջին անգամ մատակարարվել է տարածքում նշված ենթակառուցվածքի միջոցով:

6. Իններորդ հոդվածը չի կիրառվում Կիպրոսի, Լյուքսեմբուրգի և/կամ Մալթայի նկատմամբ:

7. Հանձնաժողովը տեղեկացնում է անդամ պետություններին այն դիմումների մասին, որոնք ներկայացվել են 4-րդ պարբերության համաձայն՝ մինչ 5-րդ պարբերության համաձայն որոշման ընդունումը՝ հաշվի առնելով կոնֆիդենցիալության պահպանումը: Այդ որոշումը, ինչպես նաև 1-ին և 2-րդ պարբերությունում նշված շեղումները հրատարակվում են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

8. Հունաստանը կարող է շեղվել սույն Հրահանգի 4, 24, 25, 26, 32, 37 և/կամ 38-րդ հոդվածներից աշխարհագրական տարածքների և դրա կողմից տրված լիցենզիաներում

նշված ժամանակահատվածներով մինչ 2002 թվականի մարտի 15-ը և 98/30/ԵՀ հրահանգի համաձայն՝ որոշակի աշխարհագրական տարածքներում բաշխման ցանցերի զարգացման և բացառիկ շահագործման համար:

### *Հոդված 50*

#### **Վերանայման ընթացակարգերը**

Եթե 52(6) հոդվածում նշված զեկույցում Հանձնաժողովը հասնում է այն եզրակացության, որ հաշվի առնելով այն արդյունավետ ձևը, որտեղ մուտքը ցանց իրականացվում է անդամ պետությունում՝ ինչը առաջացնում է՝ ամբողջությամբ արդյունավետ, ոչ խտրական և չխոչընդոտվող մուտք ցանցին՝ ընկերությունների նկատմամբ սույն Հրահանգով սահմանված որոշակի պարտականությունները (այդ թվում նաև բաշխման համակարգի օպերատորների համար օրինական անջատման մասով) համամասնական չեն հետապնդվող նպատակին, համապատասխան անդամ պետությունը կարող է Հանձնաժողովին պահանջ ներկայացնել համապատասխան պահանջը վերջինիս նկատմամբ չկիրառելու նպատակով:

Այդ պահանջի մասին անդամ պետությունն անհապաղ ծանուցում է Հանձնաժողովին համապատասխան ամբողջ այն տեղեկատվության հետ մեկտեղ, որն անհրաժեշտ է ցուցադրելու, որ ցանցին ապահովված արդյունավետ մուտքի մասին զեկույցում կայացված եզրակացությունը կպահպանվի:

Ծանուցումը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Հանձնաժողովը կայացնում է եզրակացություն համապատասխան անդամ պետության կողմից պահանջի մասով և, հարկ եղած դեպքում, առաջարկություններ է ներկայացնում Եվրոպական հանձնաժողովին և Խորհրդին՝ փոփոխելու համար սույն Հրահանգի համապատասխան դրույթները: Հանձնաժողովը կարող է սույն Հրահանգը փոփոխելու առաջարկություններում առաջարկել համապատասխան անդամ պետության նկատմամբ չկիրառել կոնկրետ պահանջներ, որոնք կատարվում են հարկ եղած դեպքում հավասարապես արդյունավետ միջոցներ կիրառող անդամ պետության կողմից:

## Հոդված 51

### Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

## Հոդված 52

### Հաշվետվություններ ներկայացնելը

1. Հանձնաժողովը դիտանցում և ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառումը և ներկայացնում է ընդհանուր ընթացիկ հաշվետվություն Եվրոպական պառլամենտին և Խորհրդին առաջին անգամ մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը և այնուհետև՝ տարեկան կտրվածքով: Ընթացիկ հաշվետվությունն առնվազն ներառում է՝
  - ա) բնական գազի ամբողջական և լրիվ գործող ներքին շուկա ստեղծելու գործում ձեռք բերված փորձը և կատարված առաջընթացը և այն խոչընդոտերը, որոնք մնում են այս առումով այդ թվում նաև շուկայի գերակշռումը, համակենտրոնացումը շուկայում, թալանչիական կամ հակամրցակցային վարքագիծ.
  - բ) սույն Հրահանգի համաձայն շնորհված շեղումները, այդ թվում նաև 26(4) հոդվածով նախատեսվող շեղման իրականացումը՝ շեմի հնարավոր վերանայման նպատակով.
  - գ) այն, թե ինչքանով սույն Հրահանգով սահմանված տարանջատման և տարիֆիկացման պահանջներն արդյունավետ կերպով են կատարվել Համայնքի գազի համակարգ և մրցակցության համարժեք մակարդակների արդար և ոչ խտրական մուտք ապահովելու գործում, ինչպես նաև հաճախորդների համար գազի շուկայի բացման տնտեսական, բնապահպանական և սոցիալական հետևանքները.

դ) Համայնքում բնական գազի մատակարարման ապահովությունը/անվտանգության և համակարգի կարողությունների մակարդակների հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը և մասնավորապես առաջարկի և պահանջարկի միջև առկա և նախատեսվող հավասարակշռությունը՝ հաշվի առնելով տարածքների և պահման զարգացման միջև փոխանակումների համար ֆիզիկական կարողությունը (այդ թվում նաև այդ ոլորտում շուկայի կարգավորման համամասնության հարցը)։

ե) հատուկ ուշադրություն պետք է դարձվի անդամ պետություններում ձեռնարկվող միջոցներին՝ ծածկելու համար առավելագույն պահանջարկը և մեկ կամ ավելին մատակարարների բացթողումները շտկելու համար։

զ) այն երրորդ երկրների հետ երկկողմ հարաբերությունների մասով ունեցած ընդհանուր գնահատումը, որոնք արտադրում և արտահանում կամ փոխադրում են բնական գազ, այդ թվում նաև շուկայի ինտեգրման, առևտրի և այդ երրորդ երկրներ ցանցեր մուտք գործելու հարցում առաջընթացը։

է) հնարավոր ներդաշնակեցման պահանջների անհրաժեշտությունը, որոնք կապված են սույն Հրահանգի դրույթների հետ։

Հարկ եղած դեպքում, ընթացիկ հաշվետվությունը կարող է ներառել առաջարկություններ և միջոցներ՝ պայքարելու համար շուկայի գերիշխանության և շուկայի համակենտրոնացման բացասական ազդեցությունների դեմ։

Սույն հաշվետվությունում Հանձնաժողովը Գազի համար ENTSO-ի հետ խորհրդակցությամբ նույնպես կարող է դիտարկել փոխադրման համակարգի օպերատորների կողմից միասնական եվրոպական փոխադրման համակարգի օպերատորի ստեղծման իրատեսելիությունը/իրագործելիությունը։

2. Երկու տարին մեկ 1-ին պարբերությունում նշված ընթացիկ հաշվետվությունը նույնպես ներառում է անդամ պետություններում ձեռնարկված տարբեր միջոցների վերլուծությունը՝ բավարարելու համար հանրային ծառայության պարտավորությունները այդ միջոցների արդյունավետության ուսումնասիրության հետ մեկտեղ և մասնավորապես՝ գազի շուկայում մրցակցության վրա դրանց ներգործությունները։ Հարկ եղած դեպքում, հաշվետվությունը կարող է ներառել առաջարկություններ հանրային ծառայության բարձր ստանդարտների հասնելու համար ազգային մակարդակով ձեռնարկվելիք միջոցների կամ շուկայի սահմանափակման կանխմանն ուղղված միջոցների մասով։



3. Հանձնաժողովը մինչ 2013 թվականի մարտի 3-ը որպես ընդհանուր ուսումնասիրության մի մաս Եվրոպական պառլամենտը և Խորհուրդը ներկայացնում են մանրամասն կոնկրետ հաշվետվություն, որտեղ ուրվագծվում է այն, թե ինչքանով IV գլխի համաձայն պահանջներն արդյունավետ են եղել փոխադրման համակարգի օպերատորների լրիվ և արդյունավետ անկախության ապահովման գործում՝ կիրառելով արդյունավետ և էֆեկտիվ տարանջատումը որպես հենանիշ:

4. Երրորդ պարբերության համաձայն իր գնահատման նպատակով Հանձնաժողովը հաշվի է առնում մասնավորապես հետևյալ չափորոշիչները՝

արդար և ոչ խտրական մուտք ցանցին, արդյունավետ կարգավորում, շուկայի կարիքները բավարարելու համար ցանցի զարգացում, համար չխեղաթյուրված խթաններ ներդրումներ կատարելու համար, փոխմիացման ենթակառուցվածքի զարգացում, Համայնքի էներգետիկայի շուկաներում արդյունավետ մրցակցություն և Համայնքում մատակարարման իրավիճակի ապահովությունը:

5. Հարկ եղած դեպքում և մասնավորապես եթե 3-րդ պարբերությունում նշված մանրամասն կոնկրետ հաշվետվությամբ սահմանված 4-րդ պարբերությունում նշված պայմանները գործնականում չեն երաշխավորվել, Հանձնաժողովը ներկայացնում է առաջարկություններ Եվրոպական պառլամենտին և Խորհրդին՝ ապահովելու համար մինչև 2014 թվականի մարտի 4-ը փոխադրման համակարգի օպերատորների լրիվ արդյունավետ անկախությունը:

6. Հանձնաժողովը ոչ ուշ քան 2006 թվականի հունվարի 1-ը Եվրոպական պառլամենտին ներկայացնում է մանրամասն զեկույց, որտեղ ուրվագծվում է առաջընթացը բնական գազի ներքին շուկայի ստեղծման հարցում: Այդ հաշվետվությունում մասնավորապես շոշափվում են՝

- ցանցին ոչ խտրական մուտքի առկայությունը,

- արդյունավետ կարգավորում,

- փոխմիացման ենթակառուցվածքի զարգացում, տարանցման պայմաններ և Համայնքում մատակարարման իրավիճակի ապահովությունը,

- այնքան, թե որքան շուկայի բացման լրիվ օգուտները կուտակվում են փոքր ձեռնարկությունների և կենցաղային սպառողների, հատկապես հանրային ծառայության ստանդարտների մասով,

- այնքանով, թե որքան շուկաները գործնականում բաց են արդյունավետ մրցակցությանը՝ այդ թվում նաև շուկայի գերակայությանը, շուկայի համակենտրոնացմանը և թալանչիական կամ հակամրցակցային վարքագծին,
- այնքան, որքան հաճախորդները փաստացի փոխում են մատակարարներին և վերաբանակցում են սակագների շուրջ,
- գների զարգացումները, այդ թվում նաև մատակարարման գները շուկաների բացման աստիճանի/մակարդակի հետ կապված,
- թե արդյունավետ և ոչ խտրական երրորդ կողմի մուտքը գազի պահեստ առկա է, երբ տեխնիկապես և/կամ տնտեսապես անհրաժեշտ է համակարգին արդյունավետ մուտք ապահովելու նպատակով,
- սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձը այնքանով, որքանով համակարգի օպերատորների արդյունավետ անկախությունն ուղղահայաց ձևով ինտեգրված ընկերություններում կարևոր է և, թե այլ միջոցները հաշիվների ֆունկցիոնալ անկախության և բաժանունից բացի զարգացել են, որոնք ունեն օրինական տարանջատ ազդեցություններին համարժեք:

Հարկ եղած դեպքում, Հանձնաժողովը ներկայացնում է առաջարկություններ Եվրոպական պառլամենտին և Խորհրդին՝ մասնավորապես երաշխավորելու համար հանրային ծառայության բարձր ստանդարտները:

Հարկ եղած դեպքում, Հանձնաժողովը ներկայացնում է առաջարկություններ Եվրոպական պառլամենտին և Խորհրդին մասնավորապես՝ ապահովելու համար մինչ 2007 թվականի հուլիսի 1-ը բաշխման համակարգի օպերատորների լրիվ և արդյունավետ անկախությունը: Անհրաժեշտության դեպքում, այն առաջարկությունները, որոնք համապատասխանում են մրցակցային իրավունքին, նույնպես վերաբերում են այն միջոցներին, որոնք հասցեագրում են շուկայի գերակայությանը, շուկայի համակենտրոնացմանը և թալանչիական կամ հակամրցակցային վարքագծին:

### Հոդված 53

#### **Ուժը կորցրած ճանաչելը**

2003/55/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2011 թվականի մարտի 3-ից՝ չհակասելով սույն Հրահանգի փոխատեղման և կիրարկման վերջնաժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին: Ուժը կորցրած հրահանգին հղումները պետք է դիտվեն որպես սույն Հրահանգին հղումներ և պետք է կարդացվեն հավելված II-ում սահմանված հարաբերակցության աղյուսակի համաձայն:

### Հոդված 54

#### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները ուժի մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները ոչ ուշ, քան 2011 թվականի մարտի 3-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Նրանք կիրառում են այդ միջոցները 2011 թվականի մարտի 3-ից՝ բացառությամբ 11-րդ հոդվածի, որը կիրառվում է 2013 թվականի մարտի 3-ից:

Երբ անդամ պետությունները սահմանում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են փոխանցում ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

### Հոդված 55

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

**Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի հուլիսի 13-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից

Նախագահ՝

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Է. Էռլանդսոն

[1] ՊՏ C 211, 19.08.2008թ., էջ 23:

[2] ՊՏ C 172, 05.07.2008թ., էջ 55:

[3] Եվրոպական պառլամենտի 2008 թվականի հուլիսի 9-ի եզրակացություն (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում), Խորհրդի 2009 թվականի հունվարի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 70 E, 24.03.2009թ., էջ 37) և Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 22-ի դիրքորոշում (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում): Խորհրդի 2009 թվականի հունիսի 25-ի որոշում:

[4] ՊՏ թիվ L 176, 25.11.2005թ., էջ 57:

[5] ՊՏ C 175 E, 10.07.2008թ., էջ 206.

[6] ՊՏ L 24, 29.01.2004թ., էջ 1:

[7] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

[8] ՊՏ L 25, 29.01.2009թ., էջ 18:

[9] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 36-րդ էջը:

[10] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[11] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[] Թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի վերնագիրը փոփոխվել է՝ հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին Պայմանագրի հոդվածների վերահամարակալումը՝ Ամստերդամի Պայմանագրի 12-րդ հոդվածի համաձայն. սկզբնականում հղումը կատարվել է Պայմանագրի 54(3)(է) հոդվածին:

[13] ՊՏ L 193, 18.07.1983թ., էջ 1:

[14] ՊՏ L 145, 30.04.2004թ., էջ 1:

[15] ՊՏ L 127, 29.04.2004թ., էջ 92:

[16] ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

[17] Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 55-րդ էջը:

[18] Համաձայնագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով մասնակիցների և այլոց շահերը պաշտպանելու նպատակով անդամ պետությունների կողմից ընկերություններից պահանջվող պաշտպանական միջոցառումների համակարգման մասին Խորհրդի 1968թ. մարտի 9-ի թիվ 68/151/EEC Առաջին հրահանգ, որը նպատակ ունի նման պաշտպանական միջոցառումները համարժեք դարձնել Համայնքի տարածքում (ՊՏ թիվ L 65, 14.03.1968թ., էջ 8):

[] Թիվ 78/660/ԵՏՀ կանոնակարգի վերնագիրը փոփոխվել է՝ հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին Պայմանագրի հոդվածների վերահամարակալումը՝ Ամստերդամի Պայմանագրի 12-րդ հոդվածի համաձայն. սկզբնականում հղումը կատարվել է Պայմանագրի 54(3)(է) հոդվածին:

[20] ՊՏ թիվ L 222, 14.8.1978թ., էջ 11:

[21] ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 1:

**ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

1. Չհակասելով սպառողների պաշտպանության մասին Համայնքի կանոններին, մասնավորապես, «Հեռահար պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 1997 թվականի մայիսի 20–ի 97/7/ԵՀ հրահանգին [1] և «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5–ի 93/13/ԵԽՀ հրահանգին, հողված 3–ով նախատեսված միջոցները պետք է ապահովեն, որ սպառողները՝

ա) սպառողներն իրավունք ունենան իրենց էլեկտրաէներգիայի ծառայության մատուցողի հետ պայմանագիր կնքել, որով կսահմանվի՝

- մատակարարի ինքնությունն ու հասցեն,
- մատուցվող ծառայությունները, առաջարկվող ծառայության որակի մակարդակները, ինչպես նաև նախնական միացման ամսաթիվը,
- առաջարկվող՝ պահպանության ծառայության տեսակները,
- այն եղանակները, որոնց միջոցով կարելի է ձեռք բերել թարմ տեղեկություններ բոլոր կիրառվող սակագների և պահպանման վճարների վերաբերյալ,
- պայմանագրի գործողության ժամկետը, պայմանագրի ու ծառայությունների երկարաձգման և դադարեցման պայմանները և արդյոք թույլատրվում է առանց տուգանքի դադարեցնել պայմանագիրը,
- ցանկացած փոխհատուցման և գումարների վերադարձման միջոցները, որոնք կիրառվում են, եթե պայմանագրով նախատեսված ծառայության որակի մակարդակները բավարարված չեն, ներառյալ ոչ ճշգրիտ և հետաձգված հաշիվները,
- (գ) կետի համաձայն՝ վեճերի լուծման համար ընթացակարգեր նախաձեռնելու մեթոդը,
- սպառողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ բողոքների քննությանը վերաբերող և այս կետով նշված ողջ տեղեկատվությունը, որը հստակորեն հաղորդվում է հաշվի ներկայացմամբ կամ էլեկտրականության գծով ձեռնարկության կայքի միջոցով:

Պայմանները պետք է լինեն արդար և նախապես հայտնի: Ամեն դեպքում այս տեղեկատվությունը պետք է տրամադրվի նախքան պայմանագրի կնքումը կամ հաստատումը: Այն դեպքում, երբ պայմանագրերը կնքվում են միջնորդների միջոցով, սույն կետով սահմանված խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես պետք է տրամադրվի նախքան պայմանագրի կնքումը.

բ) սպառողներին տրվում է համապատասխան ծանուցում պայմանագրային պայմանների մեջ փոփոխություն կատարելու ցանկացած մտադրության մասին և տեղեկացվում է ծանուցման տալու ժամանակ պայմանագիրը դադարեցնելու իրենց իրավունքի մասին: Ծառայություններ մատուցողները անմիջականորեն տեղեկացնում են իրենց բաժանորդներին գնի ցանկացած բարձրացման մասին, համապատասխան ժամանակահատվածում, ոչ ուշ քան գինը թափանցիկ և հասկանալի եղանակով բարձրացնելուց հետո մեկ սովորական վճարման ժամկետում: Անդամ պետություններն ապահովում են, որ հաճախորդները կարողանան ցանկացած պահին հրաժարվել պայմանագրերից, եթե նրանք չեն ընդունում նոր պայմանները, որոնց մասին նրանց տեղեկացրել են էլեկտրաէներգիայի ծառայության իրենց մատուցողը:

գ) սպառողները ստանան թափանցիկ տեղեկատվություն էլեկտրականության ծառայությունների հասանելիության և օգտագործման մասով կիրառվող գների և սակագների, ինչպես նաև ստանդարտ պահանջների և պայմանների մասին,

դ) սպառողներին առաջարկվում է վճարման եղանակների մեծ ընտրություն, որը անհարկի կերպով խտրականություն չի դնում հաճախորդների միջև: Կանխավճարային համակարգերը պետք է լինեն արդար և համարժեք կերպով արտահայտեն հավանական սպառումը: Պահանջների և պայմանների ցանկացած տարբերություն պետք է արտացոլի տարբեր վճարային համակարգերով մատակարարին վճարվող ծախսերը: Ընդհանուր պահանջներն ու պայմանները պետք է լինեն արդար և թափանցիկ: Դրանք պետք է տրվեն պարզ և հասկանալի լեզվով և չպետք է ներառեն հաճախորդների իրավունքների իրականացման ոչ պայմանագրային խոչընդոտներ: Հաճախորդները պետք է պաշտպանված լինեն վաճառքի անարդար կամ շփոթեցնող մեթոդներից.

ե) սպառողներից գումար չի գանձվում մատակարարին փոխելու համար,

զ) սպառողներն օգտվում են իրենց բողոքների քննման թափանցիկ, պարզ և ոչ թանկ ընթացակարգերից: Մասնավորապես բոլոր սպառողները իրավունք ունեն իրենց էլեկտրաէներգիայի ծառայության մատուցողի կողմից ստանալու բարձրակարգ

ծառայություն և օգտվելու բողոքների քննության ընթացակարգից: Նմանատիպ վեճերի արտադատական կարգավորման ընթացակարգերը պետք է ապահովեն վեճերի արդար և անհապաղ կարգավորում, նախընտրելի է երեք ամսվա ընթացքում՝ անհրաժեշտության դեպքում ունենալով ծախսերի և (կամ) վնասների հատուցման համակարգ: Հնարավորության դեպքում, դրանք պետք է համահունչ լինեն «սպառողական վեճերի արտադատական կարգավորման համար պատասխանատու անդամների նկատմամբ կիրառելի սկզբունքների մասին» Հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի 98/257/ԵՀ առաջարկությամբ [3] սահմանված սկզբունքներին:

է) միացված գազի համակարգին տեղեկացված են իրենց մատակարարվելիք իրավունքների մասին կիրառվող ազգային օրենսդրության համաձայն խելամիտ գներով կոնկրետ սահմանված որակի բնական գազով.

ը) սպառողներն իրենց տրամադրության տակ ունենան իրենց կողմից սպառման տվյալները, և կարողանան հստակ համաձայնությամբ և անվճար հիմունքներով ցանկացած գրանցված մատակարարող ձեռնարկության համար մատչելի դարձնել դրա չափման տվյալները: Տվյալների կառավարման համար պատասխանատու կողմը պարտավոր է այդ տվյալները տրամադրել ձեռնարկությանը: Անդամ պետությունները որոշում են տվյալների և ընթացակարգերի ձևաչափը, որպեսզի տվյալները մատչելի լինեն մատակարարների ու սպառողների համար: Այդ ծառայության համար սպառողից հավելյալ գումար չի գանձվում.

թ) նրանց պատշաճ կերպով տեղեկացվում է էլեկտրականության իրական սպառման և արժեքների մասին այն հաճախականությամբ, որը բավարար է նրանց հնարավորություն տալու համար կարգավորել իրենց սեփական էլեկտրականության սպառումը: Այդ տեղեկատվությունը տրվում է բավարար ժամանակահատվածի սահմաններում՝ հաշվի առնելով հաճախորդի չափիչ սարքի կարողությունը և տվյալ էլեկտրաէներգիայի արտադրանքը: Անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել նմանատիպ միջոցների ծախսարդյունավետությունը: Այդ ծառայության համար սպառողից հավելյալ գումար չի գանձվում.

ժ) էլեկտրաէներգիայի մատակարարին փոխելուց հետո, սպառողը ստանում է վերջնական փակման հաշիվ, ոչ ուշ քան մատակարարին փոխելուց հետո վեց շաբաթվա ընթացքում:

2. Անդամ պետություններն ապահովում են գրագետ չափման համակարգերի կիրառումը, որոնք նպաստել են սպառողների ակտիվ մասնակցությանը էլեկտրամատակարարման շուկայում: Այդ չափման համակարգերի կիրառումը կարող է ենթարկվել տնտեսական



գնահատման դրա երկարաժամկետ ծախսերը և օգուտները շուկայի ու առանձին սպառողների համար պարզելու նպատակով, կամ թե գրագետ չափման որ տեսակն է տնտեսապես խելամիտ և ծախսարդյունավետ, և ինչ ժամկետ է նպատակահարմար դրանց բաշխման համար:

Նմանատիպ գնահատումը կատարվում է մինչև 2012 թվականի սեպտեմբերի 3–ը:

Այդ գնահատման ենթակա անդամ պետությունները կամ ցանկացած իրավասու մարմին, որ նրանք նշանակում են, պատրաստում են ժամանակացույց չափման համակարգերի իրականացման համար:

Անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված ցանկացած մարմին, պետք է ապահովեն իրենց տարածքներում իրականացման ենթակա չափիչ համակարգերի փոխգործողությունը, և պատշաճ կերպով հաշվի առնեն համապատասխան ստանդարտների կիրառումը, լավագույն փորձը և էլեկտրաէներգիայի ներքին շուկան զարգացնելու կարևորությունը:

[1] ՊՏ L 144, 04.06.1997թ., էջ 19:

[2] ՊՏ L 95, 21.04.1993թ., էջ 29:

[3] ՊՏ L 115, 17.04.1998թ., էջ 31:

ԿՈՐԵԼԱՑԻՈՆ ԱՂՅՈՒՍԱԿ

2003/55/ԵՀ հրահանգ [Սույն հրահանգը]

1-ին հոդված | 1-ին հոդված |

2-րդ հոդված | 2-րդ հոդված |

3-րդ հոդված | 3-րդ հոդված |

4-րդ հոդված | 4-րդ հոդված |

5-րդ հոդված | 5-րդ հոդված |

— | 6-րդ հոդված |

— | 7-րդ հոդված |

6-րդ հոդված | 8-րդ հոդված |

9-րդ հոդված | 9-րդ հոդված |

7-րդ հոդված | 10-րդ հոդված |

— | 11-րդ հոդված |

7-րդ հոդված | 12-րդ հոդված |

8-րդ հոդված | 13-րդ հոդված |

— | 14-րդ հոդված |

— | 15-րդ հոդված |

10-րդ հոդված | 16-րդ հոդված |

— | 17-րդ հոդված |

— | 18-րդ հոդված |

— | 19-րդ հոդված |

— | 20-րդ հոդված |

— | 21-րդ հոդված |

— | 22-րդ հոդված |

— | 23-րդ հոդված |

11-րդ հոդված | 24-րդ հոդված |

12-րդ հոդված | 25-րդ հոդված |

13-րդ հոդված | 26-րդ հոդված |

14-րդ հոդված | 27-րդ հոդված |

15-րդ հոդված | 29-րդ հոդված |

16-րդ հոդված | 30-րդ հոդված |

17-րդ հոդված | 31-րդ հոդված |

18-րդ հոդված | 32-րդ հոդված |

19-րդ հոդված | 33-րդ հոդված |

20-րդ հոդված | 34-րդ հոդված |

21-րդ հոդված | 35-րդ հոդված |

22-րդ հոդված | 36-րդ հոդված |

23-րդ հոդված | 37-րդ հոդված |

24-րդ հոդված | 38-րդ հոդված |

25(1) հոդված (առաջին և երկրորդ նախադասություն) | 39-րդ հոդված |

— | 40-րդ հոդված |

25-րդ հոդված | 41-րդ հոդված |

— | 42-րդ հոդված |

— | 43-րդ հոդված |

— | 44-րդ հոդված |

— | 45-րդ հոդված |

26-րդ հոդված | 46-րդ հոդված |

— | 47-րդ հոդված |

27-րդ հոդված | 48-րդ հոդված |

28-րդ հոդված | 49-րդ հոդված |

29-րդ հոդված | 50-րդ հոդված |

30-րդ հոդված | 51-րդ հոդված |

31-րդ հոդված | 52-րդ հոդված |

32-րդ հոդված | 53-րդ հոդված |

33-րդ հոդված | 54-րդ հոդված |

34-րդ հոդված | 55-րդ հոդված |

35-րդ հոդված | 56-րդ հոդված |

Հավելված Ա | Հավելված Ի |